

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

25.848

Ա. ԶԱՅԱՆՈՎ

ԿՈՌՊԵՐԱՅԻՆ  
ՀԱՄԱՐՈՒՏ  
ԴԱՍԵՆԹԱՑՔ



Զ. Ա. Կ. Կ. Վ. Ա. Ա.

1926.

ԵՂԱԿՈՆ

16 JUL 2013

334

9-20

ար

Ա. ՀԱՅԱՆՈՎ

Անձնագիր  
ՀՈՎՈՒՄ ԱՌԱՋԱԿԱ  
ՀԱՅԱՆՈՎ ԱՐՄԵՆԻ

ԿՈՂԴԵՐԱՑԻԱԻ  
ՀԱՄԱՐՈՏ ԴԱՍԸՆԹԱՑՔ



«Զ. Ա. Կ. Կ. Ե. Գ. Ա.»  
Տպական 1926.

16003 - 57

Ի Ն Չ Ե Կ Ո Ո Պ Ե Ր Ա Ց Ի Ա Ն.

Մեր որերում զյուղի ապագայի մասին խոսելիս՝ ամենից շատ հույս են դնում կոռպերացիայի վրա: «Կոռպերացիա» բառն իսկ հիմա ամենագործածական բառերից մեկն և դարձել մեզանում... Ամեն մի լրագրում, գրքերի եջերում այդ բառը կը տեսնեք տասնյակ անգամներ, կը լսեք ժողովներում, կոնֆերանսներում ու համագումարներում: իսկ Վ. Անդրեյի յուր մահիցն առաջ գրած յերկու հոդվածներիցն հետո, վոր նվիրված են կոռպերացիային, վերջինը դառնում ե մեր տնտեսական քաղաքականության հիմքերից մեկը:

Վ. Անդրեյ բացատրում ե այն միանգամայն բացառիկ նշանակությունը, վոր ունի կոռպերացիան Խորհրդային Ռուսաստանի քաղաքական և տնտեսական պայմաններում և շեշտելով շեշտում ե. «հիմա մենք պետք ե զիտակցինք ու իրագործենք, վոր այն հանրակարգը, վոր ներկայում մենք սովորականից ավելի պիտի պաշտպանենք, կոռպերատիվ հանրակարգն ե»:

Սակայն՝ հակառակ այս ամենին, հակառակ այն հանգամանքին, վոր մեր ամեն մի գավառակում վոչ թե մեկ, այլ մի քանի կոռպերատիվ ե գործում, կոռպերատիվ աշխատանքին գործնականապես ծանոթ մարդկանցից շատ շատերը պարզ չեն ըմբռնում նրա եռթյունը և կարգին չեն իմանում նրա հիմնական գաղափարներն ու կազմակերպչական սկզբունքները:

Այս հանգամանքն ստիպում ե մեզ առանձին ուշադրությամբ կանգ առնել կոռպերացիայի ինչ լինելը պարզաբանելու վրա, ի նկատի ունենալով նրա գործադրությունը Խորհրդային Հանրապետությունների գյուղատնտեսության վերաբերմաքը. մենք հանգամանորեն կը քննենք, թե ինչ գեր կարող ե կատարել կոռպերացիան մեր գյուղում և թե ինչ կարող ենք սպասել նրանից մեր հողագործության ապագայի համար:



Գլավլիս № 1715—Տիրաժ № 3.000—Պատվեր № 169.

Թիֆլիս, ապարան «Զարիա Վուսոնկ»-ի Ս. Յուլուկիձեցի փ. № 4:

Մենք գիտենք, զոր մեր ժամանակի տնտեսական կյանքի ամենաբնորոշ հատկանիշը, այն, զորով նա տարբերվում է հին պապական ժամանակների կյանքից, արտադրության կատարելագործված մեքենական տեխնիկան և արդյունաբերական ու առերական ձեռնարկությունների գիտական հիմունքների վրա կառուցված նոր կազմակերպությունն եւ:

Հազարավոր ձիու ույժ ունեցող ահագին շոգեշարժներ ու յելեքտրաշարժներ, քիմիական գործարանների հսկայական ուղղութներ, ապշեցուցիչ արագությամբ մետաղի շինվածքներ պատրաստող բազմնատոնն\*) շոգեշարժ մուլճեր, ինքնաշարժ կշեռքներ, զոր տեղագործական ճշտությամբ հարյուրավոր քաշ են կշռում մի ժամկա ընթացքում և հազարավոր այլ գործիքներ, զոր մարդկային հանճարի հզորությունն են վկայում,— ահա թե ինչն է մեր ժամանակի հատկանիշը:

Իսկ ձեռնարկությունների ճարտար կազմակերպությունը լրացնում է այս տեխնիքական սպառազինությունը: Ժամանակակից գործարանը յուր պատերի մեջ ժողովում է հարյուրավոր, իսկ յերբեմն և հազարավոր բանվորներ և այնպես և ներդաշնակում ու միացնում նրանց ջանքերը, զոր հինգ բանվորի հնարավորություն և տալիս այնպիսի գործ անելու, զոր տասնըհինգ շոգի կ'ուզեր, յեթե կազմակերպությունը վատ լիներ: Զանազան համքարություններ, գործարաններ, ձեռնարկություններ միանուագունում են արտադրող խմբեր, տրեստներ ու սինդիկատներ: այդպիսով պակասեցնում են վերադիր ծախքերն ու ներդաշնակում են արհեստները, զորի հետևանքով նվազեցնում են արտադրածի ինքնարժեքը վոչ պակաս, քան այդ անում են ժամանակակից արտադրական տեխնիկայի նվաճումները:

Արեմտյան Յելքոպայի և Հյուսիսային Ամերիկայի արդյունաբերական կապիտալիստական յերկրների ամբողջ ույժն ու նրանց անտեսական ամբողջ իշխանությունը մնացյալ աշխարհի վրա, հենց մեր ժամանակի այդ յերկու մեծ սկզբունքները հմտությամբ ոգտագործելու արդյունքն են, այն եւ կատարելագործված տեխնիկան ու ձեռնարկությունների կանոնավոր կազմակերպությունը:

Սակայն, մինչև որո այդ յերկու սկզբունքները գործադր-

\*) Մի տոննը 60 փութ է ծ. թ.

վել են առավելապես քաղաքային արդյունագործության, հանքագործության և փոխագրության գործի մեջ: Գյուղատնտեսությունը մի տեսակ հեռու և մնացել մարդկային կուլտուրայի այդ նվաճումներից: Նրանով զրեթե ամենուրեք պարապել են ըստ հույսին հազարավոր ու միլիոնավոր մանր տնտեսություններ, բաժան-բաժան, միմիանց հետ վոչ մի կապ չունեցող, վորոնք մեծ մասամբ շատ անկատար տեխնիկա յեն ունեցել:

Գյուղատնտեսության այս մի փոքր «հետամնացությունը» բացատրվում է, ի՞ հարկե, վոչ թե պատահական պատճառներով, այլ նրանով, զոր աշխատանքը հողագործության մեջ, վորտեղ գլխավոր մեքենաներն են հողը, բույսն ու կենդանիները, շատ բանով են տարբերվում զուտ մեքենական արդյունագործական աշխատանքից: Այս պատճառով տնտեսության խոշորության և կատարելագործված տեխնիկայի տված առավելությունները հողագործության մեջ այնպես մեծ չեն, ինչպես արդունագործության մեջ նրանց տված առավելությունները: Գյուղատնտեսության մեջ մանր, տեխնիկապես տկար տնտեսությունները կարող են ուժեղ ախոյան հանգիստանալ իրենց խոշոր մրցուկիցներին, զոր միանգամայն անկարելի բան և արդունաբերության մեջ: Ամերիկական և ռուսական հողագործության վերջին գիտական հետազոտությունները (Վ. Լենինի, Պ. Լյաշենկոյի և այլ տնտեսագիտների) մինչեւ անգամ ցույց են տալիս մեզ, զոր գյուղատնտեսության մեջ կապիտալիզմը զարգանում և գլխավորապես այն հանգամանքի շնորհիվ, զոր այլևայլ առևտրական տներ ու ձեռնարկություններ խիստ բարձր տոկոսներով վարկ տալով շահագործում են գյուղատնտեսական մթերքների մանր արտադրուներին: Տնտեսապես ըստ երկույթին ինքնուրույն ու անկախ գյուղացին իրոք միանգամայն ֆինանսական և առևտրական կապիտալի գերին ե, զորի պարտականն ե մնում նա և առանց զորի վոչ կարող ե յուր աշխատանքի պատուղները վաճառահանել և վոչ ձեռք բերել արտադրության հարկավոր միջոցները:

Այս բոլորը վերին աստիճանի գժվար ու բարդ գործ և գարձնում հաղագործության կազմակերպությունը նոր հիմունքներով:

Գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպել ցանկացողը, զոր զործ ունի գյուղացիների միլիոնավոր ամենամասը տնտեսությունների հետ, անկազմակերպ, բաժան-բաժան, մեծ

զետի սահանքի նման ինքնահոս կերպով գարզացող տնտեսությունների, — կարող ե յերեմին հուսահատվել և հարց տալ իրեն, թե կարելի՞ և արդյոք առհասարակ զյուղատնտեսությունը կաղմակերպել արդունաբերության նման՝ ժամանակակից տեխնիկայի և գիտական կազմակերպության նոր հիմունքներով։ Այդ բանն անելու համար վորեւ յեղանակու հնարքներ կմն արդյոք։

Մենք գիտենք, վոր մեր տրամտդրության տակ զյուղատնտեսական տեխնիկայի բազմաթիվ կատարելագործված ձևեր կամ — աղնվացեղ անասուններ, կատարելագործված մեքենաներ, հողի պարարտացման ու մշակության, անասուններ կերակրելու և գյուղատնտեսական մթերքների սկզբնական վերամշակության ձևեր։

Ամբողջ խնդիրն այն է, թե ինչպես կարելի և այդ ձևերն, արմատացնել գյուղի բնակչության մեջ, կազմակերպել գյուղացիներին այնպես, վոր նրանց համար մատչելի լինեն գիտության ու գործնական փորձառության այս նվաճումները, վորոնք հաճախ հնարքոր հն միմրայն գործի շատ խոշոր չափերով կազմակերպված լինելու դեպքում։

Այս խնդիրը զյուղատնտեսության կարևորագոյն խնդիրն և Յեկ սրա պատասխանը մեզ տալիս և կոռպերատիվ սկզբունքների կիրառությունը գյուղի կազմակերպության գործում։

Գյուղատնտեսական կոռպերացիայի հիմնական գաղափարը չափազանց պարզ է։ Յեթե մենք ուշադրությամբ գիտենք գյուղացու տնտեսության կազմությունը, վոր բավականին բարդ և յուր կառուցվածքով, հեշտությամբ կարող ենք համոզվել, վոր նրա մի շարք ճյուղերի համար խոշոր ձեռք միանգամբից անմիջական մեծ ոգուտ կը տա։

Այս ել կա, վոր, զրեթե, միշտ շատ հեշտ և լինում վորոյ աշխատանքներ առանձնացնել ու հարեանների հետ միասին միացնելով՝ մի ընդհանուր մեծ գործ դարձնել լառանց խանգարելու տնտեսության մնացյալ մասերն և առանց բարքայելու տշխատավորական ընտեսնեկան տնտեսությունը։

Մի քանի որինակով կարելի և պարզաբանել ասածիս եռությունը։ Որինակի համար, ամենքին հայտնի է, թե ինչ առավելություն ունին յուղ պատրաստելու գործում սերգատն ու մեքենական խնոցիները՝ տնային յեղանակի համեմատությամբ։ Բայց

զյուղացու մանր տնտեսությունը, վոր ընդամենը մեկ կամ յերկու կով ունի չի կարող այդ գործիքներն ունենալ, վորովհետեւ սերգատի (սեպարատորի) գինը հանելու համար քսան կամ յերեսուն կովի կամ պետք ե ունենա տնտեսությունը։

Պարզ է, վոր վոչ մի գյուղացի այդպիսի հոս չունի և հետևապես չի կարող սերգատ ձեռք բերել։ Սակայն նույնքան պարզ է, վոր վոչ մի արգելք չկա, վոր քսան կամ քառասուն տնտեսություն մի միություն կազմեն, մի փոքրիկ յուղագործարան շինեն և փոխանակ տնային յեղանակով յուղ պատրաստելու իրենց կաթը տանին իրենց կոռպերատիվ գործարանը և նրանց հանձննեն վոչ միայն յուղ պատրաստելու, այլ և վաճառելը։

Այս պարզ գաղափարը վաղուց են ըմբռնել զյուղացիական մասամբները, և ԽՍՀՄ զանազան շրջաններում ու Արևմտյան Յեղորդացի յերկրներում, շատ տասնամյակներ առաջ սկսել են յուղագործական ընկերություններ հիմնել։ Ներկայում չորս հազարից ավելի այդպիսի ընկերություններ կան Արևմտյան Սիբիրում, Վյատկայի, Վոլոգդայի և Հյուսիսային այլ նահանգներում ու Կուրանի Արշանում, գրանք տեղական միություններ են կազմում, իսկ այդ միությունները 1924 թ. ամառը կազմեցին Համառուսական յուղմիություն և նրան հանձնեցին իրենց պատրաստած յուղի վաճառահանությունը ԽՍՀՄ սերքին շուկաներում, նմանապես և Անդրկայում ու արտասահմանի այլ շուկաներում։ Այս միությունը, վոր միացնում է 2,000,000 կովի կաթից յուղ պատրաստելու գործը, աշխարհի զբեթե ամենախոշոր Փիրման և յուղի շուկայում, և ընական է, վոր կարող ե ոգտագործել այն բոլոր տեխնիքական կատարելագործված յեղանակներն ու կազմակերպչական բարելավումները, վոր կարելի է ձեռք բերել մեր որերում։

Յուղի կոռպերատիվ պատրաստությունից ու վաճառականությունից, զրեթե միշտ առաջ և գալիս կոռպերատիվ աշխատանք՝ անասուններն աղնվացնելու և նրանց պահելու պայմանները բարելավելու համար, կազմվումն ընկերություններ՝ միաւել աղնվացեղ յուղեր ունենալու և անասունները սատակելուց տպահովագրելու համար։ Աւրիշ խոսքով յուղագործական կոռպերացիայի մի ժամանակ գործելուց հետո՝ զյուղացիական յուղա-

գործության բոլոր գլխավոր հիմքերը կառուցված կը լինեն ամենախոշոր արտագրության և ամենակառարյալ կազմակերպության սկզբունքներով:

Նոյն այս կոռպերատիվ սկզբունքները գյուղացին կարող են գործադրել նաև յուր տնտեսության ուրիշ ճյուղերը՝ կազմակերպելով համար:

Այսպես, որինակ, կարտոֆիլի մշակության շրջաններում գյուղացիները, չկարողանալով իրենց կարտոֆիլը հումքում վաճառահանել, կոռպերատիվ հիմունքներով գործարաններ են շինում, փորտեղ կարտոֆիլից ոսլա յեն պատրաստում և ապա մաթի գործարան են հիմնում ու զրանով հնարավորություն են ստանում ոգտագործելու այս արդյունավետ մշակույթի և նրա վերամշակության գործարանային տեխնիկայի բոլոր առավելությունները: Միաժամանակ նրանք սկսում են ցանել բարելավության տեսակները, կարտոֆիլի կոռպերատիվների միջոցով արտադրության բարվորդված յեղանակներ են գործ զնում և տեխնիքական ամենաբարձր աստիճանին են հասցնում կարտոֆիլի գործի կազմակերպությունը, առանց քայլքայելու նրա հիմքը կազմող գյուղացիական տնտեսությունները:

Այսպես միացած կարտոֆիլի կոռպերացիան ստեղծել է կարտոֆիլի Համառուսական միությունը, վոր միացնում են շատ հազար գյուղացիական տնտեսություններ:

Ամելի զորեղ կազմակերպություն են ստեղծել վուշ (կտավահատ) ցանող գյուղացիները: Նրանք իրենց ստեղծած «Վուշկենտրոնի» շուրջը համախմբել են տասնընինոր նահանգի գյուղացիական կոռպերատիվներ և համաշխարհային շուկայում ճանաչված են արդեն վարպետ մի ֆիրմա, վոր ըստ վորակի և տեսակավորության անստուգուտ վուշ են վաճառում:

Մանավանդ կարևոր հանգամանք են այն, վոր մեր խորհրդային յերկրի ժողովրդատնտեսական կյանքի ծանր պայմաններին, բերքի պակասության, միջոցների ու վարկի բացակայության հակառակ՝ վոր կողմը վոր նայենք, ԽՍՀՄ ամենախոր անկյուններում անդամ, նույն կազմակերպչական աշխատանքն է կատարվում գյուղատնտեսական շատ ուրիշ բերքերի արտագրության ասպարիզում—հացի, շաքարի ճակնդեղի (շաքարաբաղկի), թոչնապանության, բամբակի, այգեգործության

ու պտղաբուծության, այլև գյուղատնտեսական մեքենաների, պարարտացումների, սերմացուի և առնասարակ գյուղացու նիստուկացի և գործածության առարկաների համբարման գործում:

Ճիշտ ե, գրիթե ամենուրեք միայն առաջին, հաճախ գեղիներու ու անվասահ քայլերն են արվում, բայց այդ քայլերը տեսնելով մարդ համոզվում ե, վոր կոռպերատիվի ճանապարհը մեր գյուղացիության համար միակ և իսկապես ուղիղ ճանապարհն ե և վոր հիբավի գյուղատնտեսական կոռպերացիան հնարավորություն և տալիս կազմակերպելու ցրված գյուղացիական մասները, միացնելու նրանց անմիջականորեն խորհրդային պետության ժողովրդատնտեսական և կուտուրական կյանքի կենտրոնների հետ և ոգտագործել տալու նրանց խոշոր տնտեսության և կատարելավործված տեխնիկայի առավելությունները: Առանձնապես կարենու և այն հանգամանքը, վոր այս խոշոր և կազմակերպության կողմից կատարյալ ձեռնարկությունները կառուցվում են հասարակական տնտեսության ձևերով, այսինքն՝ սոցիալական տեսակետից ել կազմակերպության գերազույն ձևն հանդիսանում:

Տեսնենք սակայն, թե ինչ է հարկավոր, վորպես զի գյուղացիական տնտեսությունները կոռպերատիվ կազմեն, վորպես զի նրանց ստեղծած միասնական ձեռնարկություններն իրավես կոռպերատիվ ձեռնարկություններ լինին. տեսնենք, թե ի՞նչն է տարբերում կոռպերատիվը մասնավոր առեւրական և արդյունաբերական ձեռնարկություններից, վորոնց հետ գժիրազդարար շփոթում են կոռպերատիվը:

Արդեն ասացինք, վոր կոռպերատիվը նախ և առաջ տնտեսությունների միություն և և վոր այլպիսի միության մեջ մտնող տնտեսությունները զրանով չեն վոչնչանում, այլ առաջլա պիս մանր աշխատավորական տնտեսություն են մնում<sup>1)</sup>:

Կոռպերատիվներն են նույնպես, վոր արտադրության մի մասը միայն, այն մասը, վորան խոշոր տնտեսությունը գերա-

1) Գյուղատնտեսական կոռպերատիվ են համարվում սովորաբար լիակատար գյուղատնտեսական կոռպերատիվ կոչվածները, այսինքն՝ գյուղատնտեսագիշական կոմմունաները, վորոնցում անհատական տնտեսությունները միանգամայն չափվում են հասարակական տնտեսության մեջ: Դրանց կարևորության պատճենով տունձին գիրք ներ նվիրում զրանց և բոլորին չենք շոշափում այս տեսության մեջ:

դասելի ե, միացնում, կազմակերպված միություն են գարձնում: Գյուղատնտեսական կոռուպտավախվը լրացնում ե գյուղացու ինքնուրույն տնտեսությունը, սպասարկում ե նրան և առանց այդպիսի տնտեսության հա իմաստ չունի:

Կոռուպտերացիան, հետզհետե զարգանալով՝ ավելի ու ավելի հասարակական կոռուպտատիվ տնտեսության հունի մեջ կը քաշե գյուղացու տնտեսության այլայլ ճյուղերը: Հասարակական տնտեսության այս տարրերն են, վոր գյուղացու տնտեսության մեջ հողագործության ապագա սոցիալիստական կազմակերպություն հիմքն են դնում:

Կոռուպտերացիայի եռությունն ըստ կարելվույն պատկերացներու համար՝ համեմատենք յերկու յուղագործարան—մեկը՝ կոռուպտատիվ, անասնապահ գյուղացիների իրենց կարիքների համար ստեղծած, մյուսը՝ մասնավոր, վոր պահում ե մի գրամտերածենաբկու: Հարց ատանք, թե ում շահերն են դեկավարում ու կառավարում այդ յերկու գործարաններից թե մեկի և թե մյուսի գործունեությունը:

Մի փոքր գիտողությունը բավական ե՝ համոզվելու համար, վոր մասնավոր գործարանը յուր շրջանառության մեջ գրած գրամագիրի շահերին պիտի հետամուտ լինի: Նրա գլխավոր նպատակը պիտի լինի գործն այնպես կազմակերպել, վոր այդ գրամագիրի փորձան կարելի ե շատ շահ, զուտ ոգուտ բերե:

Այլ բան ենք տեսնում կոռուպտատիվ գործարանի գործության մեջ: Այդ գործարանը սարքելու ու նրա շրջանառության համար՝ գյուղացիները նույնական դրամագլուխ են դրել, ինչպես և մասնավոր ձեռնարկն, բայց այդ դրամագիրի շահերը, այդտեղ յերկրորդական տեղ ե բոնում: Ամբողջ ձեռնարկության առաջին այն գյուղացիների շահն ե, վորոնք կաթ ծարանն ստեղծել են իրենց տնտեսությունների կարիքների համար, կոռուպտատիվ գործարանը կարող ե վոչ մի կոռպել վաստակ:

Վերցնենք այսուհետև սպառողական կոռակերացիան, վոր կազմակերպում են գյուղացիները՝ միասին իրենց առանձին նվատուկացի համար անհրաժեշտ մթերքներ գնելու համար: Այստեղ ևս մենք կտեսնենք նույն ապրեկրությունները:

Յեթե ձեռնարկող խանութպանը յուր գրամագիրի շահերն ե առաջին տեղը գնում, յեթե նա ամեն միջոցներով՝ ի ի միաս յուր գնորդների և նրանց հաշվին, ձգուում ե վրդքան, կարելի է շատ ոգուտ քաղել յուր ասետրից, ապա սպառողական կոռուպտատիվ խանութում ընդհակառակն՝ ապրանք գնելու համար գրված դրամագիրից զուտ վաստակ ստանալու շահերը յերկրորդական տեղ են բոնում: Դրամագլուխն, ի հարկե, սպառողական ընկերության համար ել անհրաժեշտ ե, առանց գրամագիրի տնտեսական շրջանառություն չե կարելի անել: Բայց նրա շահերը չեն, վոր կառավարում են գործը, այլ սպառողների շահերը, այն գյուղացիական տնտեսությունների, վորոնք միացյալ ջանքերով սպառողական խանութ են ստեղծում՝ իրենց կարիքները հոգալու համար:

Սովորական խանութպանի համար ուղղակի ձեռնուու և թանգ գնով վատ ապրանք ծախելը և գրանով ավելի զուտ վաստակ ունենալը:

Իսկ կոռուպտատիվ խանութում վաստակը կարող է շատ չնչին լինել, բայց մթերքները պետք ե լավը լինին և արժան:

Կոռուպտատիվի վոչ մի անգամ չի կամենա յուր խանութի ոգուտն ավելացնել՝ յուր հացի հետ ավագ և յուր յերեխանների գործածած կաթի հետ ջուր խառնելով:

Կոռուպտացիայի մեջ ամենակարենը ենց այն և, վոր ուշագրության են առնվում վոչ թե գրամագիրի շահերը, այլ այն տնտեսությունների, վորոնք միություն են կազմում և իրենց համար կոռուպտատիվ ձեռնարկություն ստեղծում: Կոռուպտացիան միշտ գրամագլուխ ու շատ մեծ գրամագլուխ կը բանեցնե, վորովհետեւ տնտեսական կյանքը չի կարող առանց գրամագիրի կառավարվել բայց այսուել գրամագլուխ շահերը չեն, վոր առաջին տեղն են բոնում, այլ այն տնտեսությունների շահերը, վորոնց կարիքները նա հոգում ե: Կոռուպտացիայի մեջ գրամագլուխ ծառա յե և վոչ թե տեր: Ուստի և կոռուպտատիվի գործերի կառավարությունն այնպես և կազմակերպիում, վոր այնտեղ ղեկավարողը վոչ թե

կապիտալի ներկայացուցիչներն են, վոչ թէ կոռպերատիվ առևտի կամ արդյունաբերության համար շատ փող տվողները, այլ աշխատավոր տնտեսությունները, վորոնց կարիքները հոգալու համար առաջ ե յեկել և գոյություն ունի կոռպերատիվը: Այսպես ուրեմն մեզ համար պարզ ե, զոր գյուղական կոռպերացիայի դործունեությանն ուղղություն են տալիս գյուղացիների շահերը, և այդ շահերովն ե վորոշվում նրա ամբողջ գործունեությանը:

Կապիտալիստական հասարակության պայմաններում, ինչպես այդ բացարձել ե վ. լինինը յուր նամակներումը կոռպերացիայի մասին, գյուղացիների կոռպերատիվ շարժումն անզօրեր այդ խնդիրները լուծելու համար, և իշխանությունն աշխատավորների ձեռքն անցնելուց հետո միայն, կոռպերացիան՝ պետական իշխանության ոժանդակությամբ, միանդամայն այլ նշանակություն և ստանում և դառնում ե գյուղի նոր հասարակակարգի հիմքը:

Այս իսկ պատճառով կոռպերացիայի գործունեությունը չի կարող սահմանափակվել միայն առևտրական կամ արդյունաբերական գործով: Գյուղացիության շահերն ավելի լայն են: Գյուղիները վոչ միայն արժան գնելով ու թանգ ծախելով են հետաքրքրվում, այլ և նովեր կյանքի, մտքի ու նրաի կյանքի, շատ պահանջներում:

Ուստի կոռպերացիան վոչ միայն պիտի ոգնե գյուղացուն, վոր ավելի ոգուտ ստանա յուր անտեսությունից, այլ պիտի ոգնե նրան նաև լուսավորության գործում, նրա նովեր կյանքը կարգավորելու գործում: Այս կողմից կոռպերացիան շատ բան կարող է տալ թերևս մինչև անզամ շատ ավելի, քան գյուղական կյանքի այլ ճյուղերում:

Մենք գիտենք, վոր յերկրագործական լալ մեքենա ձեռք բերելու հնարավորությունից առաջ անհրաժեշտ է իմանալ վոր այդպիսի մեքենաներ կան, և իմանալ նրանց գործ ածելու յեղանակը: Այս գիտելիքները գյուղացիներին տալու համար՝ կոռպերացիան, բացի առևտրական գործունեությունից, գյուղերու կուլտուր-կրթական աշխատանք է կատարում:

Սրանք են կոռպերատիվ արդյունաբերության ու առևտրի տարրերությունները մասնավոր ձեռնարկողից ու առետրականից:

Այս տարրերությունները մատնացույց անելուց հետո՝ մենք պետք ե կանգ առնենք նաև այն հարցի վրա, թէ ինչով են տարրերի վում մեր կոռպերատիվ ձեռնարկությունները պետական ձեռնարկություններից, և պարզենք, թէ ինչու վերջին ժամանակը պետական մարմինները պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների նշանավոր մասը հաճախ տալիս են ու շարունակում են տալ կոռպերացիային:

Գյուղատնտեսական կոռպերացիային ե հանձնված գյուղի համար սերմացու և գյուղատնտեսական մեքենաներ հայթայթելու գործը, վարձակայանները, աղնվացեղ ցուլերը, տեղական կարառֆելի գործարանները, նմանապես վերջին տարին՝ «Փետկաթի» բոլոր կաթնեղենի ձեռնարկությունները: Փետք ե կարծել, վոր կոմմունիստական կուսակցության XIII համագումարից հետո, վոր վորոշեց պետական քաղաքականությունը գյուղատնտեսական կոռպերացիայի վերաբերմամբ, տնտեսական աշխատանքի այս փախանցումը պետությունից կոռպերացիային՝ տեղի կ'ունենա ավելի մեծ ծավալով:

Ինչու ե այսպիսու: Ինչու կոռպերատիվ ապահարատը գյուղի սպառարկության գործում ավելի կատարյալ ե համարվում, քան պետական ձեռնարկությունները:

Աշխատավորների հանրապետության մեջ պետությունն ել կոռպերացիան ել նույն աշխատավոր մասնակին մարմիններն են և նորում են աշխատավոր բնակչության նույն կարիքները:

Ուստի այն խնդիրը, թէ ում պետք ե հանձնվի այս կամ այն տնտեսական աշխատանքը, ամեն անգամ վճռվում է նայելով, թէ այդ ապահարատներից վնրն է ավելի հարմար տեխնիկապես:

Կոռպերացիան, վորի ամենափոքր մարմիններն իսկ կառավարում են աշխատավորների ընտրած անձինք, նրանց ընտրող կոռպերատիվի անդամների ամենորյա արթուն վերահսկողության տակ, վոր կաշկանդված չե կենտրոնի վարչական կարգադրություններով, ձկուն և տնտեսական գործունեության մեջ և կարող է արագ ու ազատ տեղական արդունավոր նախաձեռնություն ունենալ, կոռպերացիան՝ ամենալավ ապահարատն է այնտեղ, ուր կազմակերպված տեղական ինքնագործունեություն է պահանջվում, ուր ամեն մի առանձին դեպքում պետք է ձկունությամբ հարմարվել տեղական պայմաններին և հաշվի առնել յուրաքան-

շյուր բնակավայրի և աշխատանքի յուրաքանչյուր ամսվա առանձնահատկությունները:

Այս բոլորն, ինչ վոր պահանջվում է աշխատանքի համար— և մասսաների անհրաժեշտ ինքնգործունեությունը, և կազմակերպության ու աշխատանքի ճկունությունը, և արագ հարմարվելու ընդունակությունն ու բացառիկ ուշադիր վերաբերմունքը աշխատավորության կարիքներին— հենց այս բոլորն անհրաժեշտ է գյուղում գործելու համար: Անթե ինչու մեր խորհրդային պետության մեջ այն բոլոր գեղքերում, յերբ կոռպերացիան բավականաչափ ամրանում ու ույժ և ստանում, նրան են հանձնվում մեկը մյուսի յետեկից տնտեսական գործունեության այլ և այլ ճյուղերը գյուղում, վոր առաջ կատարում են կենտրոնից նշանակած մասնագետներից ու ծառայողներից կազմված պետական ապահովատները:

Մեր ընթերցողները կարող են յերկյուղ հայտնել վոր տընտեսական աշխատանքը կոռպերացիային հանձնվելով՝ գույս կրգայ խորհրդային պետության ղեկավար մարմինների աղղեցությունից և գրանովիլ կը խորտակվեն այն բոլոր ծրագրային նկատառությունները, վոր միանգամայն անհրաժեշտ են մեր ժողովրդական տնտեսության արդի ծանր պայմաններում:

Սակայն այդ յերկյուղը բրլորովին անհիմն և, վորովհետև գյուղատնտեսական կոռպերացիան ՚ի գեմս յուր ֆինանսական ու առևտրական կենտրոնների, նմանապես և ՚ի զիմաց տեղական միությունների, այնքան և խորացած ԽՍՀՄ պետական մարմինների ընդհանուր սիստեմի մեջ, այնքան միացել և ու ներդաշնակությամբ և գործում նրանց հետ, վոր խոսք չի կարող լինել նրանց տարաշխատության մասին: Ընդհակառակը, հենց շնորհիվ գյուղի բոլոր տնտեսական աշխատանքը կոռպերացիային հանձնելուն՝ գյուղն ամբողջապես ծրագրային տնտեսության հունի մեջ և գրանում և կարող ե գրավել միայն կոռպերացիայի շնորհիվ:

Կոռպերացիան վերակաղմում և անջատ անհատական գյուղացիական տնտեսությունները, հասարակական տնտեսության գերագույն ձևերի և վերածում, և հենց այդ և նոր գյուղի շինարարության հիմնական անելիքը:

Այսչափը վոր ասացինք, միանգամայն բավական եւ հասկանալու համար, թե ինչ նշանակություն կարող ե ունենալ գյուղի

համար կոռպերացիայի գարգացումը և թե ինչ մեծ ապագա ունի կոռպերացիան:

Այս բոլորը գյուղի համար աշխատողներին ստիպում է առանձին ուշադրությամբ ուսումնասիրել գյուղական կյանքի այս նոր յերեսույթը:

Հաջորդ գլուխներում մենք կանգ կ'առնենք կոռպերատիվ գաղափարների պատմության վրա և ապա մանրամասն կ'ուսումնասիրենք, թե ինչպէսի կազմակերպչական ձևերի մեջ ե մարմացնել կոռպերացիայի գաղափարը կոռպերատիվ աշխատանքի յուրաքանչյուր ճյուղի մեջ:

## ԿՈՐՊԵՐԱՏԻՎ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.

Կոռպերացիայի պատմությունը կարելի և սկսել անցյալ դարու կեսից:

XIX դարու սկզբումն Անգլիայում մի մարդ հանդես յեկավ՝ Ռոբերտ Ուուեն, վոր արդյունաբերության գործիչ եր և շարունակ աշխատավորների կյանքը դիտելով՝ հաճախ խորհում եր, թէ ինչ ձեռվ կարելի եր նրանց ծանր վիճակը թեթևացնել:

Ռոբերտ Ուուենը կարծում եր, վոր մարդկային աշխարհն այնպես չե կառուցված, ինչպես պետքն ե, և մարդկանց կյանքի շատ կողմերը բանական հիմք չունեն: Նա ասում եր, թէ մարդիկ միահամուռ, ընդհանուր ջանքերով պետք և միմյանց ոգնեն ապրել և հատուկ ընկերություններ հիմնելով՝ միասին իրենց տնտեսական կյանքը պետք և կարգավորեն:

Երա վեմ ուսմունքը՝ կյանքի նոր սկզբունքների մասին, շատ շուտով բազմաթիվ կողմանակիցներ գտավ Անգլիայում, բայց քարոզած հիմունքը կյանքում՝ իրագործելու փորձը հաջողությամբ չպակից: Ռոբերտ Ուուենը յուր ուսմունքը մարդկանց հոգեոր միության վրա հիմնելով՝ քիչ ուշադրություն եր դարձնում յուր գաղափարների իրականացման ձեռքի մշակության վրա և քիչ եր հարմարեցնում յուր ժամանակի տնտեսական կյանքի ձեռքի գարգացմանը:

Սակայն Ռոբերտ Ուուենի գաղափարները, հակառակ գործնականի մեջ ունեցած սակավ հաջողությանը, լայն ծավալ ստացան Անգլիայում: Մի քանի տասնամյակից հետո, նույն դարու քառասնական թվականներին, Ռոչդել փոքրիկ անգլիական արդյունաբերական քաղաքում մի խումբ փոստայնակ (Չուլիսկ) բանվորներ, վորոնք իրենց Ուուենի հետեղները եին համարում, հիմնեցին առաջին կոռպերատիվը: Այդ առաջինն որինսակ դարձավ մյուսների համար և մեծ ուսուցչի ավանդների իրագործման հիմքը դրեց:

**1. Սպառողական կոռպերացիայի՝ Ռոչդելի վուտայնանկների սահմանադրությունը հիմունքները.**

Ռոչդելի վոստայնանկների՝ այդ հետ ընկած քաղաքի փոքրիկ Դոգուշի փողոցում հիմնած կոռպերատիվն առաջին սպառողական ընկերությունը չեր:

Պատմության մեջ շատ փորձեր են յեղել առաջին անհրաժեշտության առարկաների հասարակական վաճառք կազմակերպելու՝ հոգուտ մարդկանց: Բայց այդ բոլոր ձեռնարկությունները շատ շուտով ձախողել ու մեռել են՝ գործն անհաջող կաղմակերպելու շնորհիվ: Յեկ միայն Ռոչդելի հասարակ վոստայնանկներն եին, վոր աշխատավորների կյանքը բարվոքելու յեղանակների մասին յերկար մտածելուց հետո, հաջողություն ունեցան գործի գարգացման հիմունքը գտնելու: Այս պատճառով՝ Ռոչդելի վոստայնանկներին ամենայն իրավամբ սպառողական կոռպերացիայի և կոռպերատիվ մեծ շարժման հիմնադիրն են անվանում:

Վորոնք են Ռոչդելի վոստայնանկների սահմանադրությունը հիմունքը:

Ամեն մարդու համար հասկանալի ե, վոր ինչ ապրանք ել վոր գնելու լինենք վոչ քիչ-քիչ՝ մանրածախսի խանութում, այլ մի անգամից, մեծ քանակությամբ՝ թոմարի (մեծաքանակ), առուտուր անողից, ապրաքն ավելի արժան կընսաի ու հատկությեամբ ավելի լավը կը լինի:

Ուստի ամեն մի գնորդ, վոր ցանկանում և արժան գնով լավ ապրանք ձեռք բերել, ապրանքը պիտի գնե վոչ թե արշենով ու ֆնտով, այլ թոփով, փթով ու վագոնով և վոչ թե մանրածախսի խանութից, այլ ուղղակի գործարանից կամ խոշոր մեծաքանակ վաճառանոցից:

Սակայն՝ վորքան ել վոր ցանկանու և այս խորհուրդը, ակամա հարց և ծագում, թե կարող ե արդյոք մեր գյուղացին, բանվորն ու քաղաքացին ձեռք բերել կարագը տակառներով, ալյուրը վագոններով, ճոթեղենը հակերով:

Ինքն ըստ ինքյան հասկանալի ե, վոր ամեն մի սպառող առանձին այդ անել չի կարող: Նախ և առաջ նա յերբեք ձեռքին այնքան փող չի ունենում, վոր կարողանա այդպիսի մեծաքանակ ապրանքի արժեքը վճարել. բացի գրանից՝ նրա տնային գործա-

ծության համար հացը պետք եւ վոչ թե վագոններով, այլ ֆնտերով, ձուկը՝ մի քանի հատ և վոչ թե տակառներով, չիթը՝ արշիններով և վոչ թե թոփերով:

Իսկ յեթե մի քանի տասնյակ, հարյուր ու հազար գնորդ միանան ու միասին իրենց հարկավոր ապրանքները գնելու լինեն, մի անգամից հնարավորություն կ'ունենան այդ ապրանքները գնելու ամենախոշոր քանակությամբ և ամենքը միասին կը դառնան մի շատ խոշոր մեծաքանակ գնորդ: Գնած ապրանքներն արժան կը նստեն ու լավը կը լինեն:

Սպառողական կոռպերացիայի հիմքը կազմող այս պարզ միտքը հասկանալի եւ ամեն մարդու, վոր յերբ և իցե մտածել յուր տնտեսության մասին:

Այս միտքը հայտնի եւ յեղել, իհարկե, Ռոչդելի Դոգոշի փողոցի սպառողական խանութի բացվելուց շատ առաջ: Բայց, հակառակ բազմաթիվ փորձերին, առաջ չեր հաջողվում իրագործել: Ակներն եւ, վոր միշտ հեշտ չի լինում մի պարզ ու հասարակ մտքի իրականացումը: Աշխատենք բացատրել, թե ինչ եւ պատճու: Ինչու միայն Ռոչդելցիք կարողացան առաջին անգամ կարգի գնել սպառողական կոռպերացիայի գործը:

Միասին ապրանք գնելու ամենապարզ յեղանակն այն կը լինի, յերբ մի քանի միմյանց ծանոթ ընտանիք ուզում են, դիցուք, ամառվա համար ճոթեղեն գնել. փող են վեր գալիս ու հավաքած գումարովն, ասենք՝ Բողոքովսկի տրեստի գործարանից մի հակ չիթ կամ սարպինկա յեն գնում և ապրանքն ստանալուց հետո բաժանում են իրար մեջ:

Այսպես միասին ապրանք գնելը սակայն՝ սպառողական կոռպերացիա չի լինի:

Ինքն ըստ ինքյան հասկանալի եւ, վոր յեթե այս յեղանակով անային գործաժողովյան բոլոր մթերքները գնելու լինեն, պետք եւ ամեն որ ժողովվեն, փող վեր գան, ընկերներից ամեն մեկը հերթով գնա ապրանք գնելու: Ել ուրիշ վոչ մի բանի ժամանակ չի մնա և այդ հոգսերը ամենքի համար ծանր բեռ կը

Այս պատճառով մարդիկ վաղուց, կամենալով բոլոր անհրաժեշտ ապրանքները միասին գնելու գործը լավ կարգի գնել փող վեր գալիս, շըշանառության մի փոքր դրամագլուխի եին

կազմում, իրենց միջից մի լիազոր եին ընտրում ու հանձնարարում եին նրան մի փոքր խանութ բանալ, վորտեղից կարող եին իրենց միասին գնած ապրանքները ստանալ:

Այսպիսի ընկերությունը, վոր ընդհանուր միջոցներով խանութ եւ պահում իրեն հարկավոր ապրանքների համար, սպառողական կոռպերատիվ կոչվեց: Այսպիսի խանութներ բաց են արել Ռոչդելի վոստայնակների ձեռնարկությունից շատ առաջ, բայց միայն սրանց հաջողվեց այս գործի կանոնավոր հիմունքը գտնել:

Վորոնք եին այդ հիմունքները:

Միասնական գնումների առաջին անհաջող փորձերի ժամանակ հասարակական խանութն ապրանքը գնում եր մեծաքանակ վաճառքի գներով, նրա արժեքի վրա եր գալիս փոխադրության, խանութը, պահեստը պահելու վերադիր ծախսերը և վորոշելով, թե ինչ եւ նստել իրեն կշռված ապրանքը, այդ արժեքովն ապրանքը գուրս եր տալիս յուր անդամներին:

Ընկերությունը կարծես յուր նպատակին հասնում եր: Լավ ապրանք եր ստացվում և շատ ավելի արժան, քան մասնակոր վաճառանոցներում եր ծախվում: Մակայն այսպիսի ընկերությունները շատ շուտ տկարանում ու մեռնում եին:

Հասարակական արժան վաճառքը զայրացնում եր հարեան խանութպաններին, վորոնք իրենց գներն ինքնարժեքից շատ պակասեցնում եին ու դրանով գեռ թույլ ու չամրացած ընկերությունը քաշում կատաղի մրցման մեջ: Այս բանում նրանք մի փոքր վնաս եին կրում, բայց հասնում եին իրենց նպատակին և ոգտվելով գնորդի անգիտակից լինելուց՝ հեռացնում եին նրան հասարակական խանութից ու հիմովին կործանում եին կոռպերատիվը:

Մինչև անգամ գեպքեր եին լինում, յերբ առետրականները կոռպերատիվի անբարեխիղճ անդամների ձեռքով նրա արժան գներովն առնում եին ապրանքներն ու հետո վաստակով ծախում իրենց խանութում:

Բայց ինքնարժեքով վաճառելու ամենամեծ անհարմարությունն այն եր, վոր կոռպերատիվը վոչ մի կերպ չեր կարողանում յուր դրամագլուխին ավելացնել: Աղքատիկ փայտավճարներից կազմված շրջանառության միջոցները միշտ աննշան եին լինում,

կոռպերատիվի տնտեսական ույժը չնշին: Վաճառքից վաստակ չունենալով՝ կոռպերատիվը չեր կարող ավելացնել յուր շրջանառության միջոցները, հաճախ փող չեր ունենում այն ժամանակ, յերբ պատեհություն եր լինում արժան ու լավ ապրանք գնելու: Ամենափոքր վնաս ունենալուց դրամագլուխը վոչչանում եր և կոռպերատիվը մենում:

Այս բոլոր ձախորդ հետեւանքներից խուսափելու համար՝ Ռոչդելի վոստայնանկները վորոշեցին ապրանքներն իրենց հասարակական խանութում վաճառել զու թե ինքնարժեքով, այէ հենց շուկայի այն գներով, վորով վաճառում եին շրջակա առետրականները:

Շուկայի գներով առետուր անելով, դեռ ևս տկար կոռպերատիվը յուր ույժերից վեր պայքարի չեր բռնվում հարուսա առետրականների հետ, իսկ այդ գներիցն ստացվող վաստակը բավականին ավելացնում եր նրա տնտեսական կարողությունը, մեծացնում շրջանառության աղքատիկ միջոցները և ամրացնում կոռպերատիվ միության կենսունակությունը:

Ահա թե ինչու ապրանքներն ընկերության անդամներին շուկայի գներով վաճառելու սկզբունքը, վոր սահմանեցին Ռոչդելի վոստայնանկները, սպառողական կոռպերացիայի գլխավոր հիմունքներից մեկն և համարվում:

Սակայն մեզ կարող են հարց տալ, թե ել ի՞նչ շահ ունի սպառողը, վոր նեղություն քաջ ու կոռպերատիվ խանութ բաց անե, յեթե այդ խանութը ապրանքը պիտի վաճառե մասնավոր խանութպանների գներով:

Այս հարցի պատասխանը մեզ կը տա Ռոչդելի վոստայնանկների սահմանած յերկրորդ կանոնը, վորի համաձայն այն վաստակը, վոր ստացվում և սպառողից շուկայի գներով վաճառելու շնորհիվ և մասնավոր առետրի մեջ խանութպանի գրանն և մտնում, այդ վաստակը տարվա վերջում վերադարձվում և սպառողին:

Դիցուք թե մեր սպառողական խանութը տարվա ընթացքում 10.000 ռուբլու ապրանք և ծախել և 800 ռուբլի ոգուս և ունեցել: Այդ ոգուսն ստացվել և սպառող անդամներից և պետք և հետ դարձվի նրանց: Խանութիցը գնած ապրանքի ամեն մի ռուբլուն ութ կոռպեկ վաստակ և ընկնում, իսկ իննառև յերկու

կոռպեկը ապրանքի ինքնարժեքն և՝ բոլոր վերագիր ծախսերի հետ միասին: Այսպես ուրեմն, յեթե յես մեր խանութիցն հարյուր ռուբլու ապրանք ևմ գնել խանութն ինձանից ութ ռուբլի վաստակ և ունեցել, վոր տարվա վերջում վերադարձնում և ինձ:

Յեթե զուք տարվա ընթացքում ապրանք եք գնել գիցուք 800 ռուբլու, խանութը ձեզնից վաստակ և ստացել 64 ռ., վոր և վերադարձնում և ձեզ:

Յեթե ձեր գրացին գնել և 125 ռուբլու, տարվա վերջում նրան հետ են տալիս 10 ռուբլի:

Այսպիսով յեթե մեր խանութում առուտուր ենք անում վոչ թե ինքնարժեքի, այլ շուկայի գներով, մենք, սպառողներս, վոչ մի կորուստ չունենք,—խանութի տարվա վերջումն ստացած բոլոր վաստակը մերն ե:

Դեռ ավելին տաենք. խանութի վաստակը մեզ ուրիշ ոգուս ել և տալիս: Յեթե մեր խանութն ինքնարժեքով առուտուր աներ, մենք, ամեն որ քիչ-քիչ սպրանք գնելով, որական 15 կամ 20 կոռպեկ միայն շահած կը լինեինք, գուցե դրանից ել պահաս:

Այդ շահը քիչ շոշափելի կը լիներ ու կը կորչեր մեր ամենորյա ծախսերի մեջ:

Այլ բան և, յեթե մեր այդ կոռպեկները խանութը պահե վորպես վաստակ: Յուր ույժն ավելացնելով հանդերձ՝ խանութը միաժամանակ մեր կոռպեկները կ'ավելացնե ուրիշի կոռպեկների վրա: Նա մեզ համար խամատար պահարան ու խնայողական գրամարկը կը լինի, վոր մեզ համար անկատելի կերպով կը հաշարե ու տարվա վերջում մեզ կ'ընծայե մի քանի տասնյակ ռուբլի: Իսկ այդ գումարը գյուղացու, բանվորի ու ծառայողի համեստ յեկամտի համար արգեն մեծ նշանակություն ունի: Համենայն գեցս այդպիսի մի գումար, յերբ մի անգամից և ստացվում, շատ ավելի ոգուս կը բերե տնտեսության մեջ, քան յեթե կոռպեկ-կոռպեկ խնայվի ամբողջ տարվա ընթացքում:

Ահա թե ինչու ստացած վաստակի վերադարձնելը սպառողներին, յուրաքանչյուրին յուր գնած ապրանքի քանակության համեմատ, սպառողական կոռպերացիայի յերկրորդ մեծ հիմն և համարվում:

Սակայն յեթե ծանոթանանք Ռուսաստանի սպառողական

կոռպերացիայի կյանքին, կը տեսնենք, վոր այնտեղ սպառողների ամենալավ ընկերություններում բոլոր վաստակը չեն բաժանում գնուրդներին:

Ամենից առաջ խոշոր գումար ավելացնում են հիմնական կամ պահեստի զրամագլխին՝ զործն ընդարձակելու և ամրացնելու համար:

Մենք արդեն գիտենք, վոր հասարակական խանութը առանց մեծ զրամագլխի կարող ե ակարանալ ու զործը կը վատանա, ապրանք քիչ կը լինի, տեսակները քիչ կը լինին, իրենք սպառող անդամները չեն կարող բավականանալ իրենց խանութի ապրանքներովն ու կը զիմնն մասնավոր առևտրականներին:

Այս պատճառով հենց սպառողի շահն և պահանջում, վոր գործը փորքան կարելի ե շատ զարգանա և այնքան զրամ գումարվի, վոր խանութը յերբեք ըշջանառության համար փողի պակասություն չունենա: Փայտավարներով այդքան զրամ հավաքելը շատ դժվար կը լինի անդամների իրենց համար և ավելի հեշտ և փողն ստանալ գործիցը, այսինքն՝ վաստակիցը մասնատրելով:

Քիչ փող չեն հատկացնում կոռպերատիվները նույնպես կուլտուր-կրթական կոչված նպատակների համար:

Կոռպերացիան՝ փորքան շատ անդամ ունենա, վորքան ամուր կպած լինեն այդ անդամներն իրենց կոռպերատիվների համար ուժեղ կը լինի: Ուստի փորքան շատ ուղիղ գիտելիքներ տարածվին կոռպերացիայի մասին, այնքան ամուր ու ուժեղ կը լինի ինքը կոռպերացիան:

Հետո՝ կոռպերացիան չի կարող մոռանալ և այն, վոր «մարդ վոչ սիայն հացիվ կեցցե»:

Կոռպերատորները արժան հաց, շաքար, մեխ ու ճոթեղեն են ծախում, բայց չեն կարող մոռանալ նաև մարդու կյանքը: Այդ ասպարիգում նրանք գործում են ժողովրդական լրացրության տեղական բաժինների հետ և նրանց զեկավարությամբ և աշխատում են իրենց անդամներին լավ զբաղեցուցիչ ու ոգտակար գիրք հասցնել, կազմակերպել նրանց համար ընթերցումներ՝ յերկրագործական տնտեսության այնպիսի յեղանակներ սովորեցնելու համար, վոր յերկու հասկ բուացնեն այնտեղ, ուր աշխատավոր հողագործը միայն մի հասկ և ստանում, հիմ-

նել ժողովրդական թատրոն, գրադարաններ, ժողովրդական տներ ու թեյարաններ: Այս բոլորի համար խոշոր ծախքեր են պետք, և կոռպերատոր սպառողները սիրով տալիս են այդ ծախքերն իրենց վաստակից:

Այսպես ուրեմն՝ կոռպերատիվ առևտրի բերած շահի մի մասը վերադարձվում ե սպառողին, իսկ մնացածը գործադրվում է գործն ընդհարձակելու և կուլտուր-կրթական ծախքերը հոգալու համար, այսինքն՝ հասարակական, հանրություն դրամագլուխներ են կազմվում: Այդպիսի հասարակական դրամագլուխներ կազմելը, շահի մի մասն այդ բանի համար հատկացնելով՝ վոչ միայն սպառողական, այլ և ամեն մի այլ կոռպերացիայի կարսորագույն հիմքերից մեկն և համարվում:

Մինչև հիմա առաջ բերված կանոններով, սակայն, չեն վերջանում Ռոչդելի վոստայնանկների մեջ թողած ավանդները:

Հետեւյալ կանոնը, վոր այնպես հաճախ մոռանում են Ռուսաստանի կոռպերատորները, այդ այն ե, վոր կոռպերատիվ խանութում ապրանքները պետք ե վաճառել բացառապես կանխիկ դրամով: Պարագով ապրանք գնելը կոռպերատիվում թույլատրելի չե, ասում եին սպառողական կոռպերացիայի հիմնադիրները: Այս պահանջը տարակուսանքի տեղելք ե տալիս և մանավանդ դժվար իրագործելի ե թվում կոռպերատիվ հիմնող աշխատավորների համար: Կարծես թե հենց հասարակական խանութն ե, վոր ոգնության պիտի հասնի աշխատավոր մարդուն, յերբ վոր նրա ձեռին որական հացի փող չի լինում: Բայց Ռոչդելի վոստայնանկները համառությամբ պահանջում եին, վոր այս կանոնը պահանջվի:

Բայց ինչու: Ինչու մասնավոր խանութպանը կարող է ապառիկ ապրանք տալ, իսկ սպառողական ընկերությունը չի կարող:

Կ'աշխատենք ըստ կարելվույն հանգամանորեն ու ուշադրությամբ պարզաբանել այս հարցը:

Յեթե խանութպանը ապառիկ ապրանք ե տալիս, այդ, որ հարկե, յուր բարեսրտությունիցը չե, վոր անում ե, այլ յուր շահն ունի այդտեղ: Բայց ինչ շահ կարող ե լինել այդ բանում:

Վաղուց ե ասված, թե փեշքաշ ձիու ատամներին մտիկ չեն տա: Ձիշտ այսպես ել պահանջկոտ չի կարելի լինել պարտքով

գնած ապրանքի վերաբերմամբ։ Այս պատճառով ել խանութիպնը, յերբ վոր առանց փողի ապրանք եւ տալիս, ամեն տեսակ փասպանդա ապրանք ու վատ փորակ ունեցող մրթերքներ եւ սաղացնում, բացի գրանից՝ զինն ել կանխիկ վաճառածի համեմատությամբ ավելի եւ հաշվում։ Այս հանգամանքի շնորհիվ խանութպանը փողը ժամանակին չտալու և պարտքերը չվճարելու հետեւանքով կրած վնասները դեռ ավելով ծածկում եւ բարձր գներից ու վատ ապրանքը թանգ ծախելուց ստացած վաստակով։

Իսկ հասարակական առեւտուրն այդպիսի բան անել չի կարող, չի կարող լավի տեղ վատ ապրանք տալ քաշումը խարեւ գները բարձրացներ յերբ վոր աղքատ շնորդին ապրանք եւ տալիս։ Այս պատճառով չի ել կարող ծածկել պարտքերը չվճարելուց ունեցած կորուստները, վոր միշտ կարող են պատահել։ Իսկ այդ կորուստները կարող են մեծ վնաս հասցնել և ամբողջ գործը քայլայել։

Բացի սրանից՝ պետք եւ նկատել նաև այս, վոր հասարակական խանութը, յեթե պարտքով ապրանք տալու լինի, միշտ պատրաստի դրասի նեղություն կըքաշե, ինքը սպիրալ պարտքով ապրանք գնել ուրեմն՝ ստանալ վոչ ճիշտ ժամանակին և ավելի վատ փորակի ապրանք, և փող չունենալով շատ անգամ բաց կըթողնե արժան ու լավ ապրանք ձեռք բերելու հարմար գեպքեր։ Ուստի, վորքան ել վոր ծանր լինի աշխատավոր կոռպերատորի համար, նա պարտավոր եւ խսպառ հրաժարվել պարտքով ապրանք գնելուց, յեթե, ի հարկե, գնահատում է յուր սպառողական ընկերությունը և չի ցանկանում սնանկացնել նրան։ Յեթե արդեն շատ մեծ կարիք լինի, կարելի եւ վաստակից մասն հանելով մի հատուկ դրամագլուխ կազմել և նրանից դրամ փոխ տալ կարույալ սպառողներին, բայց ընկերության հիմնական առեւտրական դրամագլուխներն իրենց շըշանառությունը պիտի կատարեն կանխիկ գրամով։

Այսպես են սպառողական կոռպերացիայի հիմնաքարերը դարձան հետեւյալ յերեք զինավոր կանոնները։

1. Վոր սպառողական ընկերության վաճառքի գները սպառական մանրածախսի գներ լինեն և վոչ մեծաքանակ վաճառքի, փորովհետեւ միայն այդ գեպքում բավական մեծ վաստակ կըստացվի, վոր հնարավորություն կը

տա կոռպերատիվին մի փոքր մասը հատկացնել շըշանառության միջոցներն ուժեղացնելու և ունենալ ազատ պատրաստի դրամ յուր տնտեսական ույժն ամրացնելու համար։

2. Սպառողական խանութի ամբողջ վաստակը պիտի բաշխվի գնորդներին վոչ թե խանութը բաց անելիս նըանց տված փայտվճարների համեմատ, այլ նայելով, թե քանի ուղբու ապրանք են գնել նրանք տարվա ընթացքում։

3. Հասարակական գործը չվաճանգելու, նրա կազմակերպությունն ամուր պահելու համար պետք եւ հրաժարվել ապառիկ վաճառքից, փորովհետեւ առանց վաշխառուական տոկոսների բնավ ձեռնտու չե պարտքով ապրանք վաճառելու։

Պահանջվում է նույնպես, վոր ամեն մի սպառող անձնական աշխատանքով մասնակցի խանութի կազմակերպության գործին, վոր անդամներն իրենք գանձապահություն և մինչեւ անգամ գործակատարություն անեն, մի խոսքով՝ իրենց անձնական աշխատանքով մասնակցություն ունենան գործի մեջ։

Ահա այս են սպառողական կոռպերացիայի մեծ գործի 1844թ. սահմանված հիմունքը։

Այս ժամանակվանից պատմության առվովը շատ ջուր գնացել։ Շատ բաներում փոխվել եւ տնտեսական կյանքի կառուցվածքը, կապիտալիզմը զարգացման նոր ձեռք եւ ստացել, Ռուսաստանի սոցիալական հեղափոխությունը տնտեսական կազմակերպության մի շարք նոր գաղափարներ եւ հանդես բերել, և ակներեւ ե, վոր Ռուսելի վաստայնանկների սկզբունքները, ըստ եռության ուղիղ մնալով հանդերձ, մասամբ պետք եւ ձևափոխվեն, մասամբ ել լրացվեն տնտեսական կյանքի ութուն տարվա ընթացքում փոփոխված պայմանների և մանավանդ նրա այն նոր ձեռքերի համեմատ, վոր կազմակերպվում են մեր Խորհրդային պետության մեջ։

Ռոչգելի սկզբունքների վերաբննության ու լրացման անհրաժեշտությունը վացուց եւ հրապարակ հանված, վերջին ժամանակն այդ խնդիրը հերթական եւ դրաժեր կոմմունիստ կոռպերատորների կոնֆերանսը և պետք եւ կարծել, վոր առաջիկա տարիների ընթացքում տեսական կոռպերատիվ միտքը կըկարողանա

սահմանել սպառողական կոռուպտրացիայի մեր տնտեսական կյանքի նոր ձեռքին համապատասխան հիմնական սկզբունքները:

Ասում են՝ Մոսկվան այրվեց մի կոպեկանոց մոսմից\*), ձիշտայդպես Դոդոշի փողոցի մի փոքրիկ տան նկուղում բաց արած փոքրիկ խանութիցն սկսվեց ու արագ զարգացավ մի ահազին հասարակական շարժում, վոր մի քանի տասնամյակից հետո տարածվեց բոլոր քաղաքակիրթ յերկրներում:

Այդ շարժման զարգացումը միշտ ել առանց խոչ ու խութերի չի ընթացել:

Շատ կոռպերատիվներ կործանվել են, բայց մեծ մասամբ վոչ թե այն պատճառով, վոր Ռոչդելի կանոնները վատ են յեղել, այլ այն պատճառով, վոր իրենք այդ կանոններին չեն հետեւ:

Այժմ, վոստայնանկների համեստ փորձից մի քանի տառնամյակ հետո, սպառողական կոռպերացիան, հեռացնելով յուր ճանապարհից խանութպանին, առևտրականին և այլ միջնորդներին, միացրել ե յուր շարքերում տասնյակ միլիոնավոր մարդկանց, ստեղծել ե ապրանքների հակայական պահեստներ, շինել ե յուր սեպհական գործարանները, ձեռք ե բերել ովկիանոսի շոգենավներ, անց ե կացրել յերկաթուղիներ, կառուցել ե հյուրանոցներ, հիվանդանոցներ, գրադարաններ ու դպրոցներ... Ռոբերտ Ռուենի ցանած վսեմ սերմերն սկսել են պտուղ տալ:

## 2. Ռայֆայզենի կանոնները.

Անգլիայում առաջին սպառողական կոռպերատիվը հիմնվելուց հետո անցել եր մի քառորդ դար, յերբ մի փոքրիկ գերմանական գյուղում ստեղծվեց առաջին վարկային ընկերությունը, վոր գյուղական կոռպերացիայի կարևորագույն ճյուղն եւ:

Այդ միտքը հղացողը տեղական շինական հասարակության տանուտերն եր:

Վարկային կոռպերացիայի հիմնադիրը, նըա «հայրը», —ինչ պես սիրում են ասել գերմանացի կոռպերատորները, — Ռայֆայզենը ծնվեց 1810 թ. և մեռավ 1888 թ.:

Նա յուր ամբողջ յերկար կյանքի ընթացքում անձնվիրա-

\*.) Խոսքը 1812 թ. հրեհի մասին եւ.

բար ծառայել ե գյուղացությանը: Վորպես շինական հասարակության տանուտեր, նա քաջ ծանոթ եր գյուղի կարիքին և հաճախ միտք եր անում, թե ինչպես կարելի ե գերմանական գյուղն ազատել վաշխառուների ձեռքից: Այն ժամանակները վաշխառությունը շատ սաստիկ տարածված եր գերմանական գյուղերում: Վաշխառուներն ազահ տղբուկների նման ծծում եին աշխատավոր գյուղացության բոլոր ույժերը: Ռայֆայզենն սկզբումը փորձեց այդ չարիքի առաջն առնել առանձին միություններ ստեղծելով, վորոնք իրենց չքավոր անդամակիցների համար անսպուններ եին գնում: Սակայն այդ միությունները, վոր բարեգործության սկզբունքների վրա եին հիմնված, մի քանի ժամանակ գյություննենալուց հետո, հետզետե թուլացան, նվիրատվությունները դադարեցին և միությունները լուծվեցին: Ռայֆայզենը յուր կյանքի վերջերումը հասկացավ, վոր բարեգործությամբ գյուղացու կարիքին ոգնել չի լինի և սկսեց մտածել գործը հիմնել վոչ թե բարեգործության, այլ գյուղացության փոխադարձ ոգնության սկզբունքի վրա: Գյուղի չքավորության զլսավոր պատճառները քաջ հայտնի եին Ռայֆայզենին, և նա յերկար տարիների խորհրդածությունից հետո գտավ նրանց գեմ մաքառելու յեղանակը: Այդ մասին նա գրեց 1866 թ. յուր «Վարկային ընկերությունները, վորպես չքավորությունը վոչնչացնելու միջոց» գրքում, իսկ 1869 թ. ապրիլի 25-ին կարողացավ հիմնել առաջին վարկային ընկերությունը Հեղդեսդորֆ փոքրիկ գյուղում, նեյվիդ փոքրիկ քաղաքի մոտ:

Ի՞նչ հիմնունքներով ստեղծեց այդ գործը վարկային կոռպերացիայի «հայրը»:

Ռայֆայզենը լավ գիտեր, վոր ամեն մի գյուղացի յուր տնտեսական շրջանառության համար հաճախ փողի կարոտ ե լինում, մանավանդ յեթե ընդարձակում կամ կատարելագործում ե յուր տնտեսությունը: Բայց սովորաբար նա չի կարողանում փող ճարել. այստեղ ե դիպչում, այստեղ ե դիպչում ու վերջ՝ ի վերջոյ ստիպված ե լինում դիմել յուր գյուղի վաշխառություն, վոր հոժամանակում պարտք ե տալիս, բայց հրեշավոր տոկոսներ ե պորությամբ պարտք ե տալիս, բայց հրեշավոր տոկոսներ ե պորությամբ պարտք ե տալիս:

Տալիս ե քսան ոռւրիշ, իսկ մի ամսից հետո յերեսուն ե պահանջում:

իսկ այս յեղանակով արած փոխառությամբ վոչ մի բարելավումն անել չի լինի տնտեսության մեջ, վորովհետև այն ոգուաը, վոր կարող եր տալ մի նոր կով, մի կալող կամ շարքացան մեքնա, կուլ կը դնա վաշխառուին վճարելիք հրեշավոր տոկոներին:

Միենույն ժամանակ քաղաքներում շատ ազատ դրամ և հավաքում, վոր բանկն են քցում ու սիրով վոխ են տալիս քիչ տոկոսով վորեե վստահելի գործի համար ու լավ ապահովությամբ:

Շատ լավ կը լիներ, վոր ամեն մի գյուղացի կարողանար գնալ քաղաք ու բանկից փող պարտք աներ, ինչքան վոր իրեն պետք ե: Բայց այդ դժվար թե հարավոր լինի: Մի տասը, քսան կամ մինչեւ անգամ հիսուն ոռություն համար հեռավոր քաղաք չի գնա մարդ, վորովհետև գնալ-գալն այնքան կը նստի, վորքան ստացած փողի ոգուաը չի լինի:

Բացի սրանից՝ բանկն անձանոթ մարդու, մեկ ե, փող չի տա: Յեկ յեթե մինչեւ անգամ գյուղացին իրեն ապահովություն փոխառության համար առաջարկելու լինի յուր անասունները, շինություններն ու ամբողջ բերքը, բանկը չի կարող ստուգել նրա ունեցած-չունեցածը, վորովհետև նրա պարտք ուզած գումարն այնքան չնչին ե, վոր նրա բերած տոկոսներն հերիք չեն լինի մեր գյուղացու ստացվածքի մասին տեղեկություններ հավաքելու համար, իսկ յեթե պարտքը վճարելու լինի՝ առավել ևս հերիք չի լինի այդ պարտքը գանձելու նպատակով հատուկ մարդ ուղարկելու համար:

Մի խոսքով՝ բանկերի համար բնավ հաշիվ չե մանր գումարներով փող տալ գյուղացիներին, մի հիսուն կամ հարյուր հիսուն ոռություն փոխառության մասին նրանք խոսել ել չեն ուղինա:

Իսայֆայզենը յերկար խորհրդածում եր այս բոլորի մասին, և վերջապես առաջարկեց յուր հասարակության գյուղացիներին մի միություն կազմել, վոր յուր անդամների փոխարար պատասխանատվությամբ և նրանց ամբողջ ստացվածքի գրավականով խոշոր գումարներով փող կարողանար պարտք անել:

Միություն կազմող հինգ կամ վեց հարուստ ընտանիքն իրենց տնտեսական շրջանառության համար սովորաբար մի քանի տասնյակ հազար ոռություն կարիք են ունենում:

Այդ գումարն այնքան խոշոր ե, վոր նրա ամենափոքր տո-

կոսն ել քաղաք գնալ-գալու և բանկի հետ գրագրություն անելու ծախսը կը հանե: Բանկի համար ել այդ փոխառության չափը բավական և նրա տոկոսներով տեղեկություններ հավաքելու և պարտքը չգնարելու դեպքում գանձելու ծախքերը հոգալու համար, իսկ հինգ հարյուր գյուղական ծխի ստացվածքը կարող և ավելի քան բավական համարվել փոխառության ապահովության համար:

Այս պատճառով Խայֆայզենի առաջին կանոնը—բազմաթիվ միացյալ գյուղացիների փոխարար յերաշխավորությամբ և միության անդամների ամբողջ գույքի ապահովությամբ միասին փող պարտք անելը—ապահովեց դրամի հոսանքը դեպի Խայֆայզենի ընկերությունները և վարկային կոռպերացիայի կազմակերպության հիմք գարձավ:

Սակայն այս կանոնը չի կարելի ամենագլխավորը համարել վարկային կոռպերացիայի գործում:

Այդ կանոնը Խայֆայզենը մտցրեց վոչ այնքան վորպես կոռպերատիվ վարկի հիմք, վորքան վորպես վորոշ ապահովություն բանկերի և կոռպերատիվին փող տվող ուրիշ հիմնարկությունների ու անձանց համար: Անդամների փոխարար պատասխանատվությունն իրենց ստացվածքովն՝ հասկանալի եր և հարգանք եր ներշնչում նրա ժամանակի բոլոր ֆինանսական գործիչներին:

Իսկ կոռպերատիվ վարկի խական հիմքը Խայֆայզենն այն չեր համարում, թե ինչիք ե ապահովված փոխառությունը, այլ այն, թե կոռպերատիվի փոխ առած դրամն ում պիտի տրվի և ի՞նչի վրա պիտի ծախսվի:

Աւստի Խայֆայզենի կանոններից կարեռագույնը այն ցուցմունքն ե, թե ընդհանուր պատասխանատվությամբ փող ստացող ընկերությունը փողը յուր անդամներին պետք ե տա միայն արտադրական կարիքների համար:

Փող կարելի ե ստանալ կոռպերատիվից վոչ թե հագուստի համար, վոչ թե սննդի համար, այլ այնպիսի ծախսերի, վոր տնտեսական շրջանառության մեջ են մտնում և վոր այդ շրջանառությունը վերջանալուց հետոյ յետ են ստացվում մեծ վաստակով—ուրիշ խոսքով՝ այնպիսի ծախսերի համար, վոր իրենք իրենց արդարացնում են և հնարավորություն են տալիս գյուղա-

ցուն վոչ միայն վերագարձնելու ստացած փոխատվությունը, այլ մինչև անգամ կարգին ոգուռ ստանալու:

Ռայֆազենի այս կարևորագույն կանոնից հետեւում են բոլոր մնացյալները:

Քանի վոր կոռպերատիվ վարկի հիմքն ե արտադրական նպատակով փոխատվություն անելը, պարզ ե, վոր վարկային ընկերությունը պետք ե արթուն հակողություն ունենա, վոր յուր տված փողը գուր տեղը չծախսվի, այլ զնա հենց այն արտադրական կարիքների վրա, վորոնց համար վերցրած ե:

Վորպես զի այսպիսի հսկողությունը հնարավոր լինի, անհրաժեշտ ե լավ ճանաչել փոխառուին և աչքաթող չանել նրա տնտեսության վիճակը:

Այստեղից ամենից առաջ այն կանոնն ե բղխում, վոր փողը պարտք տրվի միայն ընկերության անդամներին, այսինքն՝ ամենքին լավ ծանոթ և ամենքի հետ հավասար պատասխանատվություն ունեցող մարդկանց:

Վորպես զի ընկերության վարչությունը կարող լինի հսկողություն ունենալ յուր փոխառուների վրա, անհրաժեշտ ե նույնապես, վոր նրանց տնտեսությունը վարչության անդամների, աչքի տուաջ լինի: Այս կարելի ե այն ժամանակը միայն, յերբ ընկերության անդամների բոլոր տնտեսությունները միմիանցից հեռու չեն, ուրիշ խոսքով՝ յերբ ընկերության գործունեության շրջանը մեծ չե, անդամները թվով շատ չեն ու շրջանառությունը խոշոր չե:

Յեկ հիրավի, յեթե մի ընկերության մեջ մի ամբողջ նահանգ կամ գավառ միացնենք, վոչ մի հնարավորություն չի լինի հնկելու անդամների տնտեսության, նրանց տնտեսական շրջանառության վրա և հետեւելու թե ինչի վրա են նրանք ծախսում իրենց պարտք արած փողը: Տատերը վոլոստն\*) ել են իրատ մեծ համարում ընկերության գործունեության համար և կարծում են, թե ավելի լավ ե, վոր յուրաքանչյուր հինգ, վեց գյուղն իրենց վարկային ընկերությունն ունենան:

Սակայն յեթե ընկերությունն այսպիսի փոքր չափեր ունենա, նրա շրջանառությունն ել չի կարող մեծ լինել, ուստի

\*) Վոլոստն ավելի մեծ վարչական միավոր ե, քան մեր նախկին շնորհական հասարակությունները, վոր մի քանի գյուղից են բաղկացած լինում: Մ. Թ.

ամեն տեսակ ծախսերը՝ ճանապարհի, հաշվապահության ու գործավարության և այլն խիստ ծանր վերագիր ծախս կը դառնան ընկերության փոխ տված ամեն մի ուղղություն:

Դիցուք՝ վարչության ծախսը տարեկան հաղար ուղղի ե: Յեթե ընկերությունը տարվա մեջ 100.000 ուղղություն փոխառություն ե արել, ամեն մի փոխ տված ուղղություն նա յուր փոխառուներից պետք ե առնե մի-մի կոպեկ, չհաշվելով այն տոկոսը, վոր ընկերությունն ինքն ե վճարում: Խոկ յեթե նա տարեկան միայն 10.000 ու. փոխառություն ե անում, վերագիր ծախսերը շիջուցանելու համար պետք կը լինի առնել մի ուղղություն 10 կոպեկ:

Հնարավոր չհամարելով ընկերության շրջանառությունն ընդարձակելու նպատակով ընդլայնել նրա գործողությունների շրջանը և ավելացնել անդամների թիվը և գիտակցելով վերագիր ծախսերը և փոխառության տոկոսները պակասեցնելու անհրաժեշտությունը, Ռայֆազենն աշխատում եր վորե և կերպով պահանջնել ընկերության վարչական ծախսերը: Այս կողմից նրա ամենակարևոր առաջարկությունն այն եր, վոր վարչության անդամների, գանձապահի և քարտուղար-հաշվապահի աշխատանքը հասարակական պարտականությունն, պատվավոր պաշտոն համարվի, ուստի և առանց վարձատրության լինի:

Վարչության աշխատանքը պատվավոր ու ձրի ճանաչելը խիստ պակասեցեց վերագիր ծախսերը և փոխառության տոկոսը նվազեցնելով՝ վարկն ավելի մատչելի դարձրեց:

Այս են այն գլխավոր կանոնները, վորոնց վրա հիմնեց վարկային կոռպերացիան նրա «հայր» Ռայֆայզենը:

Հինգն են այդ կանոնները:

1. Ընկերության բոլոր անդամների փոխառած պատասխանառությունն իրենց ամբողջ տարածքությունը պարտք արած փողը: Տատերը վոլոստն\*) ել են իրատ մեծ համարում ընկերության գործունեության համար և կարծում են, թե ավելի լավ ե, վոր յուրաքանչյուր հինգ, վեց գյուղն իրենց վարկային ընկերությունն ունենան:

2. Փոխառությունն եր ի արտադրական նպատակը:

3. Փոխառությունն միայն ընկերության անդամներին:

4. Ընկերության գործունեության փոքր շրջան:

5: Հնկերության վարչության աշխատանքը  
պատվավոր, ուստի և ձրի ճանաչելը:

Իմայֆայզենը յեռանդով քարոզում եր այս սկզբունքները  
և Հեղեղեղորդի ընկերությունն հիմնելու հետ միաժամանակ  
շրջագայում եր յուր շրջանի գյուղերը, վորտեղ նրան հաջողվեց  
հիմնել ևս 12 վարկային ընկերություն:

Այս ընկերությունների բացառիկ հաջողությունը և վար-  
կային կոռպերացիայի «հոր» անդուլ քարոզները լայն արծարծե-  
ցին նոր գաղափարները, և Իմայֆայզենը 1888 թ. մեռնելիս՝ կա-  
րող եր խորին գոհունակության զգացմունքով հաշվել մինչև 400  
գերմանական ընկերություն, վոր հիմնվել եին յուր կանոնների  
համաձայն:

Այսպես ծագեցին և կազմակերպվեցին այն յերկու գլխավոր  
կոռպերատիվ գաղափարները, վոր վերածնության ուղիներ ցույց  
տվին աշխատավոր գյուղացությանը:

Հետագայում, յերբ կոռպերատիվ շարժումն աճեց, գյուղա-  
կան կոռպերացիայի գործունեության սահմանները շատ ընդլայն-  
վեցին յուր սկզբնական նպատակների բաղադրությամբ: Բացի  
վարկից ու միասնական գնումներից, կոռպերացիան ձեռնարկեց  
կազմակերպելու յուր աշխատանքի պլուղների միասնական վա-  
ճառահանությունը, հաճախ միացնելով այն վաճառահանվող գյու-  
ղատնտեսական մթերքների վերամշակության հետ, և մի շարք  
այլ հատուկ կոռպերատիվ ձեռնարկություններ անասնապահու-  
թյան, մեքենաների ոգտագործման, հողի բարելավման ասպա-  
րեգներում և այլն.

Կոռպերացիայի այս նոր տեսակներից յուրաքանչյուրի հիմ-  
նական գաղափարն այսպես թե այսպես բղխում ե մեր այս  
գլխում քննության առած սկզբունքներից:

Սակայն կոռպերատիվ գործունեության նոր ձևերը, նրա  
չափանիւն լայն թափը և մանավանդ նրա նոր անելիքները, վոր  
հերթական են դարձել հիմա, յերբ կոռպերացիային և հանձնվում  
պետական ծրագրված տնտեսության մի շարք խեն-  
դիրների իրագործումը, հառաջ են բերել կոռպերատիվ աշխա-  
տանքի մի շարք նոր գաղափարներ, վորոնց կ'աշխատենք ծա-  
նոթացնել ընթերցողներին մեր գրքի վերջին գլուխներում:

### Գ Լ Ո Ւ Խ 111

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍՊԱՐՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.

Կոռպերատիվ կազմակերպությունների առանձին տեսակների  
նկարագրությունը մենք կ'սկսենք գյուղական սպառողական  
ընկերությունից:

Կոռպերացիայի բոլոր տեսակներից սպառողականը ամենից  
ավելի հայտնի ե, մասմամբ այն պատճառով, վոր կոռպերացիայի  
այդ տեսակը գործնականապես ծանոթ և նույնպես բոլոր գաղա-  
քարնակներին, իսկ ավելի այն պատճառով, վոր Խորհրդային  
Ռուսաստանի տնտեսական կյանքում մինչև 1921 թ. ամբողջ  
կոռպերատիվ աշխատանքը կենտրոնանում եր սպառողական կո-  
ռպերացիայի մեջ, իսկ Միասնական Սպառողական Ընկերությունը  
գըեթե միակ կոռպերատիվ բջիջն եր, վորտեղ յերեան եր գալիս  
տեղական կոռպերատիվ աշխատանքը: Միայն նոր տնտեսական  
քաղաքականության և մեր տնտեսական կյանքի նոր ձևերի զար-  
գացման հետ սկսեցին զարգանալ կոռպերատիվ շարժման ուրիշ  
տեսակները: Այժմ գյուղական կյանքը կազմակերպողների գլխա-  
վոր ուշադրությունն ուղղվում ե կոռպերատիվ գործունեության  
այդ արտադրական ձևերի վրա—յուղագործության, վուշի մշա-  
կության, վարկային և գյուղատնտեսական կոռպերացիայի այլ  
տեսակների: Այդ ուշադրությունը միանգամայն հասկանալի ե,  
վորովհետեւ գործունեության այդ ձևերն են, վոր ավելացնելու  
յեն գյուղացու տնտեսության յեկամուտները, բարձրացնելու յեն  
գյուղի բարեկցությունը, վերակազմելու յեն նոր հիմունքներով  
հողագործությունն ու անասնապահությունը:

Բայց, այսու ամենայնիվ գյուղական կյանքը կազմակեր-  
պողը չի կարող մոռանալ և սպառողական կոռպերատիվ աշխա-  
տանքը, վորովհետեւ յեթե գործը լավ դրված լինի՝ գյուղացին սպա-  
ռական ապրանքների կոռպերատիվ գնումներից մեծ խնայողություն  
կ'ունենա յուր տնտեսությունը բարելավելու համար:

Այս հանգամանքը հարկ կ' ի նկատի ունենալու մանավանդ հիմա, յերբ Մոսկվայի մերձակա շատ սահանգներում ու գավառներում՝ շնորհիվ մեր կազմակերպված չիներուն ու անշնորքությանը կոռապերատիվ գործում, մասնավոր խանութպահը նորից սկսում է գիրակշություն ստանալ և այն գումարները, վոր կոռպերատիվի լավ կազմակերպված լիներու դեպքում կարող են արտադրության ուժեղացնել և գյուղացու տնտեսությունը ամրացնել նորից մասնավոր կատարալի շահն են ավելացնում:

Թե վրաքան մեծ կարող ե լինել այդ շահը սպառողական կոռպերացիայի տկարանալու գեպքում, ցույց են տալիս գների ընկնելու թվերը մեր խուլ գյուղերում այն թվականներին, յերբ դեռ պատերազմից առաջ առաջին անգամ սպառողական կոռպերատիվներ բացվեցին:

Որինակի համար, Կուրսակի նահանգում, Ստարոստկում կավառում, այն տարեներում, յերբ առաջին անգամ սպառողական խանութներ բացվեցին, թեյի և հասարակ շաքարեղենի գները պակասեցին  $100/0$ -ով, շաքարինը— $13\%$ , լուցկունը, հնդկացորենի ձափարինը— $20\%$ , մանր խմորեղենինը, բրնձինը— $15\%$ , քացախինն ու հարինդ ձկան գները— $25\%$ , թթվամորենու սոդայինը— $50\%$ , այսինքն՝ յերկու անգամ: Այս նկատված ե այնպիսի բազմամարդ տեղում, ինչպես Կուրսակի նահանգն ե, վորտեղ դժվար չե քաղաք ընկնելը: Այլ բան ենք՝ տեսնում ծայրագավառներում: Կոռպերացիայի արածը վորե և Զերդինի գալապում (*Պերմի նահանգում*) ուղղակի առասպելական կարելի ե համարել: Բոբիլյովը, վոր հետազոտել ե Պերմի նահանգի կոռպերացիան, վկայում ե, վոր կոռպերացիայի զարգացումն այսպես ե փոփոխել գները. շաքարն աժանացել ե  $60\%$ , նավթը՝ յերկու անգամ,  $60-50$  կոպեկ արժեցող մկրատը ծախվելիս ե յեղել 1 ոուր. 20 կրպ., մինչև 3 ռ. արժեցող թավիշը ծախվել ե 7 ոուրլով: Բայց ամենից ավելի այդ տարբերությունը նկատվում ե զանազան մանր-մունք բաների վրա, մանավանդ մեխերի: Հենց վոր գալապումը սպառողական խանութներ են բացվում, ամեն բան սկսում են կրկնապատիկ արժան գնել: Զերդինի գավառի համար Բոբիլյովը հաշվում ե, վոր գյուղացիները 800 հազարի ապրանք գներով  $400$  հազար ոուբլու խնայողություն են արել կոռպերացիայի ազդեցության շնորհիվ, այսինքն՝ մի գումար, վոր լիովին ծածկում ե

բոլոր տեղական ու պետական հարկերը և ահագին վոր ե ազատում գյուղացիների տնտեսության բարելավման համար: Շատ պայծառ որինակներ ենք տեսնում մենք և վերջին տարիները, յերբ սպառողական կոռպերացիան պետության ոժանդակությամբ յուր հաստատուն, չափավոր գներով հաճախ մասնավոր առևտրականների կատաղի չարաշահության առաջն ե առել:

Այսպիսի արդյունք ե տվել կոռպերատիվ աշխատանքը այն տեղերում, ուր սպառողական կոռպերացիան ամուր վոտքի և կանգնել:

Ինչպես տեսնում ենք առաջ բերված որինակից, սպառողական կոռպերացիան՝ խոշոր խնայողություն անելու հնարավորություն տալով բնակչությանը, դրանով իսկ մեծ արտադրական նշանակություն և ստանում, վորովհետև այդ խնայողությամբ կարելի ե դառնում ձեռք բերել գյուղատնտեսական մեքենաներ, անսատուն և ընտիր սերմացու:

Այս ե հենց սպառողական կոռպերացիայի «արտադրական» մեծ շնչանակությունը:»

Անհրաժեշտ ե սակայն իսկույն նկատել, վոր չկան ուրիշ կոռպերատիվներ վորոնք նույնքան յենթակա լինելին մեռնելու վտանգին, վորքան սպառողակատիվ խանութները: Սպառողական խանութներն ամենաթույլ կոռպերատիվներն են: Յեվ թույլ են վոչ թե նրանց հիմունքը, վոր սահմանել են նոչելի վոստայնանկները. Նրանց թուլությունն առաջ ե գալիս նրանից, վոր սպառողական խանութի անդամները հաճախ մոռանում են իրենց սեպհական կոռպերատիվ շահերը և հավատարիմ չեն մնում կոռպերատիվի կանոններին:

Բացի սրանից՝ սպառողական խանութներն ավելի, քան ով ե իցե, ստիպված են լինում ծանր պայքար մղելու խանութպանների, մասր առևտրականների դեմ: Վորե և վոլոստում վարկային կամ յուղագործական ընկերություն բաց անելով մենք տեղական տնտեսության մեջ յեկամտի նոր աղբյուրներ ենք բաց անում, վոր առաջ չկար և վորից զանազան չափերով կարող են ոգտվել վոլոստի բոլոր բնակիչները: Շատերին յեկամուտ տալով մենք միենույն ժամանակ մեզ համար թշնամիներ չենք ստեղծում:

Այլ բան ե սպառողական կոռպերացիան: Սպառողական խանութը մի անդամից թշնամական հարաբերություններ ե սկսում տեղական խանութպանների հետ:

Սպառողական խանութի և խանութպահների մեջ կյանքի և մահու կոփի և բորբոքվում, և կոռպերացիան հաղթանակում և միայն այն ժամանակ, յերբ նրան հաջողվում և ասպարեզից միանգամայն դուրս հանել խանութպահներին:

Ուստի զարմանալի չե, վոր խանութպահները իրենց բոլոր ազգեցությունն ու իրենց բոլոր միջոցները գործ են զնում կոռպերատիվի գործին վնասելու և գյուղացիներին նրանից հեռացնելու համար, և հաճախ կոռպերացիայի գործը վնասվում և միայն այն պատճառով, վոր անդամներն իրենք վոչ թե իրենց խանութիցն են առուտուր անում, այլ մասնավոր խանութից:

Սակայն քանի սպառողական խանութի սնանկություն ել վոր տեսնելու լինի մարդ, յեթե պատճառները քննե, կը տեսնե, վոր կոռպերացիայի կանոնները, կոռպերատիվ հիմնարկությունների հիմունքները չեն մեղավոր, այլ ինքը կոռպերատորը, վոր բավկանաչափ գիտակցությամբ չե վերաբերվում հասարակական գործին և չի կատարում կոռպերացիայի կանոնները:

Ուստաստանում գեռ 60-ական թվականներին, գյուղացիների ազատությունից անմիջապես հետո, առաջին փորձերն արվեցին սպառողական կոռպերատիվներ հիմնելու, բայց նրանք հիմնվում եին քաղաքներում, բանվորների ու մանր պաշտոններության շրջաններում: Այսպես, որինակ, 1878 թ. Խարկովում մի մեծ սպառողական խանութ կար, վոր մինչև անդամ Արևմտյան Յեղրուպայի կոռպերատիվների հետ հարաբերություն ուներ, և այն խանութում անգլիական կոռպերատիվների մահուդ եր ծախսվում: Բայց ժամանակի ընթացքում, յերբ հասարակական վոգեվորության թափը նստեց, սպառողական կոռպերացիայի մասին սկսեցին մոռանալ, և միայն 1897 թվից, յերբ սպառողական կոռպերացիայի առաջին ուղեցույց կանոնադրությունը հրատարակվեց, սկսվում ե նրա զարգացման նոր շրջանը: Բայց մինչև սպառողական կոռպերացիան դանդաղ եր աճում, և միայն հեղափոխության ժամանակ արագ զարգացավ ու մի բացառիկ գորություն ստացավ:

Արդ՝ ի՞նչ կանոններ կան մեզանում կոռպերատիվների համար և ի՞նչպես պետք ե կոռպերատիվ խանութ հիմնել:

Պետք ե հավաքվեն մի քանի գյուղացի, վորոնք պարզ ըմբռնել են սպառողական կոռպերացիայի սգուտը և ցանկանում են

սպառողական ընկերություն հիմնել իրենց ու իրենց համագյուղացիների համար: Հիմնադիրները պետք ե կազմեն ու ընդունեն ընկերության կանոնադրությունը: Ուղեցույց կանոնադրություններ կարելի ե ստանալ ամեն մի կոռպերատիվ միությունից: Ստորագրած կանոնադրությունը սահմանված կարգով ուղարկում են տոմարագրելու, և ընկերությունն արդեն կարող ե յուր գործողություններն սկսել:

Նախորդ գլուխներում մենք բացագրեցինք սպառողական խանութի և առևտրական ձեռնարկության հիմնական տարրերությունները:

Տեսնենք, ի՞նչպես են արտահայտվում այդ տարրերությունները կանոնադրության մեջ:

Ավելի հասկանալի դարձնելու համար համեմատենք սպառողների կոռպերատիվ ընկերության կազմակերպությունը փայտական մասնավոր ընկերության կազմակերպության հետ, վոր միևնույն ապրանքների առևտուր և անում: Դիցուք թե, առևտուրի փող վաստակելու ցանկություն ունեցող մի շարք մարդիկ փող են վեր գալիս, իրենց բաժինները (փայերը) մտցնում են գործի մեջ և դրամագում կազմելով սկսում են առևտուր անել:

Փայերի թիվը փորոշված ու սահմանափակ ե լինում և ընկերներն սկսում են առևտուր անել ո վաստակ ունենալ և ել վոչ վոքի իրենց ընկերության մեջ չեն ընդունում, վորովհետեւ փայտաբերերի թիվն ավելանալով՝ նրանցից յուրաքանչօրի վաստակը կը սպակասի:

Իսկ սպառողական խանութի անդամների և փայերի թիվը սահմանափակված չե. ամեն մի աշխատավոր իրավունք ունի պահանջներ, վոր իրեն ընդունեն սպառողների միության մեջ, և վորքան անդամները շատ լինեն, այնքան սպառողական ընկերությունը զորել կը լինի: Այս և առաջին տարրերությունը:

Հետո՝ բոլոր մասնավոր ձեռնարկություններում ձայնի իրավունքը, ընկերության գործի ընթացքի վրա ազդելու իրավունքը միշտ համապատասխանում է փայտաբերին. յեթե մեկն ավելի փայտություն ունի առևտրական ընկերության գործերի վրա, քան մյոււր, նայելով թե ով ինչ դրամագում ունի գործի մեջ: Այլ բան ենք տեսնում կոռպերացիայի մեջ, վորտեղ ամեն մի անդամ, 10 ոտրի տված լինի թե 100, միայն մի ձայն ունի:

Սպառողների ընկերության փայերն ել մեծ չեն, սովորաբար 10 ոռություց վոչ պետք: Ուստի ամեն փոք կարող ե ընկերության անդամ դառնալ մանավանդ վոր փայերն ել կարելի և մաս-մաս վճարել: Սակայն շատ ցանկալի ե, վոր ով որ ունեուր ե ու կորող ե, վոչ թե մի փայ վճարե, այլ յերկու և ավելի, վորով ավելի կը զորանա ընկերությունը: Վաստակը բաշխվում ե, ինչպես արդեն գիտենք, վոչ թե փայերի այլ գնած ապրանքի քանակության համեմատ:

Մի խոսքով՝ առեւրական ընկերության մեջ տերը դրամագլուխն ե, վոր շահվում ե սպառողից, իսկ կոռապերացիայի մեջ տերն ինքը սպառողն ե, վոր միության շնորհիվ՝ ծառայեցնում ե դրամագլուխը հոգալու յուր, այսինքն՝ սպառողի կարիքները:

Անցնենք ընկերության կազմակերպությանը:  
Սպառողական կոռապերացիայի վերաբերյալ վերջին դեկտեմբերի համաձայն կոռապերացիային անդամագրվելը կամավոր ե և մատչելի բոլոր աշխատավորների համար:

Սպառողական ընկերության գործերը կառավարում ե բոլոր անդամների ընդհանուր ժողովը, իսկ վորանդ անդամների թիվը շատ մեծ ե՝ լիազորների ժողովը: Ժողովը վճռում ե բոլոր հիմնական խնդիրները և կատարելու համար ընտրում ե փարչություն, վոր կառավարում ե խանութի բոլոր գործերը: Վարչության գործունեությանը հետեւելու և վերահսկողության համար ընդհանուր ժողովը ընտրում ե հատուկ վերաստուգիչ հանձնաժողով՝ վոր հակում ե աշխատանքների կանոնավորության վրա: Վարչության պարտականությունը ե նախահաշիվ կազմել, շրջադիր վաճառքի գները նշանակել, վերջապես, հաշվետվությունն ու հաշվեմատյանները խնամքով վարել:

Ապրանքը վարչության նշանակած գներով վաճառելու համար ամեն սպառողական ընկերություն պատասխանատու գործակատար ե վարձում, վորի հետ մանրամասն պայմանագիր և կնքում այն մասին, թե ինչպես պետք ե ապրանքը պահպի, ինչպես պետք ե առուտություն կատարվի:

Փորձը ցույց ե տվել վոր գործի հաջողության համար անհրաժեշտ ե, վոր սպառողների ընկերությունն ունենա վոչ պակաս քան 100 անդամ, Յեթե անդամների թիվը դրանից պակաս

լինի, խանութը յուր ծախսը չի հանի. սովորաբար 200 անդամ յեղած գեպքում խանութը մոտավորապես 8—10 հազար ոռություն շրջանառություն ե ունենում և զրամագլուխը տարվա մեջ շրջանադարձություն ե ունենում մոտավորապես 10 անգամ:

Ուրեմն՝ 10 հազար ոռություն շրջանառություն ունեցող մի այդպիսի խանութ պետք ե ունենա վոչ պակաս քան 1000 ոռությունի զրամագլուխ: Ուրիշ խոսքով, յեթե սպառողների ընկերություն կազմակերպող գյուղացիները չեն կամենում, վոր նա շարունակ փողի կարոտ լինի ու պարտք մնա յուր մատակարարներին, նրանք պետք ե այդ հազար ոռություն հավաքեն վորպես ընկերաբաժին զրամագլուխ, և ամեն մի սպառող այնքան փայ պիտի տա, վոր ընկերությունը նրան ապրանք հասցնելու համար անհրաժեշտ զրամագլուխն ունենա: Յեթե յես ընկերությունից 200 ոռություն մթերքներ եմ գնում, վորոնց կեսն ընկերությունը ձեռք ե բերում կանխիկ զրամով, յես ընկերությանը տասը ոռությունի փայավճար պիտի տամ, յեթե զրամագլուխը տարվա մեջ տասն անգամ շրջանադարձություն ե անում:

Անհրաժեշտ զրամագլուխը հավաքելուց և պատասխանատու գործակատար գտնելուց հետո, վարչությունը պիտի հոգ տանե ապրանք ձեռք բերելու մասին:

Ապրանք գնելու համար սպառողական ընկերությունը վարչության անդամներից մեկին ե հանձնում «գնողի» պարտականությունները: Գնողն ապրանքների մեծ մասն ստանում ե կոռապերատիվ Միությունից քաղաքից (Ճոթեղեն, այսուր, թեյ, շաքար և այլն), բայց շատ բան, վոր տեղական արտադրություն ե, ավելի շահավետ ե համարում գնել հենց տեղումը (թթու կաղամբ, չորացրածունկի, միս, տնայնագործության արդյունքներ և այլն):

Բայց ինչ ապրանք պետք ե ձեռք բերել և ինչ քանակությամբ:

Այս հարցի պատասխանը տալիս են գնորդները: Պարզ ե, վոր սպառողական խարութն այն ապրանքները պետք ե ունենա, վոր խանութը հիմուղ սպառողին են հարկավոր և նրա առտնին գործածության առարկաներն են: Այս պատճառով քաղաքի սպառողական խանութի ապրանքն այն չի լինի, ինչ վոր գյուղի խանութինը, վորովհետև քաղաքացու պահանջներն այն չեն, ինչ վոր գյուղացուն ե: Քաղաքի բանվորական թաղերի խանութը

մի կարգի ապրանքների սոռուտուր կ'անե, իսկ քաղաքի ունեոր բնակիչների հիմնած սպառողական խանութը՝ ուրիշ կարգի։ Պոլտավյայի նահանգի գյուղական խանութը ալյուրի, ձափարի առուտուր գրեթե չի անի, վորովհետև անդամ գյուղացիներն իրենք այդ ունեն վորքան ասես, իսկ Մոսկվայի ու Վլադիմիրի նահանգների գյուղերում հացն ու ալյուրը շատ կարեոր ապրանք է, վորովհետև այնտեղ գյուղացիները ձմեռը հացի պակասություն են ունենում։

Համենայն դեպս, վարչությունը խանութում պետք ե ունենա այն հիմնական մթերքները, վորոնց պահանջն ունենում են միշտ խանութի անդամները։ Ի հարկե, գործի գրության համար ցանկալի ե, վոր ապրանքի տեսակները քիչ լինեն, բայց միենույն ժամանակը պետք չե մոռանալ, վոր մեր գյուղացու կոռոպերատիվ գիտակցությունը, դժբաղդաբար, գեռ թույլ ե, և մասնավոր խանութպահնը կարող ե նրան կոռպերատիվիցն հեռացնել՝ նրա ճաշակին ավելի հարմար ապրանքներով դեպի յուր խանութը գրավելով։ Ուստի և կոռպերատիվ խանութը քիչ թե շատ բազմատեսակ ապրանքներ պիտի պահե և այնպիսի ապրանքներ, վոր թեպետ վորոշ չափով շուայլության առարկաներ են, բայց այսու ամենայնիվ գյուղացիները յերբեմն գործ են ածում—նախշուն գավաթներ, հոտավետ սապոններ, թանկագին անուշեղեն ևայլն։

Ի՞նչ քանակությամբ պետք ե գնել ապրանքները։ Ապրանք պետք ե ունենալ պահանջի համեմատ այնպես, վոր միշտ պատրաստի ապրանք լինի խանութում, բայց չի կարելի շատ մեծ պաշար պատրաստել վորովհետև այդ դեպքում մեծ դրամագույն մնում առանց շրջանադարձության և վասա ե լինում ընկերությանը, վորի միջոցներն առանց այն ել նվազ են։

Յեթե ապրանքը արժան գնով հեշտ ձեռք բերելու ե, պետք ե պահել շատ փոքր քանակությամբ, իսկ յեթե դժվար ճարպող ապրանք ե և բերելու համար պետք ե հեռու տեղ գնալ, այդպիսի ապրանքը կամա-ակամա պետք ե գնել մեծ քանակությամբ։

Մեծ պաշար պետք ե պատրաստել և այնպիսի ապրանքների, վորոնց գները տարվա ընթացքում շատ են փոփոխվուա (խոտ, վարսակ և այլն)։ Այդպիսի բաները պետք ե գնել նրանց ամենաարժան ժամանակը։

Խանութը բերած մթերքները պետք ե տեղավորել խանութումն ու պահեստում։

Խանութը պետք ե լավ սարքավորված լինի։ Պետք ե ունենալ մաքուր ոգով մառան, նկուղ՝ շուտ փչացող մթերքների համար և ամեն տեսակ այլ պահեստատեղեր։ բուն խանութուս պետք ե լինի կշեռք, դալիսը, դրամարկղ և դարակներով պահարաներ՝ ապրանքների համար։ Ապրանքը դարակների վրա պետք ե տեղավորել վոչ թե ինչպես պատահի, այլ վորոշ հաշվով—պետք ե հետեւ, վրա ավելի բանուկ մթերքները, վոր փոքր քանակությամբ ու շուտ-շուտ են պահանջվում, միշտ գործակատարի ձեռի տակ լինեն, վորպեսզի նա ստիպված լինի խանութի այս անկյունը, այն անկյունը վազելու՝ բանուկ ապրանքները վերցնելու համար։ Ապրանքը պետք ե դասավորված լինի կարգին ու սիրուն՝ գնորդի վրա հաճելի տպավորություն անելու համար։ Խանութը պետք ե մաքուր պահի, պատերը զարդարված լինին կոռպերատիվ պլակատներով։

Ապրանքը խանութում տեղավորելուց հետո պետք ե գնահատել և ապա սկսել ծախել։

Դինը նշանակվում ե այսպես. վորոշում են ապրանքի կշեռք կամ թիվը, ուշադրություն են անում ապագայում չորանալուց պակասելը, կշռելիս ավելի տփածն ու կորուստները և վորոշում են վաճառելի ֆնտի, արշինի կամ հատի առքի գինը։ Հետո ավելացնում են ամեն տեսակ վերադիր ծախսերը՝ խանութը և ծառայողներ պահելու, դրամագիլի տոկոսները, յեթե ապրանքը պարտքով ե գնած, և այն վաստակը, վոր կամենում են ստանալ ապրանքից։

Յեթե բանուկ ապրանք ե, դրամագլուխն արագ ե շրջանադարձություն անում, այսոր գնածը վազը կամ մյուս որը ծախքում ե, ուստի և վերադիրը քիչ պետքի լինի։

Դիցուք թե հացի վրա, վորի վրա դրած փողն ամեն որ շրջանառություն ե անում, վերադիր ենք ավելացրել մի ոռություն յերկու կոպեկ։ յեթե տարվա մեջ հաշվենք յերկու հարյուր հիսուն առեսրի որ, այդ կ'անե 500% խառն վաստակ։

Իսկ յեթե ապրանքը բանուկ չե և շրջանառություն ե անում, դիցուք, տարվա մեջ յերկու անդամ (անուշանություններ, թուղթ և այլն), վերադիր ծախսերը շատ պետք ե

հաշվել: Յեթե գրամագլուխը տարին յերկու անգամ շրջանադարձություն անելու լինի և մենք մի ռուբլուն մինչև անգամ 10 կուպեկ վերադիր ավելացնենք, այդ կ'անե միային 20% խառն վաստակ, փորից դեռ պետք ե զուրս գանք խանութիւն ու ծառայողների ծախքը՝ զուտ վաստակը վորոշելու համար:

Բացի սրանից՝ մեծ վերադիր են ավելացնում շուտ փչացող և շուայլության առարկաների վրա:

Վերադիրն ավելացնում են, յեթե հաշիվ արած գինը՝ ձեռնոտու պայմաններով գնելու շնորհիվ, սովորական մանրածախսի գներից շատ պակաս ե լինում:

Գնահատված ապրանքներն սկսում են ծախել: Սակայն շատ անգամ հարկավոր ե լինում վաճառվող ապրանքները վերագնահատել: Բարձրացնում են գները, յեթե ապրանքի պակասություն և զգացվուս և շուկայումն ապրանքն սկսում ե թանգանալ: Պակասեցնում են գները, յեթե ապրանքը վորեւ ե պատճառով չի ծախվում և յերկուող կա, վոր ավելորդ բեռ պիտի դառնա ու զուր տեղ պիտի բռնե սպառողական ընկերության պահեստներում:

Առհասարակ սպառողական խանութում մնացած չծախվող ապրանքը գործին շատ և վասառում և յեթե այդպիսի ապրանք պատահում ե, ավելի լավ ե արժան գնով, մինչև անգամ վնասով ծախել, քան թե շրջանառության միջոցները փատացնել այդպիսի ապրանքի շնորհիվ:

Գործի համար մեծ նշանակություն ունեն վաճառքի կարգ ու կանոնը, սպառողի համար հարմար առևտութիւն ժամերը և այլ հանգամանքներ, վոր առաջին նվագ մանր բան են յերկուում: Յեթե այս բոլորը վարչությունն առանց ուշադրության թողնե, կարող ե խրտնեցնել անդամներին, վորոնք ավելի հարմար կը համարեն իրենց համար մասնավոր խանութից առևտուր անել:

Կոռպերատիվ առևտուրից սպացվող վաստակի բաշխման մասին մենք արդեն խոսել ենք բավականին: Մատնացույց անենք հիմա, վոր գնած ապրանքի համեմատ վաստակը անդամների միջն բաշխելու համար, վարչությունը ճիշտ պետք ե հաշիվ, թե անգամներիցն ով ինչ գումարի ապրանք ե գնել: Այդ գրի առնելու անհրաժեշտությունը բարդացնում ե հաշիվը և խանութիւնը գործակատների աշխատանքը ծանրացնում:

Կոռպերատիվների փորձը անդամների գնած ապրանքի հաշվառության յերեք յեղանակ և ճանաչում:

Առաջինը, վոր ամենապանդաղն ե, այդ այն ե, վոր բոլոր գնած ապրանքները գրվում են գործակատարի հատուկ մատյանում և ամեն մի անդամի գրքույկի մեջ:

Երրորդը, ավելի պարզ յեղանակն այն ե, վոր խանութիւնը գանձապահը ամեն մի գնորդից փողն սաանալիս նրա տված գումարի համեմատ առանձին մարկաներ ե տալիս: Բոլոր անդամների գնած ապրանքի քանակությունը վորոշվում ե տված մարկաների քանակությամբ, իսկ յուրաքանչյուր անդամ տարվա վերջերում ներկայացնում ե յուր ապրանք գնելիս ստացած բուլոր մարկաները, վորոնցով վորոշվում ե նրա գնած ապրանքների գումարը:

Յերրորդը յեղանակը, վոր շատ հարմար ե կոռպերատիվների համար, կոչվում է կանխավճարի յեղանակ: Ամեն մի գնորդ առաջուց տալիս ե խանութիւն վարող գումար և ստանում է չեկերի գրքույկ՝ զանազան գումարների տոմսակներով-չեկերով: Հետո ապրանք գնելիս նա վոչ թե փող ե վճարում, այլ այդ չեկերն ե տալիս: Կանխավճարի գումարը, չծախսած չեկերի արժեքը գուրս յեկած, գնած ապրանքների գումարն ե:

Տարեկան վաստակը պարզեցնեց հետո նրա մի մասը հանգում ե խանութիւն ու նրա սարքուկարգի շինուացման համար, իսկ մյուս մասը բաժանվում ե ընկերության անդամներին, բայց այդ բաշխումը կատարվում ե վոչ թե նրանց տված փայավճարների համեմատ, այլ խանութիւն գնած ապրանքի գումարի համեմատ: Դիցուք թե, հաշիվներիցն յերկուում ե, վոր ամեն 10 ոռւրու գնած ապրանքին 2 ոռւրի վաստակ ե ընկնում, իսկ տարվա ընթացքում դուք 50 ոռւրու ապրանք եք գնել, ուրեմն ստանում եք 10 ոռւրի, 100 ոռւրու ապրանք եք գնել—ստանում եք 20 ոռւրի: Այսպես ուրեմն՝ վաստակիցը դուք մասն եք ստանում վոչ վորպես ընկերությանը ձեր տված բաժնի դրամի ներկայացուցիչ, այլ վորպես սպառող:

Վաստակը բաժանելիս հաճախ մի հետաքրքրական հարց է ծագում: Սպառողական խանութները մեծ մասամբ ապրանք են

ծախում բոլոր ցանկացողներին: Այս պատճառով խանութից, բացի անդամներից, ապրանք են գնում և կողմանկի անձինք:

Սրանց վաճառած ապրանքից վաստակ և ստացվում: Հարց-ապա ի՞նչպես ե բաշխվում այդ վաստակը: Ի հարկե, վոչ անդամներն իրենց գնած ապրանքի համար վաստակից մաս չեն ստանա, հետևաբար աղասի վաճառքից ստացվող վաստակը մնում և հոգուտ ընկերության:

Բայց կարելի ե արդյոք ասել, թե ընկերությունը շահվում է կողմանկի սպառողներից: Կարծում ենք, վոր այդ չի կարելի ասել: Կանոնադրության համաձայն սպառողների ընկերության անդամ կարող ե դառնալ ամեն ցանկացող, և ընկերությունը պիտի ձգտի, վոր բոլոր շրջակա բնակչները ընկերության անդամ գրվին: Նրանց գրավելու համար այնպես պետք ե անել, վոր ընկերության անդամ գրվող ամեն վոք դրանից մի շոշափելի ոգուտ ունենա:

Յեթե առանց ընկերության անդամ լինելու ել կարելի լինել վաստակ ստանալ, ել ի՞նչ հաշիվ կը լիներ, վոր և իցե ընկերության անդամ գրվել—ինչո՞ւ փայտագնար տա, անդամագրության վճար տա, ինչո՞ւ հսկողություն ունենա, վարչության ու վերահսկիչ հանձնաժողովի մեջ մտնի, յեթե կոռպցրացիայից վաստակ կարող ե ունենալ և առանց անդամ լինելու: Այսպես ուրեմն, յեթե ազատ գնորդներից վոչ վոք վաստակից չի ոգուտ, այդ գիշավորապես նրա համար ե արվում, վոր աղասի գնորդներն ստիպված լինեն անդամագրվել ընկերությանը:

Իսկ կողմանկի գնորդներից ստացված վաստակը հաճախ հատկացվում է կուլտուր-լրաժական նպատակների համար և գործադրվում է կոռպերացիայի գաղափարները քարոզելու նպատակով, ուրիշ խոսքով՝ նոր անդամներ ե գրավում կոռպերացիայի մեջ:

Բոլորին ընդհանուր կոռպերատիվ գործին իրավես մասնակից դարձնելու այս ձգտումը կոռպերացիայի կարելոր առանձնատկություններից մեկն ե:

Յեթե զրամատերը վոր և առևտրական գործի բաժնետոմսեր ե գնում, նրա համար կարեռն այն ե, վոր այդ բաժնետոմսերին վորքան կարելի ե շատ յեկամուտ ստանա, իսկ ինքը գործը նրան կարող ե բոլորովին չնետաքրքրել: Նա կարող ե բնավ ոտք չդնել այն ձեռնարկությունը, վորի բաժնետոմսերն ունի, և մին-

չկ անգամ չիմանալ, թե վորտեղ և գործում այն ձեռնարկությունը:

Կոռպերացիայի մեջ բանն ուրիշ ե. այնտեղ հասարակական գործ ե և պետք ե, վոր այդ գործի վրա հասարակական հսկողություն լինի, և դրա շնորհիվ սպառողական խանութի ամեն մի անդամ բարոյապես պարտական ե հետեւել և մասնակցել գործին. վատ անդամ ե նա, ով վոր չի հետաքրքրվում խանութի գործերով. ամեն մի զանցառություն նրան պիտի հետաքրքրե, ամեն բանի պետք ե վերահասու լինի և այս նպատակով հաճախ սպառողական խանութում անդամների հերթապահություն ե սահմանվում: Այսպիսի մշտական հսկողությունն անհրաժեշտ ե նրա համար, վոր հասարակական գործը ամենքի ոգտին ծառայե:

Մթերքների ամեն տեսակ կեղծարարություն, խառնուրդներ անելու ու փչացնելու կողմից ել կոռպերացիան այլ պայմանների մեջ ե, քան մասնավոր առևտուրը: Շատ խանութպանների համար ձեռնատու և իրենց մթերքները փչացնելը—ալյուրի հետ ավագ խառնելը, կաթի հետ ջուր և այլն, վորովհետեւ դրանից նրանք շահվում են: Իսկ սպառողական խանութի անդամների համար այդ չի կարող ձեռնատու լինել վորովհետեւ վաստակն այստեղ փայերի քանակության համեմատ չի բաշխվում, այլ տարվա ընթացքում գնած ապրանքի: Վոչ վոք չի կամենա ավազախառն ու ջրախառն մթերքներ գործածել միայն թե ավելի վաստակ ունենա: Այսպես ուրեմն հենց կոռպերատիվ աշխատանքի եռթյունն անհնարին ե դարձնում վորեւ և կեղծարարություն, վորովհետեւ նրանից կը առևտեն բոլոր սպառողները, վորոնք հենց գործի տերն են:

Բացի դրանից՝ ամեն մի վաճառական, յեթե ուղիղ ե հասկանում յուր գործը և ցանկանում ե ավելի վաստակ ունենալ, պետք ե գաղանի պահի յուր գնած ապրանքների գները, նրանց տված շահն ավելացնելու համար մաս-մաս կը ռեկն ու խառնուրդներ անելը, վորովհետեւ վաստակ ստանալու համար այդ բոլորն անհրաժեշտ ե անել այնպիս, վոր դրանցից չկարողանան ոգտվել յուր մրցակիցները—հարկան խանութպանները:

Իսկ կոռպերատիվ խանութը գաղտնի բան պահելու կարիք չունի, վորովհետեւ մրցակիցներ չունի:

Նրա անդամ գնորդները, յեթե ուղիղ են հասկանում գործը, չեն կարող վոր և ե զբավիչ բանից պայթակղվելով մասնավոր խանութանի գնորդ դառնալ:

Յեթե նրանց խանութը վատ ե, գործը կարգի չի ընկնում, նրանք պետք ե բարեփոխեն այն և վոչ թե փախչեն նրանից՝ հարեան խանութաններից առևտուր անելու համար:

Ուստի, յեթե մասնավոր առևտրականներն ոգտակար տեղեկություններն աշխատում են պահել իրենց համար, այստեղ, կոռպերացիայում, մի խանութում ստացված ամեն լավ բոլոր մնացյալ խանութների սեպհականություն և դառնում և այդպիսով ամեն ոգտակար ու իսկապես լավ բանը լայն չափերով տարածվում է:

Վերջին ժամանակը շատ հաճախ, շրջանառությունը խոշորացնելու և վերադիր ծախսերը պակասեցնելու նպատակով, կոռպերատոր սպառողները վոչ թե փոքրիկ, միայն մեկ կամ յերկու գյուղի կարիքների համար, գյուղական խանութներ են բաց անում, այլ իրենց ընկերության մեջ միացնում են մի քանի տասնյակ գյուղերի բնակչությունը և նրանց կարիքները հոգալու համար վոչ թե մեկ, այլ միևնույն սպառողական ընկերության մի շարք խանութներ են բաց անում: Սպառողների այդպիսի խոշոր միությունները փոքրերից տարբերելու համար բազմա իւանութ են անվանում:

Զնայելով, վոր վերը նկարագրված փոքր սպառողական ընկերությունը և մանավանդ՝ բազմախանութ ընկերությունը, յուր շրջանառությամբ շատ և գիրազանցում գյուղացու ընտանիքի տնտեսական շրջանառությունից, նաև մանր առևտրականներին ասպարեզից հեռացնելով հանդերձ, այնու ամենայնիվ չի կարողանում բոլոր ապրանքներն առաջին ձեռքերից գնել մեծ քանակությամբ: Աւրիշ խոսքով՝ փոքր խանութը չի հասնում սպառողական կոռպերացիայի հիմնական նպատակին, այն ե՝ սպառողի և արտադրողի միջից միջնորդներին հեռացնելը: Այս պատճառով գյուղական մանր սպառողական խանութներն իրենց շրջանառությունը խոշորացնելու համար միանում, միություններ են կազմում, վորով հնարավորություն են ստանում շատ տասնյակ ու հարյուրավոր հազարների գնումներ անելու:

ԽՍՀ Միության մեջ կոռպերատիվների այսպիսի միություն-

ներ հիմա գոյություն ունեն գրեթե ամեն մի շրջանում: այդ միություններն ել միասին նահանգական միություններ են կազմում և ամբողջ ուսական սպառողական կոռպերացիան միացնելով՝ կազմում են Սպառողական Ընկերությունների Համառուտական կենտրոնական Միություն—ՅԵՆ տրոսոյուց, վոր գոնվում և Մուկվայում և յուր շրջանառությամբ մի ահազին կազմակերպություն ե:

Այս միությունը, վոր հարյուրավոր միլիոնների շրջանառություն ունի, այն տեղը հասավ, վոր վոչ միայն բոլոր ապրանքներն առաջին ձեռքերից ե գնում, այլ և ունի սեպհական շատ գործարաններ ու արհեստանոցներ և շատ բան ինքն և մթերում: Սեպհական կոռպերատիվ գործարանային արտադրությունը, վորի մասին յերազում են Ռոշդելի փոստայնանկները և վոր վազուց են ստեղծել Անգլիայի սպառողները, հեղախոխությունից հետո սկսում և արագ զարգանալ և մեզանում, ԽՍՀ Միության մեջ:

Ցենտրոսոյուղը, ինչպես վոր անվանում են նրան կրծատ, յուր անդամներին—տեղական միություններին ու կոռպերատիվներին ոգնում ե վոչ միայն ապրանքներ գնելու գործում, այլ և տեղական կոռպերատիվ աշխատանքի ղեկավարության գործում: Միությունն ունի հատուկ հրահանդչական բաժին, վորի անդամներն ուսումնասիրում են կոռպերատիվ խնդիրները, այցելում են տեղական կոռպերատիվ միությունները, ոգնում են հաշվապահության գործում և ցույց են տալիս նրանց սխալները: Մյուս կողմից Ցենտրոսոյուղի մի բաժինն ել սպառողական կոռպերացիայի գաղափարները տարածելով ե զբաղվում: Միությունը մի շարք գրքեր, որացուցներ ու բրոյարդներ ե հրատարակում կոռպերացիայի խնդիրների վերաբերյալ և, վերջապես, միշտ պարբերական հանդեսներ ու լրագրներ ե հրատարակում:

Ցենտրոսոյուղը մանում ե միջազգային կոռպերատիվ միությունների մեջ և խորհրդային կոռպերացիայի ներկայացուցիչն և հանդիսանում միջազգային կոռպերատիվ համագումարներում:

Այս սպառողական կոռպերացիայի առորյա սովորական աշխատանքն եւ Բայց այս առաջին նվագ անտեսանելի փոքրիկ գործը կատարելով հանդերձ, մեր գյուղական կոռպերատորները

չպետք ե մոռանան, վոր իրենք գտնվում-են առևտրական կապի-  
տալիզմի դեմ մղվող պայքարի գյուղական ճակատի առաջին դիր-  
քերում։ Նրանց ամենորյա աշխատանքի հաջողությունիցն ե  
կախված հաղթությունն այդ ճակատում, և այդ հաղթությունը  
պետք ե և կարելի ե ձեռք բերել գլխավորապես վոչ թե մասնա-  
վոր խանութպանին արգելելով կամ նրա դեմ վարչական հալա-  
ծանք հարուցանելով, այլ միայն կոռպերատիվ կազմակերպու-  
թյան ուժովն ու ապրանքի շրջանառությունը գյուղումն ավելի  
լավ անելով, քան այդ անում են մասնատվոր ձեռնարկողները։

#### Գ Լ Ո Ւ Խ Ա Վ Ա Ր Կ Ա Յ Ի Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ.

Մեր նկարագրած պատառվական ընկերությունից շատ ավելի  
մեծ նշանակություն ունեն մեր գյուղի համար գյուղատնտեսա-  
կան արտադրական կոռպերատիվները, վորովհետև հենց այդ  
կոռպերատիվներն են, վոր կազմակերպում են հողագործական  
արտադրությունը և նպաստում են այն բանին, վոր այնտեղ,  
ուր հիմա մի հասկ ե բուսնում, մոտիկ ապագայում յերկուսը բուս-  
նի։ Այս և նրանց համաժողովրդական, պետական նշանակու-  
թյունը, և հենց այդ կոռպերատիվներն ունենք մենք՝ ի նկատի,  
յերբ խոսում ենք մեր գյուղատնտեսության վերակազմության  
մասին՝ խոշոր արտադրության և գիտական կազմակերպության  
հիմունքներով։ Գյուղատնտեսական կոռպերացիայի այս նշանա-  
կությունն ստիպում է մեզ կանգ առնել նրա նկարագրության  
վրա առանձին ուշադրությամբ։

Գյուղատնտեսական կոռպերատիվի հիմնական ըջիջը ԽՍՀ  
Միության մեջ գյուղատնտեսական ընկերությունն ե, վորի  
գործունեության շրջանը սովորաբար մի վոլոստից ավելի չե։

Գյուղատնտեսական ընկերության նպաստակն ե ոգնել գյու-  
ղացուն ամենից առաջ, վոր կարող նաև կոռպերատիվ հիմունք-  
ներով։

1, գնել գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ, հան-  
քային պարարտանյութեր, սերմացու և արտադրության այլ մի-  
ջոցներ։

2, վաճառահանել տնտեսության այն մթերքները, վոր ար-  
տադրվում են վորպես ապրանք՝ վաճառելու համար։

3, արժան վարկ կազմակերպել արտադրական նպաստակների  
համար։

Բացի այս հիմնական կոռպերատիվ ձեռնարկություններից՝  
գյուղատնտեսական ընկերությունը սովորաբար կազմակերպում

և զործիքներ նորոգելու արհեստանոցներ, զործիքներ վարձով տալու և սերմացու մաքրելու կայաններ, սերմնաբաններ, աղնվացեղ անասունների բուծարաններ, փորձագաղտեր ու ցուցադաշտեր և առնասարակ ձգտում և կոսպերատիվ հիմունքներով հոգալու գյուղական տնտեսությունների կարիքները—զորոնց համար, տեխնիքական պայմանների համեմատ, առանձին կազմակերպություններ չեն պահանջում—զործունեության ավելի փոքր ըլլրջանով:

Կ'աշխատենք քննել զյուղատնտեսական ընկերության զործունեության յուրաքանչյուր ճյուղն առանձին:

Մեր նկարագրությունը կ'սկսենք գյուղացիական տնտեսությունների համար արտադրության միջոցներ հայթայթելուց: Այս զործառնության տմենապարզ ձևն այն է, զոր գյուղացիները միասին գնում են իրենց տնտեսության համար անհրաժեշտ պաշարեղենն ու զործիքները:

Ռբինակ՝ մոտենում ե վուշ (կտավահատ) ցանելու ժամանակը: Գյուղացիները փորձով զիտեն, զոր իրենց սերմացուն շատ ավելի վասր բերք և տալիս, քան Պակովի զուտ սերմը, ուստի նրանք ընկերովի փող են հավաքում և իրենց լիազորի ձեռքով կամ կոոպերատիվ միության միջոցով Պակովի նահանգի փորեկ գյուղում տեղն ու տեղը գնում են մի վագոն ընտիր, առողջ և մաքուր վուշի սերմ և գնածն իրար մեջ բաժանելով բոլոր վերադիր ծախսերը բաշխում են փթի հաշվով:

Խոտնաձի ժամանակ ել ճիշտ այսպես գյուղացիները խմբովին կարող են վազորոք հարկավոր քանակությամբ գերանդրի գնել ուղղակի զործարանից.

Յերեմին ընկերությունն առաջուց չի փող հանգանակում, այլ միայն կանխավճարներ և առնում անդամներից, ապրանքն ստանում և վաճառողիցը ապառիկ՝ մի քանի ամիս ժամանակով և անդամների հետ հաշվի և տեսնում արդեն պատվիրած զործիքներն ու պաշարեղենը նրանց հանձնելուց հետո:

Յերբ ընկերության զործառնություններն ընդուրածակվում են, շրջանառությունը մեծանում և ինքն ընկերությունը՝ փայլագարներ հավաքելով և յուր կատարած գնումներից մասն հանելով՝ քիչ թե շատ աշքի ընկնող ընկերական գրամագլուխ և ձեռք բերում, նա այլ ևս պատվերներ կատարելով չի բավականա-

նում, այլ գյուղատնտեսական զործիքների ու մեքենաների, պարարտանյութերի, սերմացի և անասունների կերի մշտական պահեստ և բաց անում և այնաև պահում և մշտական վաճառքի համար այն բոլորն, ինչ վոր սովորաբար հարկավոր և լինում գյուղացու անտեսության համար:

Այսպիսի գյուղատնտեսական պահեստում, յեթե այն բացվում և կոոպերատիվ հիմունքներով, զործի կազմակերպության սկզբունքները նույն մոշտելի ուսհվիրանների սկզբունքները պիտի լինին, ինչ վոր մենք ցույց ավենք սպասողական կոոպերացիայի մեջ:

Ուրիշ խոսքով՝ ապրանք գնող կոոպերատիվը պիտի վաճառե շուկայի միջին գներով, ստացվող վաստակը տարվա վերջում պիտի մասնատը յուր անդամներին նրանց գնած ապրանքի համեմատ, վաստակի մի մասիցն ստեղծե ընկերական կոոպերատիվ դրամագլուխներ կամ նրանով ընկերական գյուղատնտեսական կարիքներն հոգա և վերջապես անդամներին ապառիկ ապրանք:

Մենք այսքան մանրամատն նկարագրեցինք սպասողական ընկերության զործունեությունը, վոր կարիք չկա այն կրկնելու գնող կոոպերացիայի վերաբերմամբ: Գյուղատնտեսական պահեստը կազմակերպվում և սպասողական խանութի նման, ու հարկե, այն տարբերություններով, վոր բղխում են ուրիշ պահելու տեղ և ուրիշ սարքուկարգ պահանջող ապրանքի բնույթից:

Սակայն գյուղացիներին արտադրության միջոցներ հայթայթելու զործում գյուղատնտեսական կոոպերացիայի զործունեությունը չի կարող սահմանափակվել սիայն զործիքները ու պաշարեղենն գնելով:

Կոոպերացիան չպետք և բավականանա խանութպահն ու տուեարականին փոխարինելով, այլ աչքի առաջ ունենալով յուր սոցիալ-տնտեսական նպատակները՝ պարտական և ավելի խորանակ գյուղացու անտեսության արտադրության միջոցների կազմակերպության մեջ:

Նախ և առաջ կոոպերացիան գյուղացուն գյուղատնտեսական մեքենա տալուց հետո, պիտք և ապագայում նրա պահեստի մասերն ունենալու և նորոգելու զործն ապահովի: Մերենաներ հայթայթելու զործի անհրաժեշտ լրացումը պիտի նորոգելու

արհեստանոցը կամ մինչև անգամ մի շաբք արհեստանացներ, վոր պետք և բացվին ընկերության գործունեության շրջանի զանազան վայրերում։ Վերջին տարիներում կատարված նորոգություն գարնային աշխատանքների փորձը ցուցց է առլիս մեզ, վոր միանգամայն հնարավոր է տարվա վորոշ յեղանակներում նորոգություն անելու համար ոգտագործել վոչ սեպհական արհեստանոցները, այլև համաձայնության գալ շրջանի բոլոր մեքենագործական արհեստանոցների հետ—գործարանների, յերկաթուղիների և այլ արհեստանոցների—ինվենտարն արագ նորոգելու գործն ապահովելու համար։

Բացի անհատական գործածության ինվենտարի նորոգությունից, զյուղատնտեսական ընկերությունը կարող է կազմակերպել նաև խոշոր զյուղատնտեսական մեքենաներից միասին ոգտվելու գործը, այն է՝ կալսելու մեքենաներից, հողի խորավարներից, բազմախոփ գութաններից, Ռանդալի փոցիներից և վերջապես, տրակտորներից։

Այս միասնական ոգտագործումը կարելի է կազմակերպել յերեք ձևով։

1. Գյուղատնտեսական ընկերությունը կարող է վարձակայաններ բաց անել յուր գործունեության շրջանի զանազան վայրերում։

2. Կարելի է քարոզել և կազմակերպել մանր ընկերություններ, վրոնք կարող են միացնել մեյերկու տասնյակ տնտեսություն և ունենալ մի քանի կարմոր մեքենա, վոր ամեն մի տնտեսություն առանձին չի կարող ձեռք բերել և ոգտագործել։

3. Կարելի է կազմակերպել հողի միասնական մշակություն և միասնական հունձ տրակտորների և զյուղատնտեսական բարդ մեքենաների ոգնությամբ։

Ընկերության վարձակայանները կրկնակի նպատակ պիտի ունենան, մի կողմից քարոզել—փորձանական ծանոթությամբ—անդամների շրջանում կատարելագործված մեքենաների և գործիքների գործածությունը, իսկ մյուս կողմից՝ հնարավորություն տալ մանր անտեսություններին բանեցնելու այնպիսի մեքենաներ, վոր իրենց ծախսը կարող են հանել մեծ տնտեսություններում։ Վերջին աշխատանքը, յերբ վոր կոոպերատիվ շար-

ժումը զարգանա, կարելի է փոխանցել մեքենաներ ձեռք բերող մանր ընկերությունների, վոր պետք և հիմնվին գյուղերում, վորովհետեւ ամեն մեքենա պետք է մոտ լինի այն դաշտերին, վոր տեղ վոր բանելու և։

Իսկ զյուղատնտեսական ընկերությունը այդ մանր կոոպերատիվների վերաբերմամբ պետք է միության դեր կատարել և յուր վարձակայաններում այնպիսի մեքենաներ պահե, վոր չեն կարող ոգտագործել մեքենաների մանր կոոպերատիվներում՝ իրենց գործածությունը հազվագեպ լինելու պատճառով, այն է՝ ձիմ կտրողներ, հողի խորավարներ, խոտհարքների փոցիներ, ծառի արմատահամններ և հողի բարելավման մեքենաներ։

Վերջապես արտադրության միջոցների կոոպերատիվ կազմակերպությունը կարող է ավելի և լիակատար բնույթի ստանալ և ինվենտարի միասնական ոգտագործությունը դարձնել հողի միասնական մշակություն, ուրիշ խոսքով՝ ընկերության անդամների բոլոր վարելու հողերը միացնել և միասին մշակել տալ բարդ մեքենաների և տրակտորների ոգնությամբ։

Հողաշատ և հացարույսների թույլ տնտեսության շրջաններում դաշտերի մշտկության այս յեղանակը մեծ ապագա ունի և պետք է կարծել վոր կը տարածվի ընդպարձակ չափերով։

Մենք կանգ չենք տանում արտադրության միջոցները հստարակական գարձնելու մի ավելի լիակատար յեղանակի՝ զյուղատնտեսական կոմմունների և արտիկների վրա, վորովհետեւ մեր հողային քաղաքականության այս մեծ խնդրին նվիրված են հաստակ գառընթացքներ ու գրքեր, և այս խոնդրն ինքը՝ շատ կողմերից ԽՍՀՄ հողային քաղաքականության մի մասը լինելով, ավելի լայն և և մեր բնարանի սահմաններից զուրած։

Նույն աշխատանքը, ինչ վոր պիտի կատարվի ինվենտարի վերաբերմամբ, ընկերությունը պետք է կատարի սերմացուի գործը կազմակերպելու ասպարիկում։

Մերմացուն ազնվացնելու գործում զյուղատնտեսական կոոպերացիան յերեք նպատակի հետամուտ պիտի լինի—պայքար՝ սերմացվի կեղտուության դեմ, զյուղացիներին առաջնակարգ սերմացվի մատակարարելն ու հատզետեւ թարմացնելն և, վերջապես, հին տեսակները բարելավելն ու նորերն առաջ բերելը։ Յեզ

այս յերեք խնդիրն ել պետք և լուծել միանգամից խոշոր չափերով, վորովհետեւ այդ հենց նրանց եռթյունն ե պահանջում:

Արտերի քաղը կոխելու առաջն առնելու համար, բացի զյուղացիներին գնովի սերմացու հայթայթելուց, պետք և զյուղացիների բոլոր սերմացուն մաքրել ընկերության կազմակերպած հասուլ սերմանագատիչ կայաններում:

Մաքուր սերմ ցանելու ոգուտը լավ հասկանալով՝ զյուղացիները մեծ սիրով իրենց սերմացուն տանում են սերմացիչ կայանները, վորտեղ կան տեսակների բաժանող, ընտրող, զյուղուր հանող և այլ մեքենաներ:

Գյուղացիների սերմերի, մանավանդ վուշի կեղաստությունը շատ անգամ 15 և 20 օ-ի և հասնում և նրանց մաքրելը շատ մեծ ոգուտ և տալիս տնտեսությանը: Բայց անհրաժեշտ ե բարոր սերմանացիչ կայաններում քարոզելը իրենց սերմերով հոգը յերեմն բոլորին ապականող խոտերի գեմ կռվելու մասին և այլն:

Սերմացուի գործի կազմակերպության յերկրորդ խնդիրը—տնտեսություններին մշտապես առաջնակարգ սերմացու մատակարարելը—ավելի կարենը միջոց և գառնում և ժամանակին իսպառ պիտի գուրս մղի զյուղացիների տանու սերմացուն, վոր զուտ տեսակների սերմ չի լինում, խառն և լինում և շարունակ փոխվում և գեպի վատը:

Ապագայում սերմացուի գործը մի ամրող շարք բույսերի վերաբերմամբ այնպես պետք և կազմակերպի, վոր սերմացուն պատրաստեն հատուկ սերմարուծական տնտեսություններ՝ զուտ տեսակների արտադրության առանձին պայմաններով, և այդ տնտեսությունները պիտի լինին ամրող հողագործության համար սերմացու մատակարարողը: Այդպիսի տնտեսություններ կազմակերպելը, սերմերի զանազան տեսակները փորձելը և ընտրությամբ նոր տեսակներ առաջ բերելը զյուղատնտեսական կոռուպտիչ յերրորդ անելիքն և սերմացուի գործում:

Սակայն անհրաժեշտ ե նկատել վոր ներկայումս, յերբ ԽԱՀՄ մի շաբթ ըրջաններում գեռ շատ պակաս և ցանք լինում, շատ բույսերի մշակությունը կրճատված և սերմացու ըմբնելու պատճառով և անբերությունը պարբերական յերեւյթ և,—այս պայմաններում հենց կարիք յեղած տեղերը մեծ քանակությամբ

սերմացու հասցնելը զյուղատնտեսական կոոպերացիայի առաջին անելիքն և հանդիսանում:

Գյուղատնտեսական ընկերությունը սերմացուի և մեքենաների գործի նման կարող և կազմակերպել նաև սլարարտանյութեր, վասատուների գեմ մաքառելու միջոցներ և այլն՝ հայթայթելու գործը:

Կոոպերատիվ հայթայթման հիշյալ գործառնությունները քննության առնելով անհրաժեշտ և միշտ ի նկատի ունենալ վոր բացի գնումներն արժան նստացնելուց՝ այդ գործառնությունները շատ ավելի լայն նպատակ ունին, այն և հողագործական անտեսության արտադրության միջոցների վորքան կարելի և կատարյալ կազմակերպությունն և այն՝ մասամասական չափերով ու հասարակական ձևերով: Սրանով և արբերվում գնման կոոպերացիան սպառողականից, վոր ագրոնոմիական նպատակների հետաձևությունը չի լինում:

Գյուղատնտեսության արտադրության միջոցների կազմակերպության կոոպերատիվ աշխատանքը՝ արեցարքի համառությամբ յուր ծրագիրը գործադրելով, բացառիկ հետանկարներ և բաց անում և հինգ կամ տաս տարվա ընթացքում կարող և զյուղից վերացնել հետամնաց գործիքները, շինություններն ու սերմերը և բոլորովին փոխարինել տեխնիկալու լովագոյններով, վորոնցից բարդ և խոշոր մեքենաների և շինությունների մեծ մասը թողնել հասարակական սպառողման համար:

Այս են զյուղատնտեսական կոոպերացիայի անելիքները հայթայթման առաջարիզում: Ավելի մեծ են ու կարևոր նրա անելիքները զյուղատնտեսական մթերքների վաճառահանության առաջարիզում: Ավելին ի նկատի ունենալով, վոր վաճառահանության առաջարիզում բացի զյուղատնտեսական ընկերություններից՝ մասնակցում են նաև ուրիշ հատուկ կոոպերատիվներ, մենք անհրաժեշտ ենք հոմարում առանձնացնել վաճառահանության կոոպերացիան և քննությունների պլանում:

Ուստի այսուհետեւ զյուղատնտեսական ընկերության գործունեության մասին խոսելիս՝ մենք պիտի վորապես կանուգ կառանք մանր վարկի վերաբերյալ գործառնությունների վրա, վոր ներկայումս նրա զորունակության ամենակարենոր ճյուղն է:

Մենք հիմք ունենք կոոպերատիվ վարկի վերականգնումը

Համարելու մեր հողագործության զարգացման համար կարևորագույն ինդիքներից մեկը:

Գյուղացու տնտեսության սարքուկարգը պատերազմի ու  
հեղափոխության ժամանակ խիստ քայլքայվել է—պակասում են  
ձի ու խոշոր անսպառներ, շատ շրջաններում վազնչացած են վոչ-  
խարի հոտերը, շատ են քչացել և խողերը, տեղ-տեղ ինվինտարի  
մեծ պակասություն կա: Բայց մինչև անգամ յիշե գյուղացու  
տնտեսության արտադրության միջոցները հիմա նույնը լինեին,  
ինչ վոր պատերազմից տուած եր, մենք գարձյալ բավարար չենք  
համարի, վորովհետեւ մեր նպատակը չե մեր հին յեռադաշտ հողա-  
գործությունը վերականգնել այլ նոր հողագործություն ստեղծել  
նոր տեխնիկայի և կարգակերպության հիմունքներով: Իսկ այդ  
անսպառնեն ամեն մի քայլը նորանոր ծախքեր և պահանջում:  
Ներկայումս մենք մի շաբաթ խոշոր ազգութիւնական բարեկոփոխու-  
թյուններ ենք ծրագրում: Անհրաժեշտ ե պարզ պատկերացնել,  
վոր այդ բարեկոփոխություններից տեսն մեկը նախ և տուած նոր  
ծախքեր և պահանջում:

Գյուղացու տնտեսությունը, զոր թույլ և դեսես, ներկայումս չի կարող յուր աղքատիկ յեկամուտներից այդ միջոցները խնայել և զոշ մի աղբույր չունի այգավիսի միջոցներ ստանալու համար, ուստի այդ կարեքն հոգալու մի հնարավորություն կամ միայն, այդ՝ զբահ ոգնությունն է: Հոգագործության արտադրությունը զարգացնելու համար վարկ և հարկավոր, իսկ վարկային գործունեության բազմամյա փորձը ցույց է տալիս, զոր այդ վարկը կարելի և կազմակերպել գյուղում Բայց այսինքն սկզբունքների ճիման վրա, փորձնց մենք արդեն ծանոթացնեած:

Վարկի նշանակությունը զարգացող հոգագործական յերկրի համար այնքան մեծ է, վոր, որինակի համար, պատերազմից առաջ թուաստանում վարկային կոռագերացիան գյուղական կոռագերացիայի ամենասպլիան վոր ճյուղն էր, և բոլոր մշտական կոռագերատիվ գործառնությունները վարկային կոռագերատիվները կատարում եին վորպես մի լրացուցիչ աշխատանք:

Ծնորժիվ այս համգամանքի, փոր մինչև 1924 թ. հաստատուն դրամական միավոր չկար, զյուղատնտեսական կոոպերացիայի վարկային գործառնությունը ներկայումս սպառնային պետակի մեջ է, և հիմնական կոոպերատիվ ցանցը բազկացած է բնագ-

Հանոււր զյուղատնտեսական և վոչ հատկապիս վարլիգին ընկերություններից: Սակայն այդ բնավ չի նվազեցնում կոռոպերատիվ վարկի նշանակությունը: Գյուղատնտեսական ընկերությունը կանոնադրության համաձայն վարկային գործառնություններ կարող է անել, և առավելույն չկա, վոր առաջիկա աարիներում կոռոպերատիվ վարկը առաջին տեղերից մեկը կը դրավի կոռոպերատիվ գործառներության ձյուղերի մեջ:

Սրա համեմատ կաշխատենք ըստ կարելվույն մանրամասն ծանոթանալ կոռպիրատիվ վարկի տնտեսական հիմունքներին և նրա կազմակերպությանը:

Ուայֆայլենի հիմնական ուղղունքի համաձայն կոռպերտունիվ վարկն ամենից առաջ արտադրական վարկ է:

Պարզենք, թե այս ինչ և նշանակում մեր գյուղի պայմաններում։ Արտադրական փարկ ասելով մենք այն ենք հասկանում, վոր կոռպէրատիվից փոխառվություն ստացող գյուղացին ստացած գումարը ծախսում և վոչ թե մուշտակ կամ թեյ ու շաքար զնելու վրա, այլ տնտեսական շրջանառության և այնպիսի շրջանառության, վորի յեկամուտից կարելի ե' վերադարձնել փոխառվությունը յուր առկոսներով, և վաստակ ունենալ տնտեսության համար։

Եթե քանի որինակով կարելի է պարզաբանել այս միտքը:

Դիցուք թե գյուղացին վարսակի սերմ չունի և փող եւ չունի գնելու համար: Նա 20 սուբլի փոխ և առնում, 40 փութ վարսակ և գնում և ցանում է: Աշնանը 180 փութ բերք և ստանում, ծախում և 90 սուբլով փորից հեշտությամբ յուր 20 սուբլի պարտքն և տալիս և 2 սուբլի ել տոկոս, իրեն մնում է 68 սուբլի բերք յուր աշխատանքի վարձ և այլ ծախքերի համար: Այս գեղաքում փոխատվությունը միանգամայն ապահովված եր սպասվող բերքովն ու հեշտությամբ վերադարձվեց այդ բերքը վաճառելով:

Վերցնենք յերկրորդ սրբնակը: Շատ լավ բերքի տարին գյուղացին 400 փթի փոխարեն 600 փութ խոտ և հնձում: Յերկու գլուխ անասուն պահելու համար նրան 400 փութը հերիք է, իսկ ավելորդ 200 փութը ծախելը ձեռնտու չե, զորովհետեւ լավ բերքի շնորհիվ խոտի գինն ընկել և մինչև 15 կոպ. փութը և հնձելու ծախան ել չի հանում: Գյուղացին 100 ոռորդու փոխառու-

թյուն և անում և այդ փողովը մի կով ել և զնում աշնանը ծնած: Զմեռվա ընթացքում կովն ուսում և այդ 200 փութ խուը և 80 վեղրո կաթ և սալիս նրան: Գյուղացին կաթը տալիս և յուղագրծական ընկերությանը վեղրոն: 1 սուբը 20 կոպեկով և ստանում և ընդամենը 96 սուբի: Գարնանը կովը ծախում և գարձյալ 100 սուբով, վճարում և յուր պարաքն ու 10 ռ. տու կոս և իրեն մնում է 86 ռ. խոտի գինն ու յուր աշխատանքի վարձը: Յեթե աշնանը խուը նա ծախած լիներ 15 կոպեկով, պիտի ստանար ընդամենը 30 սուբի: Իսկ փոխառությունն անելով և խելացի շրջաբերության դնելով յուր ստացած փողը, նա վոչ միայն հեշտությամբ պարտքն և թափում, այլ և 56 սուբով յուր յեկամոււն և ավելացնում:

Այս որինակում փոխառությունն առանովված և զնած կովի արժեքով, վորը ծախելով միշտ կարող և պարտքը թափել խոկ փոխառության համար տոկոս տալը հիմնալորված և նրանով վոր միանգամայն ուղիղ և հաշված խոտի արժան զնի և կոռպերատիվ յուղագրծությունից ստացած ավելի թանդ վարձարության տարբերությունը:

Զնայելով մի փոքր միմյանցից տարբեր լինելուն՝ այս յերկու որինակները շատ նման են: Վերցնում ենք յերբորդ որինակը, վոր փոքր ինչ տարբերվում և այս յերկուսից: Գյուղացին աշնանը փողի կարիք ունի յուր ընտանիքի պարենավորման համար և հնարավորություն ունի 100 փութ վարսակ ծախելու աշնան ցած գներով, փութը 50 կոպեկով, ուրեմն՝ ընդամենը 50 սուբով: Այս գումարը նա քիչ է համարում: Բեղում և յուր վարսակը կոռպերատիվի պահեստը, զրավ և զնում և 45 ռ. փոխառություն և ստանում և այդ գումարով ձևեռվա ընթացքում պահում և յուր ընտանիքը: Գարնանը վարսակի գինը բարձրանում, դառնում և 70 կոպ. փութը, գյուղացին յուր զրավ զրած վարսակը մայիսին ծախում և, ստանում և 70 սուբի, փորից 45 սուբի վճարում և պարտքը, 4 ռ. տոկոս, 21 ռ. ել վաստակ և ստանում այդ զործառնությունից: Առաջին նվազ այս փոխառությունը զուտ սպառողական և յերեւմ, բայց իսկապես այս ել հիմնված և այն զուտ անտեսական հաշվի վրա; վոր գյուղացին ողավում և տարշա զանազան յեղանակների գների տարբերությունից: մինույն

ժամանակ փոխառությունը ըոլորովին առանովված և գրավ զրած 100 փութ վարսակովը:

Մեր առաջ բերած յերեք դեպքումն ել այն անտեսական շրջանառությունը, վորի համար փոխառություն և խնդրվում, սկսվում ու վերջանում և 6—8 ամսվա ընթացքում, բնական և, վոր փոխառությունն ել արփում և այդքան ժամանակով և վարկն ել կարող և կոչվել կարձատել վարկ:

Փոքր ինչ այլ բնույթի ունի այնպիսի անտեսական շրջանառության համար տրվող վարկը, վոր մի քանի տարի և շարունակում: Դիցուք թե մեր գյուղացին կարիք ունի յուր խոտանարքը ցամաքցնելու, վոր ճահճացել և և 3 գեսյատինից ընդամենը միայն 120 փութ խոտ և տալիս: Առուներ փորելը, ցախով դրենաժը, կոշտաթմբեր քանդելը, խոտանարքի տեղը վարելն ու խոտերի սերմ ցանելը, բացի գյուղացու սեղանական աշխատանքից, պիտի նստի 210 ռ., այսինքն գեսյատինը 70 սուբի: Այդ աշխատանքների շնորհիվ խոտանարքը 120 փթի փոխարեն տալիս և յերեք գեսյատինին 330 փութ, այսինքն՝ 210 փութ ավելի, կամ, փութը հաշվելով 40 կոպեկ, 84 սուբի ավելի, քան բարերափումից առաջ: Ընդունելով, վոր յերբք ավելանալով՝ խոտհնձի ծախորն ել ավելանում և գեսյատինին 9 ռ., խոտանարքի բարերափումից նրա յեկամուտը կարող լինը 75 ռ. ավելացած համարել: Զնայելով բարելավման միանգամայն շահավետ լինելուն, ակներեւ և, վոր այդ բարելավման համար արած 210 ռ. փոխառությունն անկարելի և մի ատրավ ընթացքում ծածկել խոտանարքի յեկամուտներից և այդ պարտքի հատուցումը պետք և մասնատել՝ գոնե չորս տարվա ընթացքում վճարելու համար, սրա համեմատ ել պարտքը պետք և վերցնել չորս կամ հինգ տարով և ուրեմն համարել յերկարատե փոխառություն: Իսկ բարելավման հաշվի ապացուցանում և, վոր փոխառությունը միանգամայն ապահովված և խոտանարքի յեկամուտի ավելանալովը:

Առաջ բերված որինակներից ըոլորովին պարզ և մի կողմից, թե ինչ ոգուտ կարող և ստանալ գյուղացու անտեսությունը կանոնավոր ու խելացի կերպով արտադրական վարկն ոգաագործելուց, իսկ մյուս կողմից—թե ինչի վրա և հիմնվում գյուղացու անտեսությունը միանգամայն ապահովված և խոտանարքի յեկամուտի ավելանալովը:

Քայլենի սկզբունքների համաձայն կազմակերպված մանր արտադրական վարկի:

Այս և պատճառը, զոր այն յերկրներում, ուր վարկային կոռպերացիան զարգացած է, թայֆայլենի վարկի մեջ փող պահելը ամենավատահելի յեղանակն և համարվում:

Կոռպերատիվ վարկի անտեսական հությունը փորչելուց հետո՝ մենք կարող ենք հիմա անցնել նրա տեխնիքական կազմակերպության բացատրությանը:

Վարկային գործառնություններ կատարող դյուզատանտեսական ընկերություններում վարկ ունենալու կարգը սովորաբար այս և լինում, ընկերության ամեն մի անդամ, վոր ցանկանում և վարկ ունենալ, կոռպերատիվի վարչությանը՝ տեղեկություններ և տալիս յուր մասին, յուր անտեսության, յուր ունեցած շինությունների, ինչինտարի, անտառների քանակության և վարուցանքի տարածության մասին։ Այդ տեղեկություններն ստուգվում են և նրանց հիման վրա, ինչպես նաև դյուզացու անձնական բարեմասնությունների, աշխատունակության, յեռանդի ու բարեխղճության գնահատության, նրան վարկ են բաց անում, այսինքն՝ վորոշումն են անում, թե ինչ գումար կարելի է փոխառ այն ինչ ընկերություն՝ առանց ընկերությանը կորուստ պատճառելու վատանդի։ Պատերազմից առաջ ընկերության մի անդամի ունեցած վարկի չափը մոտավորապես 80 ոուրլի եր լինում։

Յեթե կոռպերատիվի անդամին վարկ բաց և արած, նա փողի կարելի ունենալու դեպքում, կարող է վարչությունից փոխառության խնդրել, մատնացույց անելով յուր հայտարարության մեջ փոխառության նպատակը, նրա չափն ու վճարաժամը։ Նպատակը պետք է արտադրական լինի և առանց վեասվելու վատանդի, չափը՝ նպատակին համապատասխան, բայց ըստ կարելույն գոչ ավելի քան անդամին բաց արած վարկը—ժամանակը՝ 6 ամսից գոչ ավելի։ Ավելի յերկար ժամանակով փոխառություն արգում է միայն այն գեպը ունի և այլ ուրիշ եւ։

Յեթե ընկերությունը պատրաստի փող ունի և ինդիքը անտեսապես հիմնավորված է, ինդրան գումարը արգում և լրիվ

կամ մի մասը, փողը տալիս՝ հայտարարության մեջ մատնացույց արված ժամանակի համար տոկոսներ են դուրս գալիս։

Յեթե, որինակի համար, զյուզացին 100 ո. փոխառություն և ստանում 6 ամիս ժամանակով ու տարեկան 12 տոկոսվ, նրան տալիս են ընդունակության 94 ոուրլի, իսկ նրա պարտքը գրգում և 100 ոուրլի։

Փոխառություն անելու համար յերեք տեսակ ապահովություն և պահանջվում։

1. անձնական վատահություն փոխառություն խնդրող անդամի նկատմամբ,

2. մի այլ անդամի յերաշխավորությունը նրա համար,

3. մթերքի կամ անասնի զրավագրություն։

Սնձնական վատահության հիման վրա պարտք են տակա համեմատաբար փոքր գումարներ, վոր մատնանշվում են վարկ բաց անելիս։

Յեթե խնդրած փոխառությունը փորչյալ գումարից ավելի և լինում, այդ գեպը ում փոխառությունն ստանալու համար պահանջվում է, վոր նրա վերադարձնելու համար ընկերության մի այլ անդամ յուր յերաշխավորությունը տա։

Այսպիսի յերաշխավորություն յեղած գեպը ում էն պարտքը չեն վճարում, փողը պահանջվում է նախ պարտապանից, իսկ յեթե նա շի կարողանում վճարել՝ նաև յերաշխավորից։ Պիտք են նկատել, վոր ընկերության անդամին վարկ բաց անելիս՝ վորոշում են գոչ միայն փոխառության ամենաբարձր չափը, վոր կարելի և նրան առ անձնապես վստահելով կամ յերաշխավորությամբ, այլ նաև թե ինչ գումարի երաշխավորություն կարող է տալ տվյալ անդամը ուրիշների համար։

Գրավականով փոխառություն խնդրելիս՝ արվող գումարը համապատասխանում է գրավականի արժեքին և սովորաբար կազմում է վոչ ավելի քան նրա  $\frac{3}{4}$ -ը կամ  $\frac{2}{3}$ -ը։ Գրավ են գրվում կամ գյուղատնաեսական մթերքներ-հացահատիկներ, վուշ, կաշիներ և այլն, կամ անսառններ։

Առաջին գեպը գրվում գրավ գրվող մթերքները սովորաբար պահանջման վարդում ընկերությանը, վոր շատ համախ այդ մթերքները միայն վաճառահանում են, իսկ յեթե անսառն և զրավ գրվում՝ անսառնը թողնվում է տիրոջ գոմումը, բայց նրա վրա «արգելք

և զրվում», այսինքն՝ տերը զրկվում է առանց նրան վարկ տվող կոռալեատիվի հատուկ թույլավության անառունը ծախելու, ընձայելու կամ վորի և տեղ տանելու իրավունքից:

Իբրև փոխատվություն կարելի է տալ թե փող և թե զանազան առարկաներ՝ պահանջագիր տալով ընկերության դյուզատնտեսական պահեստին: Այս դեպքում պահանջագրով՝ գյուղատնտեսական մեքենաներ, պարաբռանյութ, սերմացու և այլն տալը թոշդեմի միայն կանխիկ առեսուր տնելու սկզբունքի խախտումն չի լինի, վորովհետեւ ընկերության բաժանմունքից իսկույն համապատասխան գումար կը փոխանցվի պահեստի հաշվին, վորով այդ կանխիկ հաշիվ՝ կը դառնա: Այս դեպքում մենք պարզապես յերկու տեսակ գործառնության միավորումն ենք տեսնում—զնման և վարկային:

Յերբ արդեն փոխատվությունն ստացված և և փոխառումն ընկերությանը պարտագիր և տվել ընկերության վարչությունն իրավունք ունի ստուգելու, թե արդյոք աված փողն այն նպատակի համար և գործադրված, ինչի համար վոր փոխառուն խնդրել և, և յեթե անդամը խարել և, վարչությունը կարող և պահանջել վոր փոխատվությունն անհապաղ վերադրձվի, և անբարեխիղ փոխառուին կարող և արտաքսել ընկերությունից:

Այն դեպքում, յեթե տնտեսական շրջանառությունը, վորի համար փոխատվությունն ստացված և, պարտի վճարաժամին դեռ ավարտված չե, կամ յեթե փոխառուն այն յեկամուտը չե ստացել, ինչ վոր ստառում եր, նա կարող և ընկերության վարչությունից խնդրել, վոր պարտի հատուցումը հետաձգվի: Վարչությունը բոլոր հանգամանքներն ուշադրությամբ քննում և և յեթե խնդիրքը հիմնավոր և, հատուցումը հետաձգվում է սովորաբար վոչ ավելի քան 6 ամիս ժամանակով:

Եսկ յեթե փոխառուն պարտը վճարելն ուշացնե մի քանի որ՝ առանց այդ մասին վաղորոք վարչությանը հայտնելու, նրա վրա ստուգանք և զրվում ամեն մի ուշացըրած որվա համար:

Այս և ահա կոռալեատաէվ վարկատվության տեխնիկան:

Հիմա տեսնենք, թե վորտեղից և ընկերությունը գրամական միջոցներ գտնում՝ յուր անդամներին փոխ տալու համար:

Ընկերության միջոցներն են.

1. ընկերության հիմնական գրամագլուխը,

2. ընկերության պահեստի գրամագլուխը,  
3. հատուկ գրամագլուխները, մասնավորապես՝ յերկարատի վարկի գրամագլուխը,

4. ընկերության զանազան ժամանակներով կնքած փոխառությունները,

5. ընակչության ավանդները, վոր հանձնվում են ընկերությանը զանազան պայմաններով,

6. ընկերության մեջ զանազան ժամանակներով պահվող գրամմերը:

Բննինք այդ պարզություններից ամեն մեկն առանձին:

Հիմնական գրամագլուխը յերբեմն կարող և կազմվել ընկերության անդամների փայտավճարններից, բայց Ռայֆայենի սկզբունքների համաձայն, հիմնական գրամագլուխը պարտք և արվում փորպիս յերկարատի փոխատվություն, վոր հետզհետև շիջուցվում և՝ յուրաքանչյուր տարի մասն հանելով ընկերության վաստակներից:

Յերբ հիմնական գրամագլուխը կազմվում և այս յեղանակով, ընկերության մի քանի տարբա գործունեությունից հետո նա անում և վորպիս հասարակական գրամագլուխ, վոր հավաքվել և ընկերության գործունեության ընթացքում:

ԽՍՀ Միության մեջ վերջնականապես դեռ չե վորոշվել մանր վարկի կազմուկերպությունների հիմնական գրամագլուխներ կազմելու կարգը, բայց ամենայն հավանականությամբ գյուղատնտեսական վարչությունների հիմնական գրամագլուխներ կազմելու համար գրամ հայթայթելու պարտականությունը կը կարողանա տանձնել ԽՍՀՄ կենտրոնական Գյուղատնտեսական Բանկը, վորի տեղական գործունեության հենարանն են գյուղատնտեսական վարկի տեղական ընկերությունները և տեղական կոոպերատիվ միությունները:

Գյուղատնտեսական բանկը, իբրև ամբողջ գյուղատնտեսական վարկի կենտրոն, յուր գործունեության խոշոր մասն առհասարակ պիտի նվիրե գյուղացիական տնտեսություններին վարկ տալու գործին՝ նրանց կոոպերատիվների միջոցով և վարկի բոլոր տեսակները կիրարկելով: Տեղական ընկերությունների հիմնական վարկայի համար վարկ տալը զլասավոր տեղը պիտի բռնէ գրամագլուխների համար վարկ տալը պիտի բռնէ գործունեության մեջ, մի կողմից՝ այդ գործառնության պար-

գության պատճառով, իսկ մյուս կողմից այն պատճառով, վոր այդ բանին և միայն, վոր հենվելով պետական խոշոր ու յերկարժամանակյա փոխառության վրա՝ հարավություն ունի այդ հոգու յուր վրա առնելու մասսայական ձևերով։ Շատ հավանական է, վոր կոոպերատիվ վարկի համար գրամ հայթայթելու նպատակով հատկացվեն պետական խնայողական գանձարկիների միջոցների մի մասը և մի քանի ապահովագրական զրամագլուխներ։

Պահեստի դրամագլուխն ընկերությունը կազմում և հետզհետե յուր գործունեության ընթացքում, մասնագրություն անելով յուր վաստակից։ Պահեստի դրամագլուխը ծառայում և վորպես ապահովություն ընկերության բոլոր հանձնառությունների համար և վորպես ազրյուր պատահական վնասները ծածկելու։

Հատուկ դրամագլուխները, վոր ստեղծվում են զանազան հատուկ նպատակներով, կազմվում են կամ հատուկ փոխառություններ կնքելով կամ մասնագրություններից, առուրելից և մինչև անգամ նվիրատվություններից, և ընկերության վրա հաշված լինելով՝ կարող են ժամանակավորապես գործածվել նաև վարկ տալու համար։ Իսկ ուղղակի վարկի նպատակ կարող ե ունենալ յերկարժամանակյա վարկի հատուկ դրամագլուխը, այդպիսի դրամագլուխ կազմելը բացառիկ կարևորություն ունի, քանի վոր յերկարժամանակյա վարկի սուր կարիք ունի մեր գյուղը։

Փոխառություններ ընկերությունը կնքում և այն գեպքում, յերբ ուրիշ ազրյուրներ չկան, և սովորաբար կարձ ժամանակով ուրիշ կոոպերատիվ կազմակերպություններում, տեղական ըանկերում և մինչև անգամ մասնավոր անձանց մոտ, և յեթե գործը կանոնավոր և զրված՝ փոխառություններն ընկերության դրամական միջոցների թվում մեծ գեր պիտի չունենան, քանի վոր այդ փող ձեռք բերելու ամենից ավելի անձեռնոտու և թանգ ձեն ե։

Կոոպերատիվ վարկի համար միջոցների ամենազլիավոր աղբյուրը պիտի տա ընկերությանը ինքը ընակչությունը՝ յուր ազատ միջոցները տալով իբրև պահանջ ի պահ։ այդ պիտի անեն թե ընկերության անդամները և թե ամեն մի ցանկացող աեղացի ընակիչ։

Յերբ կոոպերատիվ շարժումը բոլորովին զարգանում և և ընդհանուր վատահություն վայելում և յեթե ընակչությունը քի-

թե շատ բարեկեցիկ վիճակ և ունենում, սովորաբար այնքան ավանդներ են հանձնվում կոոպերատիվ ընկերություններին, վոր հենց դրանով միանգամայն ապահովում և ընկերության վարկային գործունեությունը։

Բնակչությունը՝ համոզվելով, վոր կոոպերատիվ կազմակերպությունները հաստատուն և ապահով կազմակերպություններ են, նրանց և հանձնում սովորաբար շատ փոքր տոկոսով յուր «ուկ որվա» համար արած խնայողությունները, վոր առաջ պահում եր պուլիկներում, գուլպանների մեջ ու մսղուկներում։ Հետո նա իբրև ավանդ պահ և տալիս յուր այն ազատ գրամը, վորի համար վորե և պատճառով չի կարողանում ավելի շահավետ գործադրություն գտնել և, վերջապես, պահ և տալիս յուր շրջանառության գումարները, յերբ տարվա մեռյալ յեղանակի հանգամանքով այդ գումարները մի քանի ամիս գործադրություն չեն ունենում։

Ավանդները լինում են ժամադրյալ և առանց պայմանաժամի, պահանջ։ Յեթե ավանդատուն յուր ավանդը տալիս և առանց պայմանաժամ մատնացույց անելու, նա սովորաբար պարտավորվում է ավանդը յետ վերցնել ցանկանալու դեպքում նախազգուշացնել այդ մասին ընկերության վարչությանը մի քանի որ առաջ, իսկ յեթե ավանդը մեծ գումար և նույն իսկ մի քանի շարաթ առաջ, վորպես զի անակնկալ կերպով խոշոր գումար գուրս տալը ընկերության գործերը չքայլայ։

Ավանդատուի ընկերությանը հանձնած ավանդների գումանը գաղտնի և պահվում ավանդների վրա պահանջ կարելի և դարձնել կամ արգելք կարելի և գնել միայն դատական իշխանության վորոշմամբ։

Ժամադրյալ ավանդների համար ընկերության վճարած տոկոսի չափը չի կարող փոխվել մինչև պայմանաժամի լրանալը։ Իսկ ցպահանջ տված ավանդների համար տոկոսը կարող և փոփոխվել ամեն ժամանակ ընկերության վարչության գորոշմամբ։

Այս են գրամական միջոցների ազրյուրները ընկերության վարկային գործունեության մեջ։

Վերջացնելով կոոպերատիվ վարկի նկարագրությունը, մենք պետք և կանց առնենք վարկային գործունեության խիստ կարենք հանդամանքների վրա։

1. Ընկերության փոխառվության գործունեությունը նկարագրելիս մենք վոչինչ չասացինք, թե ինչպես և սահմանվում այն տոկոսի չափը, վոր ընկերությունն առնում և յուր արած փոխառվությունների համար։ Այդ չեինք ել կարող անել, առանց նախապես՝ ընկերության միջոցների աղբյուրները քննելու։ Իսկ այժմ կարող ենք ասել վոր փոխառվությունների տոկոսի չափն ամբողջապես վորոշվում և այն տոկոսի չափով, վորով ընկերությունը կարող և դրամ ստանալ փոխառվությամբ կամ վորպես ավանդ։ Դիցուք թե, ընկերությունը ավանդներն ստանում և տարեկան  $8\%$ -ով, այդ տոկոսի վրա ընկերությունն ավելացնում և և  $2\%$  կամ  $3\%$  ծառայողներ պահելու և վաստակ ստեղծելու համար և փոխ և տալիս տարեկան  $10\%$  կամ  $11\%$ -ով։

Փոխառվության և ավանդների տոկոսի մեջ յեղած տարբերությունը «տոկոսի լարում» և կոչվում և լավ կազմակերպված ընկերության մեջ վորքան կարելի են քիչ պիտի լինի։ Իսկ վաստակը և ծառայողներ պահելու միջոցները պետք և շատացնել վոչ թե «տոկոսի լարում» ավելացնելով, այլ վարկային շրջանառությունը մնեացնելով։

2. Փոխառվություն անելիս միշտ պետք և ի նկատի ունենալ վոչ միայն այն, թե ինչքան փող կա պատրաստի, այլ և այն, թե վարքան ժամանակով և փողը տված ընկերությանը։ Չորս ամիս ժամանակով ավանդ տված փողը վոչ մի կերպ չի կարելի փոխ տալ ։ 7 ամիս ժամանակով, վորովհետեւ յերբ վոր ավանդը վերադարձնելու ժամանակը քա, վոչ մի հնար չի լինի ստանալու այդ փողը պարտապաններից։ Կարծ ասած, փոխառվությունների պայմանաժամերը միշտ քիչ թե շատ համաձայնեցրած լինին ավանդների ու ստացած փոխառվությունների պայմանաժամերին, վարովհետեւ հակառակ պարագային խիստ ծանր դրություն կարող և ստեղծվել ընկերության համար։

3. Խիստ մեծ ուշադրության արժանի և վարկային գործառնություններից ստացված վաստակի բաշխման խնդիրը։ Վորովհետեւ վարկային ընկերությունները փայեր չունեն, ուստի ընական են, վոր ընկերության անդամները փայերի համար վոչինչ չեն կարող ստանալ վաստակից։ Վաստակիցը վոչինչ չի տրվում անդամներին նույնպես նրանց ստացած վարկի կամ տված ավանդի ուուրլու համար, ինչպես այդ տեսում ենք այլ

կոռպերատիվներում։ Կոռպերատիվ վարկի բոլոր շահը ոովորաբար հասարակական դրամագլուխ և դառնում։ Պատերազմից առաջ վարկային ընկերություններում սովորաբար վաստակի  $40\%$ /0 համեմացվում եր հիմնական դրամագլուխին,  $20\%$ /0 պահեստի դրամագլուխն և մնացյալ  $40\%$ /0-ը տեղական բնակչության զանազան գյուղատնտեսական և հանրակրթական նպատակների համար, վորոնց թվում յերբեմն նաև հատուկ դրամագլուխներ կազմելու։

Եյս և անա համառոտ գծերով կոռպերատիվ վարկի գործունեությունը։

Յեթե խորը թափանցենք այս գործունեության մեջ, հեշտությամբ կը տեսնենք, վոր կոռպերատիվ վարկի նշանակությունը շատ ավելի մեծ ե, քան առանձին անտեսությունների գործունեությանը ցույց տված ոգնությունը։ Վարկային կոռպերացիան հետպհետեւ զարգանալով ու ամրապնդելով անխուսափելի կերպով յուր մեջ կ'առնե վորպես ավանդ գյուղի բոլոր աղատ դրամը։ Արացնելով այդ դրամը պետական միջոցներով ու բանկերից ստացած դրամագլուխներով, կոռպերացիան վարկը կ'աժանացնե և մատչելի կը զարձնե ամեն մի գյուղացու, կը դարձնե սովորական շրջաբերության առարկա։ Գյուղատնտեսության մեջ, ինչպես հիմա արգյունաբերության մեջ ե, շրջանառություն ունեցող դրամագլուխ մեծ մասը գործի մեջ կը լինի և հատկապես կոռպերացիայի գործի մեջ։ Այդ գործի մեջ յեղած կոռպերատիվ դրամագլուխներով կը շինկեն ու կը կուզմակերպվեն յուղագործարաններ, կարառֆիլի մշակության գործարաններ, աղնվացեղ անսառնաների, մեքենաների ու սերմնազափէ կայաններ, ջրաղացներ ու այլ կոռպերատիվ կառուցվածքներ, նույն այդ գործի մեջ յեղած կոռպերատիվ դրամագլուխներով կը կատարվին վաճառահանության, գնման ու վերամշակության բալոր գործառնությունները։ Կարծ խոսքով, յեթե հիշյալ բոլոր գործառնությունները լայն թափով զարգանան, մենք կը տեսնենք հողագործության մեջ և գյուղատնտեսական մթերքների շուկայում շրջանառություն ունեցող բոլոր դրամագլուխների կոռպերատիվ համայնացումը։

Ժամանակակից կապիտալիզմը սովորաբար ֆինանսական կապիտալիզմ են անվանում, վորովհետեւ նրա զլախավոր տնտեսներ, զիսավոր կազմակերպող ու զեկավարող ույժը բանկի

դրամագլուխը—կապիտալն ե, վոր Փինանսներ, այսինքն՝ դրամական միջոցներ ե տալիս արդյունաբերության և առեսրի բուր շրջանառությունների համար:

Յերբ վոր կոռպերատիվ վարկը զարգանա և նրա աջակցությամբ դրամական միջոցներն առատանան գյուղացու տնտեսության մեջ, ֆինանսական կապիտալը գյուղում ղեկավարող և ամեն բան վորոշող դեր կ'ստանա: Միայն թե այդ դեպքում կապիտալը բանկիրների կապիտալ չի լինի, այլ հասարակական, կոռպերատիվ ու պետական կապիտալ:

Վերագրյալ նկատառությունը միանգամայն այլ կերպ են յերանգագլում մեր կոռպերատիվ ընկերությունների համեստ գործունեությունը: Զնայելով դրա առորյա բնույթին՝ այդ գործունեությունը դառնում է մի նոր սոցիալ-տնտեսական հանրակարգ սահմանադրու ամենախոշոր աշխատանք, և դրանով գյուղատնտեսական վարկի ամբողջ սիստեմը, տեղական ընկերություններն սկսած մինչեւ ԽՍՀՄ գյուղատնտեսական բանկը, միանգամայն բացառիկ նշանակություն և ստանում մեր յերկրի սոցիալիստական շինարարության գործում:

Գ Լ Ռ Ի Խ

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՄՆԵՐԻ ԿՈՂՊԵՐԱՏԻՎ ՎԱՀԱՆԱՌԻԹՅՈՒՆԸ.

Մենք տեսանք, թե ինչքան ոգուտ և տալիս գյուղացիներին կոռպերացիան աժան վարկ ստանալու և ապրանքներ գնելու գործում:

Ավելի մեծ ոգուտ կարող է տալ կոռպերացիան գյուղացիներին՝ նրանց աշխատանքի պտուղները շուկա վաճառահանելու գործում: Ոյ վոր հեղափոխությունից առաջ յերբ և իցեւ յեղել ե մեր վուշի հյուսիսային շուկաներում, լավ գիտե, թե ինչ պատճեր է ունեցել գյուղացությունն այդ տեսակ վաճառքից: Շուկա յեկած գյուղացու վուշի մանչուկները քըքրում եին, տրորում, գյուղացուն շվարեցնում: զնորդ վաճառականները, խոսքները մեկ արած, զինը քցում եին, ապրանքն արատավորում և ի լրում ամենայնին՝ ապրանքն ընդունելիս, խառնաշփոթության մեջ, կշռումը խարում եին: Այդ առաջին գնորդների հավաքած վուշը գնում եր գավառական վաճառականը, նրանից՝ մեծաքանակ առևտուր անողը, ապա գնում եր մի ոտարերկրյա առերական տուն և ծովով ուղարկում Անգլիա և այլ արտասահմանյան յերկրներ, փորտեղ նոր համնում եր վուշը գործարանների ճախարակներին:

Գյուղացին վուշը ծախում եր մաքուր և չոր՝ աժան գնով, իսկ գործարանն ատանում եր խառնուրդներով ու թրջված՝ թանգ գնով: Շահվում եին միայն միջնորդ վաճառականները: Կարծես, թե ինչ հասարակ բան ե—վուշն ուղղակի գյուղացու ձեռից հանձնել գործարանին: Շատ ուսւ հասարակական գործիչներ վաղուց արդեն մտածելու խոսել են այս մասին:

Բայց, ինչպես ասում են, ասելը հեշտ ե, անելն և գժվար: Գյուղատնտեսական մթերքների վաճառահանության գործում

կոռպերացիան շատ ավելի մեծ խոչընդուների հաճութիւնց, քան գնումների գործում:

Այդ խոչընդուներն ամենից առաջ գործի տեխնիկական կազմակերպության մեջ եին: Սպառողական կոռպերացիան յուր ապրանքն սոսանում եր գործարաններից և մեծաքանակ վաճառատներից տեսակավորած, կշռած և փաթեթներում՝ արկղներում՝ զետեղած: Վաճառականության կոռպերացիան յուր ունեցած հուս մթերքը վաճառելու համար այդ բոլոր աշխատանքը պետք է ինքը կատարեր, սկզբումն առանց գործին ծանոթ լինելու, և միայն հետզետե պետք է սովորեր այդ տեխնիկան:

Սպառողական ընկերությունը առևտրի համար ամենագժվար գործում, վաճառքի գործում, ստիլված եր մաքառել գյուղական մանր խանութպանի զեմ, վոր սակավազոր և և մեծ գումարների տեր չե. իսկ վաճառականության կոռպերացիան, յուր հավաքած ապրանքը արտասահման վաճառահամելիս, ստիլված եր մաքառելու հին, աշխարհիս ամենախոշոր առևտրական տների զեմ, վոր աճագին գրամագլուխների տեր են և ունեն բազմաթյա փորձառություն ու գործին հմուտ, պատվական ծառայողներ:

Դժվար եր կոռպերացիայի համար ճանապարհ բանալ զեպի մեծ շուկան, մանավանդ վոր գնորդներն այնպիս եին սովորել սուսական կեղծած վուշին, վոր սկզբում կոռպերատիվի մաքուր վուշի համար ավելի զին չեին տալիս, քան խառնուրդներով վուշի համար, այսինքն՝ չեին հավատում նրա մաքուր լինելուն: Սակայն յերկար ջանքերից հետո՝ կոռպերացիան կարողացավ ամրանալ այդ գործում: Հետզետե կարգի ընկավ մեզանում վուշի, ձվերի, կանեփի թելի վաճառահանությունը՝ գուցե մոտիկ ապագայում կարողանանք հաջողեցնել և հացի կոռպերատիվ վաճառահանությունը խոշոր չափերով: Այդ ուղղությամբ արգեն լուրջ քայլեր արված են:

Վաճառահանության կոռպերացիայի հիմունքները շատ պարզ են:

Գյուղատնտեսական ընկերությունը կամ վաճառահանության մի հատուկ կոռպերատիվ, վոր ցանկանում ե, դիցուք, վուշի վաճառահանության գործառնությունների ձեռնարկել, գործում և հարմար պահեստատեղեր, մամուլ և սարքում վուշի հակեր կապելու համար, հրավիրում և գործված և

լավ ճանաչող տեսակարար, և ապրանք ընդունելու որեր ու ժամեր նշանակելով սկսում և գործառնությունները:

Կոռպերատիվի անդամ ամեն մի գյուղացի բերում և յուր վուշը կոռպերատիվ, վորտեղ տեսակարարը քննում և այն, վորու շում և նրա հատկությունը, բաժանում և թել տեսակների, յեթե այն միատեսակ չե, կշռում և ընդունելուց հետո գյուղացուն անդորրագիր և տալիս, թե՝ ստացված և նրանից դիցուք՝ «5 փութ ու կես առաջին տեսակից, վուշը 10 ո., և 10 փութ յերկորդ տեսակից, վուշը 8 ո., ընդամենը 15 փութ ու կես, գումարն ըստ գնահատության՝ 135 ո.»: Գները վորոշում և կոռպերատիվի վարչությունը շուկայի գների համեմատ և կախ և տալիս ի գլուխություն հանրության տեսակների նմուշների հետ միասին:

Գյուղացու մեկիցն ընդունած վուշը տեսակների և բաժանում հատուկ պահեստներում և ուղիւ գյուղացիներից ստացված վուշի նույն տեսակների հետ խառնվում:

Սրանով, ինչպիս ասում են, վուշը «դիմագուրկ» և դառնում, այսինքն ել վորի և կապ չի մնում վուշի և տիրոջ մեջ, և դրանից հետո տերն իրավունք ունի արգեն վոչ թե հենց յուր արտադրած ու կոռպերատիվին հանձնած վուշի վրա, այլ նույն անսակի և նույն քանակության վուշի կամ՝ ավելի ձիշտ, նրա արձեքի:

Դիմագուրկ յեղած վուշը մամուլի տակ և ընկնում ըստ տեսակների, հակեր և կապվում և հանվում վաճառքի:

Սովորաբար կոռպերատիվին վուշ հանձնող գյուղացին փողի կարիք և ունենում և չի կարող սպասել մինչև վոր կոռպերատիվիը գնորդ գտնե յուր ապրանքի համար, վոր շատ անգամ յերեք-չորս ամիս ժամանակ և ուղում:

Ուստի կոռպերատիվներումն ընդունված բան և, վոր ապրանքն ընդունելուց հետո խալույն գյուղացուն ապրանքի գրավկանով փող են տալիս նրա գնահատության՝ 60%, 75%, յերբեմն ել 100%-ը: Ապրանքը ծախվելուց հետո կոռպերատիվին ստացած փողիցը հանում և յուր տված գումարը և մնացածը բուրը տալիս և գյուղացուն, մի փոքր տոկոս գուրս գալով իրու միջնորդչիք:

Վոչ մի գեպօւմ չպետք և մոռանալ, վոր այն փողը, վոր կոռպերատիվը տալիս և գյուղացուն նրա փուշն ընդունելիս, վոչ

այլ ինչ ե, բայց յեթե փոխատվություն վուշի գրավականով, և վոչ բնավ վուշի գինը:

Այստեղ մենք տեսնում ենք յերկու գործառնություն. 1, վուշի միասնական վաճառահանություն և 2, վարկ վուշի գրավականով, և վոչ թե առուծախսի մի գործառնություն:

Այս պատճառով, յեթե անբարեհաջող հանգամանքների շնորհիվ միասնական վաճառքից վուշի համար ավելի քիչ ստացվի, քան փոխ տված գումարն ե, և վաճառքից ստացված դրամով փոխատվությունը չի շիջնացվի, կոռպերատիվը կարող ե և պետք ե պահանջի գյուղացուց, վոր փոխատվության մնացորդը հատուցանե փողով:

Վորովհետև այդպիսի լրացուցիչ մի վճար գյուղացու վտիտքակիցն անախորժ բան ե և բնակչության մեջ անվատահություն կարող ե առաջ բերել գեղի կոռպերատիվը, ուստի կոռպերատիվները սովորաբար ամբողջ ապրանքի իսկական արժեքի չափով չեն պարտք տալիս, այլ միայն նրա <sup>3/4</sup>-ը կամ այլ մասը, հուսալով, վոր մինչև անգամ արժան ծախելու գեղքում՝ տված պարտքը վաճառքիցն ստացված գումարիցն ավելի չի լինի:

Վորքան կոռպերատիվի գործերը հաստատում լինին և շուկայի գներիցն ավելի հույս լինի ստանալու մեծաքանակ վաճառքի շուկայում, այնքան հիշյալ մասը, վորի չափով պարտ և տրվում, մեծ կը լինի:

Ինքն ըստ ինքյան հասկանալի ե, վոր վաճառահանության կոռպերացիայի համար, վոր ձգուում ե յուր ապրանքները ամենախոշը արտասահմանյան շուկայում վաճառելու, առանձին նշանակություն և ստանում մանր կոռպերատիվների միանալն ու հզոր կոռպերատիվ միություններ կազմելը: Միայն հանգին քանակությամբ տեսակ-տեսակ վուշ ունենալով կոռպերացիան կարող է հաստատուն գիրք գրավել շուկայում, և վորքան խոշոր լինին նրա շրջանառությունները, այնքան ավելի կարող ե նա ազգեցություն անել գների վրա և գյուղացու հողագործական աշխատանքի ավելի բարձր գնահատություն ձեռք բերել:

Վուշի կոռպերացիան հենց յուր գոյության առաջին տարիներում միացրեց յուր կոռպերատիվները, տասնյակ միություններ կազմեց, վորոնք ձուլվելով մի կենտրոնական միություն կազմեցին «Վուշկենտրոն» անունով:

Վուշկենտրոնը, վոր վուշ ու կանեփ ցանող գյուղացիների շամառուսական Միություն ե, պաշտպանում ե վուշի մշակության բոլոր կարիքները, տասնյակ միլիոնավոր սուբյուտ վուշ և վաճառահանում, լավ սերմնացու ե հայթայթում գյուղացիների համար և ղեկավարում ե վուշի գործի տեղական կոոպերատիվները:

Վուշ ցանող գյուղացու ճանապարհով գնացին կանեփ ցանողները, Զերնիգովի և Որյովի նահանգների գյուղացիները, վորոնք կանեփի կոոպերացիա յեն կազմակերպում. Կոստրոմայի և Վլադիմիրի նահանգների գյուղացիները, վորոնք կարտոֆիլի վաճառահանությունն են վլուխ բերել, Թուրքեստանի բամբակ ցանողները, Վորոնսեփի գյուղացիները, վոր ձվի վաճառահանությունն են կազմակերպում, և վերջերս սկսված ե հացահատիկների միասնական վաճառահանության կազմակերպությունը:

Ամփոփելով մեր ասածները, պետք ե նկատենք, վոր վաճառահանության կոռպերացիան վոչ միայն ավելացնում ե գյուղացու յեկամուաները, ավելի բարձր գներով ծախելով նրա ստացած բերքերը, այլ և ահազին ազգեցություն և անում նրա արտադրության կազմակերպության վրա. բարձր գին տալով լավ տեսակների համար, գյուղացուն իրազեկ անելով շուկայի պահանջների մասին, կոռպերացիան յերբեմն ստիպում ե նրան փոխել յուր տնտեսության ամբողջ ծրագրերը և կառուցանել այն նոր, բարելավված հիմքերի վրա: Ահա թե ինչո՞ւ վաճառահանության կոռպերացիան, թեպետ այն առաջին նվագ միայն առետական գործ ե յերեւում, մենք միշտ արտադրության կազմակերպության առաջին քայլն ենք համարում և անվանում ենք արտադրական կոռպերացիա:

Սակայն այն ել պիտի նկատենք, վոր գյուղատնտեսական շատ մթերքներ, հեռավոր լավ շուկայում բարձր գնով վաճառելու համար, պետք ե վերամշակել: Այդպիսի մթերքներ են կաթը, բանջարեղենը, կարտոֆիլը, միրզը, իրանք ծանր են և գժվար փոխադրելի, և շահավետ ու չփշացող ապրանք են գառնում միայն վերամշակելուց հետո, յերբ կաթից յուղ ու պանիր ե պատրաստվում, կարտոֆիլից՝ ուլա և մաթ, միրզը պահուծո յե գանում, իսկ բանջարեղենը չորացվում:

Ուստի այդ մթերքների կոռպերատիվ վաճառահանությունը  
կազմակերպելով, մենք միաժամանակ նրանց կոռպերատիվ վե-  
րամշակությունը պետք է կազմակերպենք:

Վաճառահանության և վերամշակության այլպիսի կոռպե-  
րատիվի ամենասարածված որինակն է յուղագործական արտելը  
(ընկերությունը), վորի կազմակերպությանը կը ծանոթանանք  
հաջորդ գլխում:

Գ I. Ո Ւ Խ VI.

## ՅՈՒՂԱԳՈՐԾՎԿԱՆ ՄՐՏԵԼՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՆԱՍՆԱՊԱՀԱ- ԿԱՆ ԿՈՌՊԵՐԱՏԻՎՆԵՐ.

Բոլոր կոռպերատիվներից ավելի նշանակություն ունին յու-  
ղագործական ընկերությունները. նրանք որինակ են հանդիսա-  
նում ամեն մի այլ կոռպերացիայի համար, վորտեղ վաճառահա-  
նությունը միանում է վերամշակության հետ:

Տնային յեղանակով յուղ պատրաստելիս, յերբ կաթը փոռում  
են լայն ամանների մեջ, յուղի մոտավորապես մի քառորդ մասը  
մնում է յերեսը քաշած կաթի մեջ և կորչում է; Իսկ յեթե արա-  
ժանը կաթիցը բաժանում են մեքենայով—սերզատով (սեպարա-  
տորով), կորչում ե վոչ թե  $\frac{1}{4}$  մասը, այլ միայն 0,01-ը, և արա-  
ժանը հանելու դորձողությունն ել շատ ավելի արագ և կատար-  
վում: Արաժանը ձեռով քաշելուց մեքենայով քաշելուն անցնելու  
շնորհիվ մենք վաստակում ենք վեդրոյին մոտավորապես 10  
կոպեկ:

Լավ կովը տարեկան սովորաբար մոտ 180 վեզրո կաթ և  
տալիս, այսպես ուրեմն հասարակ գրալը սերզատով փոխարինելը  
տալիս է 20՝ սուրլուց ավելի ամեն մի կովին:

Անհրաժեշտ է նկատել վոր արաժանը գրալով քաշելով և  
յուղը հասարակ ձեռվ տանը պատրաստելով մենք կարող ենք  
ստանալ միայն սուսական հալած յուղ, վորի գինը բարձր չի լի-  
նում: Բացի սրանից կարեոր է ՚ի նկատի ունենալ, վոր մի փութ  
սուսական յուղ ստանալու համար հարկավոր է 30—32 փութ  
կաթ: Իսկ յեթե արաժանը քաշենք սերզատով և մեքենայով յուղ  
պատրաստենք, կարող ենք ստանալ ամենալավ Փարիզի կոչված  
արաժանի կարագ, վորի մի փիթին հարկավոր է միայն 21 փութ  
կաթ և վոր հասարակ սուսական յուղից թանգ արժե:

Այս բոլոր առավելությունները դրդում են ձեռքով արա-

ժանը քաշելուց և ձեռքով յուղ պատրաստելու յեղանակից անցնել մեքենայով պատրաստելուն: Բայց պետք ե ասել, վոր մեքենական յուղագործության համար անհրաժեշտ սերզատի և այլ մեքենաների ծախքը հանելու համար որական վոչ պակաս քան 200 վերրո կաթից պետք է յուղ պատրաստել. հակառակ պարագային մեքենաները մեծ մասամբ կը մնան առանց գործածության, և նրանցով յուղ պատրաստելու ավելի թանգ կը նստի, քան ձեռքով պատրաստելը: Ուրեմն, վորպես զի կաթնատնտեսությունը իսկապես շահավետ լինի, պետք ե, վոր ընկերություն կազմող տնտեսությունները միասին ունենան որական մի վեղրո կաթ տվող 200 կովից վոչ պակաս: Ակներեւ ե, վոր վոչ մի գյուղացի այդքան կով պահել չի կարող և մեքենական վերամշակության ոգուտը վայելելու համար անհրաժեշտ ե, վոր նա յուր հարենանների հետ միություն կազմե: Այդ միությունը, բացի սերզատ գործածելու առավելությունից, հնարավորություն կը տա գյուղացիներին ծախելու իրենց յուղը վոչ թե քիչ-քիչ՝ գնորդ վաճառականի ձեռքով, այլ մեծ քանակությամբ հավաքելով յուղը՝ ինքնուրույնաբար հանդես դալու մեծաքանակ առեւտրի շուկայում:

Մուսաստանում այդպիսի յուղագործական միություններ սկսեցին զարգանալ Արևմտյան Սիբիրում: Սկզբումն այնտեղ առաջ յեկան վոչ թե կոռպերատիվ, այլ մասնավոր, արդյունաբերական յուղագործարաններ: Առավելապես ոտար երկրացիներն եին մանր յուղագործարաններ հիմնում, վոր բավականին շահով վաճառում եին յուղը անգիտական և այլ շուկաներում:

Այդ գործարանները սովորաբար ունենում եին նպարելենի խանութներ: Խսկապես դժվար ե ասել, թե ինչպես եին իրենց գոյությունը պահպանում այդ փոքրիկ գործարանները: Նրանք գյուղացիներից կաթը գնում եին և վճարում եին խանութի մթերքներովը: Հասկանալի ե, թե ինչ կը լինեին նրանց գները: Բացի դրանից՝ խանութիցն հաճախ ապառիկ եին տալիս, վորի համար բարձր տոկոս եին առնում: Այս հանգամանքի շնորհիվ գործարանի խանութի վաստակը շատ անգամ ավելի եր լինում, քան նույն իսկ գործարանի վաստակը: Բայց այդ մանր արդյունաբերական գործարաններն Արևմտյան Սիբիրում դաստիրակշական մեծ դեր կատարեցին: Նրանք ակնհայտնի ցույց տվին տեղական բնակչությանը, թե ինչ մեծ վաստակ կարելի ե ստանալ յուղա-

գործարանից՝ շնորհիվ տեխնիքական կատարելագործությունների և մի ձեռքում մեծ քանակությամբ կաթ հավաքելու: Այդ գործարանները ցույց տվին նույնպես, թե ինչ ոգուտ կարող ե տալ կոռպերատիվ խանութը: Այդ մասնավոր գործարանների ու խանութների շնորհիվ սկսվեց Սիբիրի ընկերական յուղագործարանների գործունեությունը:

Սիբիրի կազմակերպությունների առաջին գործիչներն եին պլազմապես շինական գրագրները: Նրանք, վորպես ավելի բանշեմաց մարդիկ, վոր ավելի եին կարգում և կապեր ունեին Ռուսաստանի հետ, առաջինն սկսեցին խոսել, թե չի կարելի արդյոք այդպիսի յուղագործարաններ ստեղծել ընկերական հիմունքներով: Սիբիրի յուղագործական կոռպերացիայի կազմակերպուղ Բարեկամն սկսեց զարգացնել այդ գործը, և ժամանակի ընթացքումն ամբողջ Արևմտյան Սիբիրում յուղագործարաններ հիմնվեցին, վոր բնակչությանը մի վեղրո կաթին տալիս եին 40-50 կողեկ և սկսեցին գուրս քցել ասպարեզից մասնավոր արդյունաբերական գործարանները:

Զենարկուներն սկիզբը դրին Սիբիրի յուղագործությանը: Նրանց ստեղծած գործը հիմա բնակչությունը յուր ձեռքն և առել յուղագործուկան կոռպերատիվների շնորհիվ, վորոնք գրեթե իրենց գործունեության հենց առաջին միութենական սկզբունքի ուղին վրտ դրին: Հիմնվեց Սիբիրի յուղագործական արտելների հայտնի միությունը, վոր և սկսեց արագ զարգացնել յուր գործառնությունները:

Սիբիրի որինակով կաթնատնտեսական կոռպերացիան տարածվեց Վոլոգդայի, Վյատկայի, Յարսուլավի, Մուլգայի և այլ նահանգներում: Ներկայումս առհասարակ դժվար թե մի նահանգ ինչի, վորտեղ սկսված չլինի այդ գործը:

Այդպիսի առանձին արտելներ հիմնվում են մասնակցողների պայմանագրով կամ վորոշ կանոնադրությամբ, վոր տոմարադրվում ե:

Յերկու հարյուր վեղրո կաթ մշակող մի փոքր գործարանի համար անհրաժեշտ մեքենաներն ու գործիքներն արժեն մոտավորապես 600 սուբլի: Շենքը կարելի ե վարձել իսկ յեթե սեպական շենք ուղենան ունենալ, Ռուսաստանի անտառային մա-

առւմն այդ կը նստի մոտ 600 ոռւրլի, այնպես վոր այդպիսի մի գործարանն ամբողջ կարծենա 1200—2000 ոռւրլի:

Գլխավոր ծախսը լավ սառցատուն շինելն է: Բնդունված է, վոր սառցատունը պետք է շինել ամենաքիչը յերկու հազար փութ սառույցի համար: Փորձը ցույց է տվել, վոր որական 5 փութ կաթի համար հարկավոր է մի փութ սառույց:

Իսկ ինչպես և հիմնվում յուղագործական արտելը: Վարտեղից կարելի, և ստանալ 1000—1200 ոռւրլի, վոր հարկավոր և յուղագործարանի համար: Սերգատն ու այլ մեջենաները կարելի և ապառիկ ստանալ կոռպերատիվների տեղական միությունների միջոցով: Վարկը տրվում է սովորաբար 9 ամսով, և յեթե արտելի ընդհանուր ժողովը վորոշե, վոր անդամները՝ մինչեւ վոր պարտքը ընթափեն, գործարանի սարք ու կարգի արժեքը չի չուցանեն, կաթի համար փող չստանան, ամեն մի արտել 9 ամսով ընթացքում այդ պարտքը կը թափե, մի բան ել կ'ավելացնե:

Վոլոգդայի նահանգի ինձ հայտնի մի արտելի որինակը բերեմ: Այդ արտելը գործն սկսեց 165 ոռւրլով, և 9 ամիս անդամներից վոչ վոք կաթի համար փող չեր առնում: Տարվա ընթացքում նրանք 1002 փութ յուղ շինեցին 15 հազար ոռւրլու արժությամբ, վոր վոչ միայն լիովին ծածկեց գործարանը սարքելու բոլոր ծախքերը, այլ և մեծ վաստակ տվեց, վոր տարվա վերջում բաժանվեց փայտերերին:

Վորմնք են արտելի կազմակերպության հիմունքները: Նույնը, ինչ վոր սպառողական խանութինն են: Այստեղ ել դրամագլուխը բացառապես ծառայութեակություն ունի, ծառայում և միացյալ անտեսությունների շահերին: Այստեղ ել ստացված վաստակը վոչ թե ձեռնարկության մեջ զրած դրամագլուխի շահարածին և համարվում, այլ բաշխվում և յուրաքանչյուր անդամի ընկերությանը տված կաթի բանակության համեմատ:

Բնկերությունը մեծ մասամբ փայեր չի ունենում: Իննամյա վարկի շնորհիվ զրեթե բոլոր ընկերությունները հիմնվել են պարտքով: Յերեմի սակայն ընկերներն իրար մեջ փայտարար համարվում են: Ապառիկ ձեռք չերգած սարք ու կարգը շինուցում և հենց առաջին տարիներում, և առանց վորե և սկզբնական դրամագլուխի ընկերությունը ամուր վոտքի և կանգնում:

Կոռակերատիվ յուղագործարանը կազմակերպելուց հետո արտելի անդամներն սկսում են բերել այնտեղ իրենց ամեն որվակաթը: Ամեն որ բերած կաթը կշռվում է և գրվում մի հատուկ գրքույցի մեջ: Շաբաթվա վերջին արտելը յուր անդամների հետ բերած կաթի հաշիվն և տեսնում վարչության սահմանած դներով:

Այդ գները վորոշվում են այնպիսի հաշվով, վոր մթերքները ձախելուց հետո մի փոքր վաստակ մնա արտելին:

Այդ վաստակը տարվա վերջումն, ինչպես ասացինք, ըաշխվում է սպառողական խանութի որինակով այսինքն՝ ամեն մի անդամի տված կաթի քանակության համեմատ:

Դիցուք, թե մի վերը կաթին 10 կոպեկ վաստակ և ընկնում, և գուք տարվա ընթացքում տվել եք 200 վերը կաթ: Ուրեմն գուք 20 ոռւրլի վաստակ եք ստանում: իսկ յեթե տվել եք միայն 100 վերը կաթ, կ'ուսանաք միայն 10 ոռւրլի:

Մասնավոր յուղագործարանին կաթ տալիս վյուղացու ոգումն է, վոր շաբթե շաբթաթ հաշիվ տեսնելու ժամանակ կաթը վորքան կարելի ի թանգ գնահատվի: իսկ կոռպերատիվ գործարանին կաթ տվող դյուղացին կարող է ավելի ցած գնով բավականանաւ վորովնետե վատան և, վոր յուր կաթիցն ընկերության ստացած վաստակը յուր ձեռիցը չի գնա: վաստակը կը շինուցանե գործարանի բոլոր սարքավորումը, իսկ դրանից հետո մնացածը տարվա վերջում կը բաշխի ընկերության անդամներին իրենց տված կաթի քանակության համեմատ: Այնպես վոր վերջ ի վերջո գուք կաթի համար մասնակոր ձեռնարկողի տվածից վոչ թե պակաս կ'ստանաք, այլ շատ ավելի:

Այսպես ուրեմն յեկամուտն այստեղ յերկու մասի և բաժանվում, մեկն արտելի անդամն ստանում է ամեն շաբթաթ կաթի համար, մյուսը՝ տարվա վերջին: Այս մասերից վորն ավելի մեծ պետք է լինի: Վոմանք ասում են, թե ավելի լավ է ամեն շաբթաթ շատ ստանալ: իսկ մյուսները՝ թե ավելի լավ է տարվա վերջին մի անգամից մեծ զումար ստանալ վորով շատ ավելի բան կարելի է անել քան թե քիչ-քիչ ստանալով:

Մենք կարծում ենք, վոր ավելի լավ է շաբթական վճարել ավելի ցած գնով և տարվա վերջին արդեն տալ դրանից ստացած վաստակը: Այս յեղանակը հնարավորություն և տալիս

Ընկերությանը միջտ պատրաստի մեծ փող ունենալ ամեն տեսակ անակնկալ դեպքերի համար: Ընկերության արած ամեն տեսակ արտակարգ ծախքերը սովորաբար հոգացվում են այդ փողովը, իսկ յեթե ներիք չի լինում, շաբաթական վճարներից դուրս են գալիս վեղբոյին 1 կամ 2 կոտեկ և այսպիսով շատ շուտով խոշոր գումարներ են հավաքում:

Այս են յուղագործարանի գործունեության ընդհանուր հիմունքները:

Արևմտյան Յեկարոպայում կաթի գինը գորոշելն ու յեկամուսների ու ծախքերի բաշխումը յերեխն ավելի բարդ է լինում: Յուղագործարաններում իսկապես մեզ շահագրգոռողը կաթը չե, այլ յուղը: Բայց յեթե զանազան կովերի կաթը վերցնենք, կրտեսնենք, վոր նրանցից յուրաքանչյուրի կաթը տարբեր չափով և յուղալիք: Ռուսական կովի կաթի մեջ 4½% յուղ կա, իսկ Արևմտյան Յեկարոպայի կովերը տալիս են 3½% յուղ, թեպես նրանց կաթն ավելի ե, քան մեզանում: Յեթե արտելի անդամների կովերի կաթը տարբեր է յուր պարունակած յուղի կողմից, մենք պետք ե հաշվի յեղանակը փոխենք և նկատի առնենք վոչ թե կաթի քանակությունը, այլ նըս պարունակած յուղը:

Երբած կաթեցը ամեն մի ցյուղացուց մի փոքր վերցնում են փորձի համար և հետազոտում են յուղի քանակությունը, և ում կաթն ավելի յուղ ե պարունակում, նա վեղբոյին մի բան ավելի և ստանում, զորովճետն նրանց մի վերոր կաթն ավելի յուղ ե տալիս: Այս հաշվին ավելի ուղիղ ե, թեպես այստեղ մշտական հաշվառություն ե պետք, թե կոչի բնչքան յուղ ե տալիս մի վերոր կաթին:

Կաթի բնչ չափով յուղալի լինելը հաշվի առնելով՝ տերը կարող է ծառությամբ վորոշել, թե պահելու համար յուր կովերը վար ե ձեռնտու և վորը վոչ, և սակայ արդյունքով կովերը ծախելով կարող ե բացառապես ամենաշատ յեկամուտ տափող կովերի մի հոտ ունենալ:

Սակայն չի կարելի բավականանալ միայն կաթի յուղալի լինելը վորոշելով, այլ անհրաժեշտ ե վորոշել կովի տված կաթի և նրա կերած խոտի ընդհանուր քանակությունը:

Պատահում ե, վոր կովը շատ խոտ ե ուտում, բայց կաթը քիչ է կամ կաթը յուղալի չե: Յերբեմ կաթը կաթող ե շատ լի-

ներ բայց դարձյալ կովը ձեռնտու չլինի պահել, վորովհետև չափազանց շատ կեր ե ուղում: Պատահում ե և հակառակը. կովը քիչ է կաթ տալիս, բայց քիչ ել ուտում ե, ուրեմն ձեռնտու կով ե, վորովհետև յուր կերածի փոքր քանակության համեմատությամբ բավականաչափ կաթ ե տալիս:

Ներկայում Արևմտյան Յեկարոպայում, իսկ հեղափոխությունից հետո և մեզանում, կովերի շահագլետությունը վորոշելու համար գյուղացիական ընկերությունները հաճախ մի հատուկ պաշտոնյա յեն վարձում, վոր կոչում ե վերահսկիչ ընթերակա և վոր տերերի գրավոր տեղեկությունների ու ցուցմունքների հիման վրա հաշվում ե, թե ամեն մի կով բնչքան կաթ ու բնչքան յուղ ե տալիս և բնչքան կեր ե ուտում: Այս տեղեկությունների հիման վրա հաշվի ե անում, թե բնչքան յեկամուտ ե տալիս կովը իրեն կերցրած խոտի ամեն մի փթին: Յեթե կովը յուր կերած խոտի համեմատությամբ քիչ կաթ ե տալիս, այդպիսի կովը ձեռնտու չի ե պետք ե ծախսի: Այդպիսի կովերն անպետք համարելով և նրանց փոխարեն ավելի լավերը գնելով, հետզհետեւ կարելի ե այնպիսի հոտ կազմել, վորի ամեն մի կովը յուր կերած խոտի ամենաբարձր գինը կը հանե:

Այս միությունները, վոր հիշյալ հաշվինների համար վերահսկիչ ընթերականներ են պահում, կոչվում են վերահսկողության միություններ. վերջին ժամանակներն այդ միությունները շատ տարածվել են Արևմտյան Յեկարոպայում ու սկսում են յերկան դալ և միզանում:

Արևմտյան Յեկարոպայում բացի վերահսկողության միություններից կան և այլ անասնապահական ընկերություններ: Որինակ կարող ե լինել «ցլի միություն» կոչվածը:

Կովերից լավ հորթեր ունենալու համար պետք ե լավ ցեղի ցուլ ունենալ: Բայց այդպիսի ցուլը շատ թանգ ե և անհատների ույժից վեր ե այդպիսի ցուլ գնելը:

Մի ցուլը բավական ե 20—25 կովի, ուստի մի քանի ընտանիք կարող են ընկերություն կազմել միասին մի ազնվացեղ ցուլ գնել և նրանից լավ հորթեր ունենալ:

Այդպիսի միությունները շատ տարածված են Արևմտյան Յեկարոպայում և մեծ ոգուա են տալիս գյուղացիններին:

Անասնապահության համար մեծ նշանակություն ունեցող

այլ կոռպերատիվ ընկերություններից կանգ կ'առնենք անասունների ապահովագրության ընկերությունների վրա:

Մանը զյուղացիական տնտեսություններին պատահող ամենախոշոր աղետներից մեկը ձիու կամ կովի սատակելն է:

Մի տնտեսության համար, վորի տարեկան դրամական շրջանառությունը 150—200 ռուբլի է, վորից յերեք քառորդը գնում և ամենամասնետաձգելի կարիքների վրա, մի նոր կենդանի ձեռք բերելու համար անհրաժեշտ 50 ռուբլի գումարը չափազանց մեծ է, և այդպիսի գումար ծախսելը, մանավանդ այն ամբոններին յերբ մինչև բերքը դեռ շատ ժամանակ կա, հաճախ կարող է տնտեսական բարեկեցությունը կործանել:

Մինչև անգամ շատ հաճախ ձիուց զրկված տնտեսություններ չնարը չի գտնում նորը ձեռք բերելու և ձիազուրկ զյուղացու ծանր վիճակի մեջ և ընկնում, վորից դժվար է լինում դուրս գալ:

Յեկ պետք է կարծել վոր ամեն մի զյուղացի, վոր զրկվել ե անասնից և նորը դժվարանում ե գնել, անշափ գոն կը լիներ, յեթե նրան առաջարկելին նորը գնել՝ արժեքը հինգ-վեց տարվա ընթացքում մաս-մաս վճարելու պայմանով:

Կարծում ենք, վոր վոչ վոք չեր հրաժարվի այդպիսի պատեհությունից—դժբաղությունն այն և միայն վոր շուկայում մաս-մաս արժեքն ստանալու պայմանով ձի ու կով չեն ծախում, իսկ յեթե այդ յերեմն պատահում ել է, ծախողը ծանր տոկոս և պահանջում:

Այն ինչ զյուղացիներից իրենցից է կախված այնպես անել, վոր ստակած կենդանիների փոխարեն նորը գնելու փողը կարելի լինի մաս-մաս վճարել և վոչ թե յերկու, այլ ամբողջ քսան տարվա ընթացքում: Այդ հնարավորությունը ձեռք է բերվում անասուններն ապահովագրել տալով:

Վստահությամբ կարելի է ասել, վոր միայն մի ձի ունեցող տնտեսությունը 20 տարվա ընթացքում ձիու ստակելու մի անակնկալ դեպք կարող է ունենալ:

Այդ փորձանքը նախատեսելով զյուղացին յուր ձին ապահովագրել է տալիս այնպես, ինչպես վոր ապահովագրել է տալիս յուր տունը, և տարեկան վճարում ե դիցուք 2 ռուբլի: Չին ստակելու դեպքում նա ապահովագրող հիմնարկությունից կ'ստանա 40 ռուբլի և ստատակածի տեղը նորը կը գնի: Այսպիսով խոշոր

գումարի միանվագ ծանր վճարումը կարծես մասնատվում է 20 տարվա ընթացքումն անելու համար:

Այս միջոցի ձեռնուու լինելը ակներե և մանավանդ ուս զյուղացու տնտեսության համար, վորի գրամական շրջանառությունը տարվա մեջ միշտ չի հասնում 100 ռուբլու, և այս պատճառով միանվագ ու անակնկալ կերպով 40 ռուբլի վճարելը գրեթե միշտ կարող է քայլայել տնտեսության բարեկեցությունը:

Միակ հարցը, վոր ծագում է այս գեպքում, այդ այն է, թե ինչպես կարելի է մեղանում, Ռուսաստանում, անասուններն ապահովագրել տալ:

Մենք կարծում ենք, վոր այստեղ ևս զյուղացու տնտեսությանը մեծ ոգնություն կարող է հասցնել կոռպերացիան, վորի միութենական սկզբունքն աչքի ընկնող գեր և կատարել զյուղին արժան վարկ հայթայթելու, այլ և վաճառահանության և արտադրության միջոցներ գնելու կազմակերպության գործում:

Այս պատճառով կարծում ենք, իսկ Արևմտյան Յեկապայի փորձը մեղ վիրջնականապես համոզում է, վոր զյուղացիական տնտեսություններն իրենց անասուններն ապահովագրել տալու համար մեծ հաջողությամբ կարող են միանալ և առանձին ապահովագրական ընկերություն կազմել:

Յեկ հիրավի, ամեն զյուղացի գիտե, վոր 200 գլուխ անասուններից բաղկացած մի հոտի մեջ տարեկան ստակում է վոչ ավելի, քան 5—8 կով (ինքնըստինքյան հասկանալի է, վոր մենք ուշադրության չենք առնում համաճարակ հիվանդությունների տարիները), այսինքն՝ ամենաշատը 400 ռուբլի մի գումարի: Յեթե այս 400 ռուբլին բաժանենք 200 գլխի վրա, տարին ամեն մի գլխին կը ընկնի 2 ռուբ.

Այսպես ուրեմն յեթե այդ կովերի առանձին տերերը միանան, ապահովագրական ընկերություն կազմեն և ամեն մի գլխի համար 2 ռուբլի ապահովագին վճարեն, ընկերությունը կարող կը լինի նոր կով գնել այն զյուղացու համար, վորի կովս այն տարին կը ստատի:

Իսկ յեթե ստատակածների թիվը 8-ից պակաս լինի, հավաքված գումարից ավելացածը կարող է մի հատուկ պահեստի դրամագլուխ կազմել, վորից կը հոգացվեն այն բացառիկ տարիների ծախքերը, յերբ ստատակածների թիվը ավելի կը լինի:

Արևմտյան Յեղոպայում, մանավանդ Բելզիայում, այդպիսի ընկերությունները չափազանց տարածված են և շատ են նպաստում անասնապահության ձաղկելուն:

Նրանց մեծ մասը ընդարձակ ընկերական միություններ են կազմում, վորոնց նպատակն ե ոգնել այն ընկերություններին, վոր այս կամ այն տարին մեծ կորուստ կունենան անասունների մահվան հետևանքով:

Այս փոխազարձ ողնությունը ցույց է տրվում այն ընկերությունների հավելյալ մուտքերից, վոր այն տարին անասունների աննշան կորուստ են ունեցել:

Մեզանում, Ռուսաստանում, անասունների ապահովագրության գյուղացիական առաջին ընկերությունները հիմնվեցին պատերազմից առաջ Վլադիմիրի և Ռյազանի նահանգներում։ Պետք է հուսալ, վոր այսուհետեւ կոռպերատիվ ապահովագրության գործը մեզանում ել արագ քայլերով առաջ կր գնա։

Անասնապահական կոռպերացիան այսքան մանրամասն քըն-նության առնելով՝ մենք աշխատեցինք ցույց տալ, թե ինչպես կոռպերացիան հետզհետե, սկսելով վաճառահանության կազմակերպությունից, խորանում և արտադրության մեջ, քայլ առ քայլ գրավիելով նրա մի ճյուղը մյուսի յետեկից և համայնացման սկզբունքները մտցնելով ամեն տեղ, ուր արտադրության խոշոր ձևը բացարձակ առավելություններ ունի մանր ձևի հանդեպ, և դրանով հողագործության նոր ձևեր և ստեղծում:

Այդ գործունեության նշանակությունն այս գեպքում, ինչ-պես և գյուղատնտեսական կոռոպերացիայի բոլոր մյուս ճյուղերում, շատ ավելի մեծ ե, քան առանձին գյուղացիական տնտեսությունների վերաշինությունը։ Կոռոպերացիան, համայնացնելով գյուղական կապիտալը, արտադրության միջոցների կազմակերպությունը, վաճառահանությունը և քայլ առ քայլ միջամուխ լինելով նույնիսկ արտադրության կազմակերպության մեջ, դրանով իսկ կազմակերպում ե հողագործությունը խոշոր տնտեսության գերագույն ձևերով, ինչպես վոր տրեստներն ու ֆինանսական կապիտալը կազմակերպեցին կապիտալիստական յերկրների արդյունագործությունը։ Տարբերությունն այն է միայն, վոր մեր կոռոպերատիվ կապիտալիզմը հենց սկզբից հասարակական ձևեր և ունեցել և գտնվել ե աշխատավոր մասսաների վերահսկողության տակ։

q. L. H. B. VII.

ՎԵՐՋԱԲԱՆ

Կոռպերացիայի մեր այս համառուս դասընթացքը մոտենում է յուր վախճանին:

Մի փոքրիկ գրքույկի մեջ մենք, ՚ի հարկե, չենք կարող բավական չափով տալ կոռպերացիայի բոլոր տեսակների լիակատար նկարագրությունը, թե արդեն գոյություն ունեցողներինը և թե այն տեսակներինը, վոր կարող են գոյություն ունենալ:

Կարծում ենք, վոր հարկ ել չկա այդ անելու: Մենք հառաջ ըերինք այն սմենագլխավոր սկզբունքները, վորոնց վրա կոռացերատիվ աշխատավորները հիմնել են կոռպերացիան: Նկարագրեցինք և այն յեղանակներն ու կոռպերատիվ ձեռնարկությունները, վորոնցով գյուղացիները կարող են իրենց համար լավագույն ապագա պատրաստել: Ամեն վոք, դիտելով գյուղական կենդանի իրականությունը և ծանոթ լինելով կոռպերացիայի մեջ սկզբունքներին, հեշտությամբ կը տեսնե, թե վրատեղ և ինչպես կարող ե կոռպերացիան ողնություն հասցնել գյուղացւն:

Գյուղական կյանքում բազմաթիվ գեպեր կը լինեն, յերբ կոռպերացիան աշխատավոր մարդու հավատարիմ ոգնականը կարող է հանդիսանալ: Նույն հիմունքներով, վորով հիմնված են յուղագործական ընկերությունները, կարելի է կազմակերպել ամեն մի հողագործական մթերքի վերամշակությունը—բանջարեղեն չորացնելը, պահածոների պատրաստությունը, կարտոֆիլի մշակության գործարան և մինչև անդամ շաքարի գործարան:

Նույն կոռպերատիվ հիմունքներով, ինչպես և «ցուլի միությունը», կարող ենք ընկերություն կազմել միասին մեքենաներ բանեցնելու նպատակով:

Կոռպերացիայի մեծ սկզբունքները մեծ ոգնություն կարող են անել և տնայնազործական արհեստներում, և հողային գործերում, և հողի բարելավման ասպարիզում։ Մի խոսքով՝ կյանքի

գրեթե բոլոր կողմերի սպառարկությունը կարող է տեղի ունենալ կոռպերատիվ յեղանակով:

Յերբ տասնևեց տարի առաջ, 1908 թ. ոռւս կոռպերատորներն առաջին անգամ ժողովվեցին համառուսական կոռպերատիվ համագումարին մասնակցելու, մեր ոռւսական կոռպերատիվ շարժումը յուր առաջին վեճերոտ քայլերն եր անում, համեստությամբ ուսանում եր յուր արտասահմանյան ընկերներից—Անդ լիայի, ֆրանսիայի և Գերմանիայի կոռպերատորներից:

Հիմա ոռւսական կոռպերացիան յուր գործունեության թափովն առաջինն ե աշխարհում: Տասնյակ հազարավոր կոռպերատիվներ են ըրտակ խորհրդային Միության բոլոր անկյուններում, միացրել են իրենց մեջ միլիոնավոր անդամներ գյուղացիներից, բանվորներից ու քաղաքացիներից. շատ հարյուրավոր միություններ ի մի յեն շաղկապել կոռպերատիվները և մի բացառիկ զորություն են տվել նրան:

Առ 1-ն հունվարի 1924 թ. ՌՍՖԽՀ գյուղատնտեսական կոռպերացիայի մեջ կար 12.000 գյուղատնտեսական և վարկային ընկերություն, 1500 յուղագործական ընկերություն (արտել), 500 այլ տեսակ գյուղատնտեսական կոռպերատիվ և մոտ 11.000 գյուղատնտեսական համայնք, ասել ե թե՝ ընդամենը մոտավորապես 25.000 ամեն տեսակ կոռպերատիվ:

Կոռպերատիվների այս ամբողջ ցանցի մեջ իրեւ անդամ կար մոտ մեկ և կես միլիոն գյուղացիական տնտեսություն՝ առավելապես գյուղի միջին և չքափոր խավերից:

Դյուղացիական տնտեսությունների ընդհանուր թվի նկատմամբ կոռպերատիվ շարժման մեջ մտած տնտեսությունների թիվը դեռ մի աննշան քանակություն և կազմում, ընդամենը մոտ 12 տոկոս: Սակայն շատ վայրերում կոռպերատիվ շարժման հաջողությունը շատ ավելի մեծ ե, և մենք ունեինք այնպիսի տեղեր, ինչպես, որինակ, Տվերի նահանդի Կիմուիի շրջանն և կամ Կոստրոմայի նահանդի Շունգինի կարտոֆիլի շրջանը, ուր կոռպերացիայի մեջ և տեղական բնակչության մի ճնշող քանակություն:

Հազարավոր ցիրուցան կոռպերատիվներ միանում են խոշոր առևտրական գործառնությունների և տեխնիքական զեկավարության համար և կազմում են տեղական գավառական կամ շրջանային միություններ, վորոնց թիվը 300-ից ավելի ե:

Այս միություններն ել վորոշ գործառնությունների համար, մանավանդ յեթե իրենք հեռու յեն կենտրոնից, կազմում են հանգական կամ մինչեւ անգամ յերկրային միություններ:

Այս ամբողջ կոռպերատիվ կառուցվածքը պսակում ե ընդհանուր կենտրոնը—գյուղատնտեսական կոռպերացիայի համառուսական միությունը, կամ գյուղկոպմիությունը, և մի շարք հատուկ կենտրոններ, այն ե՝ Վոլգենտրոնը, կարտոֆիլմիությունը և նոր առանձնացած, բոլորովին յերիտասարդ և դեռ մեր նկարագրի մեջ չմտած Ցուղկենտրոնը:

Բացի այս հատկապես գյուղատնտեսական կենտրոններից՝ կազմակերպված և յերեք ոժանդակ կոռպերատիվ կենտրոն—Համկորանկ (Համառուսական կոռպերատիվ Բանկ), Ապմիություն (Ապահովագրության կոռպերատիվ Միություն) և Համառուսական կոռպերատիվ Հրատարակչություն: Այս կենտրոնները միացնում են վոչ միայն գյուղատնտեսական, այլ և սպառողական կոռպերացիան:

Այս ե բավական բարդ սքեման գյուղատնտեսական կոռպերացիայի ժամանակակից վիճակի և շինարարության, վոր վոչ այլ ինչ ե, բայց յեթե մեկակես միլիոն գյուղացիական տնտեսությունների տնտեսական կազմակերպության ձեր, վորոնք այդ կոռպերացիայի հիմքն են կազմում:

Այս բոլորը մի զարմանալի չտեսնված տնտեսական ույժ և ներկայացնում և պայծառ ապագա և խոստանում ոռւս գյուղացուն, յեթե... յեթե միայն ինքը գյուղացին չփոխի յուր իսկ ստեղծած կոռպերացիան, ինչպես Յեսավը յուր անդրանկությունը, հաճոյակատար խանութպանի և միջնորդ առևտրականի վոսպաթանի հետ:

Քո ապագան քո ձեռքին ե, ոռւս գյուղացի: Բացի կոռպերացիայի ճանապարհիցն այլ ճանապարհ չկա քեզ համար, վորը տաներ դեպի աշխատավորական կյանքի պայծառ յերջանկությունը: Իմացած լինիս, վոր այդ ճանապարհը միակ ճանապարհն ե: Այդ ճանապարհից շեղվելը դեպի կորուստ կը տանե:

Մեր գրքի առաջին գրուխներում մենք մատնացուց աղինք, վոր գյուղացու տնտեսությունը՝ զարգանալու և բարեկեցիկ վիճակ ձեռք բերելու համար, յուր հողագործությունն ու անասնապահությունը պիտի վերակազմի նոր հիմքերով:

Մենք տեսնում ենք հիմա, վոր այդ նոր հողագործությունը, նոր, կատարելագործված մեքենաները, ազնվացեղ անասունները, բարելավված սերմացուն, արժան վարկը և շահավետ վաճառքը մատչելի յեն աշխատավոր գյուղացուն միայն այն ժամանակ, յերբ նա միանում է այլ գյուղացիների հետ:

Միայն համայնացրած տնտեսության միութենական, կոոպերատիվ սկզբունքի վրա հենվելով կարող ե գյուղացությունը յուր դաշտերում ու գոմերում ոգտագործել ագրոնոմիական գիտության բոլոր նվաճումները, և այնտեղ, ուր այժմ մի հասկ ե բուսանում, իրոք յերկուաը բուսցներ, կարող ե յուր ուսերից թոթափել վաշխառուների և միջնորդ առևտրականների լուծը և հաստատուն քայլերով առաջ գնալ դեպի լավագույն ապագա:

Այդ լավագույն ապագան մեր առաջ պատկերանում է վորպես մեր հողագործության կատարյալ բարեփոխություն: Մեր որերումն արդեն ուրուագծված կոոպերատիվ ձեռնարկություններն, անտարակույս, ավելի ու ավելի պիտի զարգանան, գյուղատնտեսության նորանոր ձյուղեր գրավելով և համայնական կոոպերատիվ արտադրության գերազույն ձերբով կազմակերպելով: Հետզհետե այդ կոոպերատիվ ձեռնարկություններն այնպիսի զորությամբ պիտի զարգանան, վոր փոխանակ ոժանդակ ձեռնակություն լինելու՝ պիտի դառնան գյուղատնտեսական արտադրության կազմակերպության գլխավոր ձեզ, խոշոր արտադրության և մեքենայացման սկզբունքը ներմուծելով ամենուրեք, վորտեղ գրանք իրենց առավելությունները կարող են հայտնաբերել:

Այդ լինելուց հետո հանդես կը գա հողագործության մինչև որս, շտեսնված մի ձեւ, վոր հիմնված կը լինի համայնացման, կատարյալ տեխնիկայի և արտադրության գիտական կազմակերպության սկզբունքի վրա: Այդ ապագան՝ մեր գործունեության մեջ, այնտեղ ուր հարեանցի դիտողները միայն յուզ վաճառել և գութան գնել են տեսնում, մեզ տեսնել ե տալիս մի ապագա հսկայական սոցիալ-տնտեսական հեղաշրջում, վոր գյուղացուցրված, տարերային տնտեսությունը պիտի դարձնե մի ներդաշնակ տնտեսական ամբողջություն, հողագործությեան կազմակերպության մի նոր սիստեմ: Այդ ապագան ե, վոր մեզ միանդամայն համաձայնել ե տալիս Լենինի՝ մահիցն առաջ գրված հոդվածի այն մտքին, թե կոոպերացիայի զարգացումը շատ բաներում զուգագիպում և սոցիալիզմի զարգացմանը:

## ՑԱՆԿ

Գլուխ I.	Ի՞նչ է կոոպերացիան . . . . .	3
Գլուխ II.	Կոոպերատիվ շարժման պատմությունը . . . . .	16
Գլուխ III.	Գյուղական սպառողական ընկերություն . . . . .	33
Գլուխ IV.	Գյուղատնտեսական և վարկային ընկերություն . . . . .	49
Գլուխ V.	Գյուղատնտեսական մթերքների կոոպերատիվ վաճառահանությունը . . . . .	69
Գլուխ VI.	Յուղագործական արտելներ և այլ անասնապահական կոոպերատիվներ . . . . .	75
Գլուխ VII.	Վերջարան . . . . .	85



ՀՀ Ազգային գրադարան



NL0197797

3434